



**«Դաշտադեն ամրոցի մասնակի հիմնանորոգում,
թանգարանի հիմնում և հարակից տարածքի բարեկարգում»
նախագծի**

**ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ՆԱԽՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՅՏ**

Rev02

Մայիս 2023թ.

Մշակող՝

"ԷՅ ԹԻ ԷՄ ԷՍ Սոլյուշնս" ՍՊԸ



Հայաստան Հանրապետություն
Երևան, 0051
Գրիբոյեդովի 11-1
Հեռ. +37499 109495
info@atms.am
www.atms.am

Դաշտադեմ ամբողջի մասնակի հիմնանորոգում, թանգարանի հիմնում և հարակից տարածքի բարեկարգում		
Ամսաթիվ Մայիս 2023	ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՅՏ	Վարկած Rev02

**«Դաշտադեմ ամբողջի մասնակի հիմնանորոգում,
թանգարանի հիմնում և հարակից տարածքի բարեկարգում»
նախագծի**

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՅՏ

Rev02

Մշակող՝

"ԷՅ ԹԻ ԷՄ ԷՍ Սոլյուշնս" ՍՊԸ



Ա. Տեր-Թորոսյան
Տնօրեն



Մայիս 2023թ.

Փաստաթղթի մշակումը և հրապարակումը

Վարկած	Մշակված է	Ստուգված է	Ամսաթիվը	Նկարագրությունը
Rev01	Ա. Տեր-Թորոսյան Ս. Գյուլջինյան Գ. Սահակյան	Ա. Տեր-Թորոսյան	16.01.2023	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման նախնական հայտ
Rev02	Ա. Տեր-Թորոսյան Գ. Սահակյան	Ա. Տեր-Թորոսյան	30.05.2023	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման նախնական հայտի վերանայված տարբերակ

Դաշտադեմ ամրոցի մասնակի հիմնանորոգում, թանգարանի հիմնում և հարակից տարածքի բարեկարգում		
Ամսաթիվ Մայիս 2023	ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱՉԴԵՑՈՒԹՅԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՅՏ	Վարկած Rev02

Բովանդակություն

1	Ընդհանուր տեղեկություններ	5
2	Հապավումներ	5
3	Նախատեսվող գործունեության նպատակը և հիմնավորումը	6
4	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման նորմատիվաիրավական շրջանակները	7
5	Նախատեսվող գործունեության համառոտ նկարագիրը և տեխնիկական բնութագիրը	10
5.1	Ապամոնտաժման և կառուցապատման ցուցանիշները	10
5.2	Դաշտադեմ ամրոցի տեղադիրքը և նկարագիրը	11
5.3	Դաշտադեմ ամրոցի բնութագիրը	13
5.4	Իրականացված պեղումներ	19
5.5	Պատմական ակնարկ	19
5.4	Թույլտվություններ և այլ համաձայնեցումներ	21
5.5	Նախատեսվող աշխատանքների փուլայնությունը	21
5.6	Նախապատրաստական աշխատանքներ և շին. հրապարակի կազմակերպում	22
5.7	Ապամոնտաժման ենթակա կառույցները	23
5.8	Կառուցման աշխատանքներ	25
5.8.1	Ենթակառուցվածքների իրականացում	27
5.9	Բնառեսուրսների և շինարարական նյութերի ծախսը	29
5.10	Հողային աշխատանքներ	35
5.11	Հողի բերրի շերտի հեռացումը և ժամանակավոր պահումը	37
5.12	Բարեկարգման աշխատանքներ	37
5.13	Վերականգնման, վերակառուցման և ամրակայման աշխատանքներ	38
5.14	Ժամանակացույցը	38
5.15	Օգտագործվող մեխանիզմները և տեխնիկան	39
5.16	Աշխատուժը	39
5.17	Ջրօգտագործումը և ջրահեռացումը	39
5.18	Ժամանակավոր պաշտպանական կառույց	41
5.19	Աշխատանքի անվտանգությունը	41
6	Տարածաշրջանի շրջակա միջավայրի նկարագիրը	42
6.1	Տարածքի ֆիզիկաաշխարհագրական դիրքը	42
6.2	Գրունտների հատկանիշները	42
6.3	Սեյսմատեկտոնիկ պայմանները	43
6.4	Տարածաշրջանի երկրաբանությունը և ռելիեֆը	44
6.5	Մակերևութային ջրերը	45
6.6	Կլիման և օդերևութաբանական պայմանները	45

Դաշտադեմ ամբոցի մասնակի հիմնանորոգում, թանգարանի հիմնում և հարակից տարածքի բարեկարգում		
Ամսաթիվ Մայիս 2023	ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱՉԴԵՑՈՒԹՅԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՅՏ	Վարկած Rev02

6.6.1	Ջերմաստիճանը	45
6.6.2	Հարաբերական խոնավությունը.....	46
6.6.3	Մթնոլորտային տեղումները	46
6.6.4	Քամի	47
6.7	Մթնոլորտային օդի աղտոտվածությունը	48
6.8	Բուսական և կենդանական աշխարհը	49
6.8.1	Բուսական աշխարհը	49
6.8.2	Կենդանական աշխարհը	50
6.9	Հատուկ պահպանվող տարածքներ	52
6.10	Նախատեսվող գործունեության տարածաշրջանի սոցիալ-տնտեսական վիճակը.....	52
6.11	Ազդակիր ենթակառուցվածքներ.....	53
6.12	Պատմամշակութային և բնության հուշարձանները.....	54
7	Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման արդյունքները.....	55
7.1	Մթնոլորտային օդի աղտոտումը.....	55
7.2	Ազդեցություն ջրային ռեսուրսների վրա.....	56
7.3	Ազդեցություն հողային ռեսուրսների վրա	56
7.4	Թափոնների առաջացումը և կառավարումը	57
7.5	Աղմուկի և թրթռման ազդեցությունը.....	58
7.6	Ազդեցությունը կենսաբազմազանության վրա.....	58
7.7	Ազդեցությունը երթևեկության հոսքի վրա.....	58
7.8	Ազդեցությունը հարակից բնակավայրերի, օբյեկտների և ենթակառուցվածքների վրա.....	59
7.9	Սոցիալ-տնտեսական ազդեցությունը	59
7.10	Ազդեցությունը Դաշտադեմ ամբոցի վրա	59
8	Բնապահպանական և աշխատանքի անվտանգության ազդեցությունների կառավարում և մշտադիտարկում	60
	ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐԻ ՄԱՍ	64

Դաշտադեմ ամբողջի մասնակի հիմնանորոգում, թանգարանի հիմնում և հարակից տարածքի բարեկարգում		
Ամսաթիվ Մայիս 2023	ԾՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՅՏ	Վարկած Rev02

1 Ընդհանուր տեղեկություններ

- | | | |
|-----|---|--|
| 1.1 | Ձեռնարկող՝ | Հայաստանի Տարածքային Չարգացման Հիմնադրամ (այսուհետ՝ ՀՏՀ) |
| 1.2 | Պատվիրատու՝ | ՀՏՀ |
| 1.3 | Նախագծող՝ | Ճարտարապետության և Շինարարության Հայաստանի Ազգային Համալսարան |
| 1.4 | Նախագծողի կոնտակտային տվյալներ՝ | |
| | - Հասցե | ՀՀ, ք. Երևան, Տեղյան փող. 105 |
| | - Հեռախոս | +374 10 58-72-84, +374 10 54-74-25 |
| | - Էլ. հասցե | info@nuaca.am |
| 1.5 | Նախատեսվող գործունեության վարչական սահմանները | ՀՀ, Արագածոտնի մարզ, Թալին համայնքի Դաշտադեմ բնակավայր (գյուղ) |
| 1.6 | Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական հայտի մշակող՝ | «ԷՅ ԹԻ ԷՄ ԷՍ Սոլյուշնս» ՍՊԸ |
| | - Հասցե | ՀՀ, Երևան, Գրիբոյեդովի 11-1 |
| | - Հեռախոս | +37491 497128, +37499 109495 |
| | - Էլ. հասցե | info@atms.am |
| | - Կայք | www.atms.am |

2 Հապավումներ

ԲՊՄՄ	- Բնության Պահպանության Միջազգային Միության
ԳԱԱ	- Գիտությունների ազգային ակադեմիա
ՀՀ	- Հայաստանի Հանրապետություն
ՀՏՀ	- Հայաստանի Տարածքային Չարգացման Հիմնադրամ
ՍՊԸ	- Սահմանափակ Պատասխանատվությամբ Ընկերություն
ՍԹԿ	- Սահմանային թույլատրելի կոնցենտրացիա
ՀՀԾՆ	- Հայաստանի Հանրապետություն շինարարության նորմեր
ԾՄԱԳ	- Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատում
ՊՈԱԿ	- Պետական Ոչ-առևտրային Կազմակերպություն
ՏՏԵԶ	- Տեղական Տնտեսության և Ենթակառուցվածքի Չարգացում
ծ.մ.	- ծովի մակերևույթից
ՊՄ	- Պինդ մասնիկներ
ՑՕՄ	- Ցնդող օրգանական միացություններ

Դաշտադեմ ամրոցի մասնակի հիմնանորոգում, թանգարանի հիմնում և հարակից տարածքի բարեկարգում		
Ամսաթիվ Մայիս 2023	ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱՉԴԵՑՈՒԹՅԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՅՏ	Վարկած Rev02

3 Նախատեսվող գործունեության նպատակը և հիմնավորումը

Հայաստանի Հանրապետությունը Վերակառուցման և Չարգացման Միջազգային Բանկից ստացել է ֆինանսավորում՝ "Տեղական Տնտեսության և Ենթակառուցվածքի Չարգացման (այսուհետ՝ ՏՏԵՉ) Ծրագրի" իրականացման նպատակով: ՏՏԵՉ ծրագրի նպատակն է՝ զբոսաշրջային ոլորտի ենթակառուցվածքի, ծառայությունների և ինստիտուցիոնալ կարողությունների զարգացումը և տեղական տնտեսությունում զբոսաշրջային ոլորտից ստացվող եկամուտների ավելացումը: ՏՏԵՉ ծրագրի բաղադրիչներից մեկը վերաբերվում է հանրային ենթակառուցվածքի տրամադրմանը՝ մասնավոր ներդրումներ ներգրավելու նպատակով:

ՏՏԵՉ ծրագրի շրջանակներում նախատեսվում է իրականացնել Դաշտադեմ ամրոցի մասնակի հիմնանորոգման, թանգարանի հիմնման և հարակից տարածքի բարեկարգման նախագիծը (այսուհետ՝ Նախագիծ)՝ նպաստելով Դաշտադեմ ամրոցի պահպանման մակարդակի բարձրացմանը (դղակի, միջնաբերդի, միջնաբերդը շրջապատող առաջին և երկրորդ պարսպապատերի և այլ կառույցների վնասված հատվածների վերականգնում, ամրակայում, արտաքին լուսավորության կազմակերպում), բարեկարգ հանրային ենթակառուցվածքի ստեղծմանը (ավտոկայանատեղի, գուգարան, բարեկարգ քայլուղիներ, հուշանվերների վաճառք և այլն), տարածաշրջանում զբոսաշրջության նոր ուղղության զարգացմանը:

Նախագծի իրագործման շրջանակներում ուսումնասիրվում է ամրոցի ներկայիս իրավիճակը, վեր են հանվում ամրոցի համար առաջնային հանդիսացող հիմնախնդիրները, տրվում են ամրոցի և հարակից բաղադրիչների տեխնիկական և տեխնոլոգիական լուծումներ, որոնք միտված են Դաշտադեմ ամրոցի և շրջակա ենթակառուցվածքի բարեկարգմանը և զբոսաշրջության տեսանկյունից գրավչության բարձրացմանը:

2014թ.-ի հունիսի 21-ին ընդունված "Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին" ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետի 7-րդ ենթակետի համաձայն, քաղաքաշինության բնագավառում՝ 1500 մ²-ից ավելի կառուցապատման մակերեսով քաղաքաշինական օբյեկտները ենթակա են շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության՝ Գ կատեգորիայի նախատեսվող գործունեության տեսակների համար սահմանված ընթացակարգով:

Հանրային ծանուցումը և քննարկումները

Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման փուլի շրջանակներում, 2022 թվականի նոյեմբերի 30-ին Թալին համայնքի Դաշտադեմ բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրում անցկացվել է «Դաշտադեմ ամրոցի մասնակի հիմնանորոգում, թանգարանի հիմնում և հուշարձանի հարակից տարածքի բարեկարգում» նախագծի վերաբերյալ հանրային քննարկում (1-ին հանրային քննարկում), որի ընթացքում ներկայացվել են Դաշտադեմ ամրոցի մասնակի հիմնանորոգման, թանգարանի հիմնման, հուշարձանի հարակից տարածքների բարեկարգման, ինչպես նաև վերջինիս շրջակա միջավայրի վրա ազդեցության հետ կապված հարցեր: Արդյունքում հանրային քննարկման հիման վրա Թալինի համայնքապետարանի կողմից տրվել է նախնական համաձայնություն՝ նախատեսվող գործունեության իրականացման վերաբերյալ, որը ներկայացված է սույն Հայտի **Հավելված 1**-ում: Հանրային ծանուցումը իրականացվել է ՀՀ կառավարության 19.11.2014թ.-ի №1325-Ն որոշման հավելվածով սահմանված կարգի համաձայն, հրապարակվել է «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթի 17.11.2022թ.-ի թիվ 198 համարում:

Դաշտադեմ ամբողջի մասնակի հիմնանորոգում, թանգարանի հիմնում և հարակից տարածքի բարեկարգում		
Ամսաթիվ Մայիս 2023	ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱՉԴԵՑՈՒԹՅԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՅՏ	Վարկած Rev02

4 Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման նորմատիվաիրավական շրջանակները

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության հիմնական պահանջները սահմանված են 21.06.2014 թ.-ին ընդունված "Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին" ՀՀ օրենքով: Այն կարգավորում է շրջակա միջավայրի վրա հիմնադրույթային փաստաթղթի և նախատեսվող գործունեության ազդեցության փորձաքննության իրավական, տնտեսական և կազմակերպական հիմունքները:

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին ՀՀ օրենք (2014թ.)

Օրենքը նկարագրում է Հայաստանում տարաբնույթ ծրագրերի և գործունեությունների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման (այսուհետ՝ ՇՄԱԳ) և բնապահպանական փորձաքննության գործընթացները: Օրենքում օգտագործվող հիմնական սահմանումները բերված են հոդված 4-ում: Օրենքի հիմնական առարկաներն են՝

- **Հիմնադրույթային փաստաթուղթը՝** շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցություն ունեցող փաստաթղթի (քաղաքականություն, ռազմավարություն, հայեցակարգ, ուրվագիծ, բնական ռեսուրսների օգտագործման սխեմա, ծրագիր, հատակագիծ, քաղաքաշինական ծրագրային փաստաթուղթ) նախագիծ:
- **Նախատեսվող գործունեությունը՝** շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցություն ունեցող ուսումնասիրություն, արտադրություն, կառուցում, շահագործում, վերակառուցում, ընդլայնում, տեխնիկական և տեխնոլոգիական վերագինում, վերապրոֆիլավորում, կոնսերվացում, տեղափոխում, լուծարում, փակում:

Օրենքի հոդված 6-ը սահմանում է գնահատման և փորձաքննության նպատակն ու խնդիրները, իսկ հոդված 7-ը թվարկում է ՇՄԱԳ և փորձաքննության գործընթացում դիտարկվող շրջակա միջավայրի օբյեկտները և բնութագրերը: Օրենքի գլուխ 2-ը (8-13 հոդվածները) նկարագրում են ՇՄԱԳ և փորձաքննության գործընթացի հիմնական մասնակիցների լիազորությունները:

Հոդված 14-ը թվարկում է ՇՄԱԳ և փորձաքննության ենթակա հիմնադրույթային փաստաթղթերի բնագավառները և նախատեսվող գործունեությունների տեսակները, որոնք ըստ բնագավառների դասակարգվում են Ա, Բ և Գ կատեգորիայի ըստ շրջակա միջավայրի վրա նվազող աստիճանի:

Օրենքի հոդված 16-ի համաձայն նախատեսվող գործունեությունների փորձաքննությունն իրականացվում է երկու փուլով՝ նախնական և հիմնական: Նախնական փուլում կազմվում է նախատեսվող գործունեության գնահատման նախնական հայտը, որի փորձաքննության հիման վրա (Ա կամ Բ կատեգորիայի գործունեության դեպքում) կազմվում է տեխնիկական առաջադրանք, ինչը հիմք է ծառայում ՇՄԱԳ հաշվետվության մշակման համար: Նախնական փորձաքննության տևողությունն է 30 աշխատանքային օր: Եթե փորձաքննության ընթացքում որոշվում է, որ նախատեսվող գործունեությունը հանդիսանում է Գ կատեգորիայի, ապա ձեռնարկողին նախնական գնահատման հայտի հիման վրա տրվում է փորձաքննության եզրակացություն:

Հոդված 18-ը սահմանում է հիմնադրույթային փաստաթղթի ազդեցության ռազմավարական գնահատման հաշվետվության և նախատեսվող գործունեության ՇՄԱԳ հաշվետվության բովանդակությունը ներկայացվող պահանջները: Հոդված 19-ը նկարագրում է փորձաքննության հիմնական փուլը: Սույն հոդվածի 4-րդ կետի համաձայն փորձաքննության հիմնական փուլի ժամկետները

Դաշտադեմ ամբոցի մասնակի հիմնանորոգում, թանգարանի հիմնում և հարակից տարածքի բարեկարգում		
Ամսաթիվ Մայիս 2023	ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱՉԴԵՑՈՒԹՅԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՅՏ	Վարկած Rev02

չպետք է գերազանցեն հիմնադրության փաստաթղթի և նախատեսվող գործունեության Ա կատեգորիայի դիպքում մինչև 60 աշխատանքային օր, իսկ նախատեսվող գործունեության Բ կատեգորիայի դիպքում մինչև 40 աշխատանքային օր:

Օրենքի հոդված 26-ը սահմանում է ՇՄԱԳ և փորձաքննության ընթացքում հանրային ծանուցմանը և քննարկումների իրականացմանը ներկայացվող պահանջները: Հանրության ծանուցումը իրականացվում է մինչ լուծումները կամ քննարկումները առնվազն 7 աշխատանքային օր առաջ զանգվածային լրատվամիջոցներով, հայտարարություններով և էլեկտրոնային փոստով: Հանրային ծանուցումը և քննարկումները իրականացվում են 19.11.2014 թ.-ի ՀՀ կառավարության **Հանրային ծանուցման և քննարկումների իրականացման կարգը սահմանելու մասին** №1325-Ն որոշմամբ:

Մթնոլորտային օդի պահպանության մասին ՀՀ օրենքը (1994թ.) կարգավորում է մթնոլորտային օդի մաքրության ապահովման, մթնոլորտային օդի վրա վնասակար ներգործությունների նվազեցման ու կանխման բնագավառում հասարակական հարաբերությունների հարցերը: Մթնոլորտ վնասակար նյութերի արտանետումների թույլտվությունների ստացման կարգը և է մթնոլորտային օդի աղտոտման սահմանային թույլատրելի կոնցենտրացիաները սահմանվում են ՀՀ կառավարության **Մթնոլորտային օդի վրա վնասակար ներգործությունների պետական հաշվառման կարգը հաստատելու մասին** №259, **Մթնոլորտային օդն աղտոտող նյութերի սահմանային թույլատրելի արտանետումների նորմատիվների մշակման ու հաստատման կարգը սահմանելու և ՀՀ կառավարության 1999 թվականի մարտի 30-ի №192 և 2008 թվականի օգոստոսի 21-ի №953-Ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին** №1673-Ն և **Բնակավայրերում մթնոլորտային օդն աղտոտող նյութերի սահմանային թույլատրելի խտությունների (կոնցենտրացիաների - ՍԹԿ) նորմատիվները հաստատելու մասին** №160-Ն որոշումներով:

Թափոնների մասին ՀՀ օրենքը (2004թ.) սահմանում է թափոնների հավաքման, փոխադրման, պահման, մշակման, օգտահանման, ինչպես նաև բնական ռեսուրսների, մարդու կյանքի և առողջության վրա թափոններից առաջացող բացասական ազդեցությունների կանխարգելման համար իրավական և տնտեսական հիմքերը: Օրենքի 3-րդ գլուխը նկարագրում է թափոնների նորմավորման, հաշվառման, անձնագրավորման ընթացակարգերը: Օրենքում ներկայացված են նաև ոլորտի պետական լիազորված մարմինների իրավասությունները, ինչպես նաև թափոնների գործածության ոլորտում ֆիզիկական և իրավաբանական անձանց իրավունքներն ու պարտականությունները: Օրենքի կիրարկումն ապահովվում է մի շարք կառավարության որոշումների և բնապահպանության նախարարի հրամաններով: Մասնավորապես, արտադրության և սպառման թափոնների դասակարգումը ըստ վտանգավորության դասի իրականացվում է 2006թ.-ի հոկտեմբերի 26-ի ՀՀ **տարածքում գոյացող արտադրության և սպառման թափոնների ցանկը հաստատելու մասին** ՀՀ բնապահպանության նախարարի №342-Ն հրամանի համաձայն:

Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին ՀՀ օրենքը (2006թ.) կարգավորում է ՀՀ բնության հատուկ պահպանվող տարածքների՝ որպես բնապահպանական, տնտեսական, սոցիալական, գիտական, կրթական, պատմամշակութային, գեղագիտական, առողջապահական, ռեկրեացիոն արժեք ներկայացնող էկոհամակարգերի, բնության համալիրների ու առանձին օբյեկտների բնականոն զարգացման, վերականգնման, պահպանության, վերարտադրության և օգտագործման պետական քաղաքականության իրավական հիմունքները: Օրենքը դասակարգում է ՀՀ-ում հատուկ պահպանվող տարածքները. ա) ըստ նշանակության (միջազգային, հանրապետական և տեղական բնության հատուկ պահպանվող տարածքների) և բ) ըստ կատեգորիայի (պետական արգելոցի, ազգային պարկի, պետական արգելավայրի և բնության հուշարձանի):

Դաշտադեմ ամբոցի մասնակի հիմնանորոգում, թանգարանի հիմնում և հարակից տարածքի բարեկարգում		
Ամսաթիվ Մայիս 2023	ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱՉԴԵՑՈՒԹՅԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՅՏ	Վարկած Rev02

Օրենքը նկարագրում է բնության հատուկ պահպանվող տարածքների պահպանության ռեժիմները, պահպանության իրականացումը, օգտագործումը և վերահսկողությունը, սահմանում է պետական մարմինների իրավասությունները, ինչպես նաև բնության հատուկ պահպանվող տարածքներն օգտագործողների իրավունքներն ու պարտականությունները:

ՀՀ Հողային օրենսգիրքը (2001թ.) սահմանում է հողային հարաբերությունների պետական կարգավորման կատարելագործման, հողի տնտեսավարման տարբեր կազմակերպական-իրավական ձևերի զարգացման, հողերի բերրիության, հողօգտագործման արդյունավետության բարձրացման, մարդկանց կյանքի ու առողջության համար բարենպաստ շրջակա միջավայրի պահպանման և բարելավման, հողի նկատմամբ իրավունքների պաշտպանության իրավական հիմքերը: Համաձայն Օրենսգրքի ՀՀ հողային ֆոնդը դասակարգվում է ըստ հետևյալ կատեգորիաների. 1) գյուղատնտեսական նշանակության, 2) բնակավայրերի, 3) արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության, 4) էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների, 5) հատուկ պահպանվող տարածքների, 6) հատուկ նշանակության, 7) անտառային, 8) ջրային և 9) պահուստային հողերի:

ՀՀ ջրային օրենսգրքի (2002թ.) հիմնական նպատակն է սահմանել երկրի ջրային ռեսուրսների պաշտպանության իրավական հիմքերը, ջրային ռեսուրսների արդյունավետ կառավարման միջոցով բավարարել քաղաքացիների և տնտեսական ոլորտների ջրային կարիքները և պահպանել ջրային ռեսուրսները ապագա սերունդների համար: Օրենսգիրքը կարգավորվում են ջրային ռեսուրսների և ջրային համակարգերի, այդ թվում՝ ջրամատակարարման, ջրահեռացման համակարգերի տնօրինման, տիրապետման, օգտագործման և պահպանման ոլորտում ծագող հարաբերությունները:

Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին ՀՀ օրենքը (1998թ.) սահմանում է հուշարձանների պաշտպանության և օգտագործման իրավական և քաղաքական հիմքերը, ինչպես նաև կարգավորում է պաշտպանության և օգտագործման գործողությունների հետ կապված հարաբերությունները: Օրենքի 15-րդ հոդվածը, ի թիվս այլ խնդիրների, նկարագրում է հուշարձանների հայտնաբերման և պետական գրանցման, դրանց շրջակա պահպանության գոտիների գնահատման, պատմամշակութային արգելոցների ստեղծման կարգը:

Սեյսմիկ պաշտպանության մասին ՀՀ օրենքը (2002թ.) սահմանում է սեյսմիկ անվտանգության ապահովման իրավական հիմքերը, նպատակը և սկզբունքները, խնդիրները, միջոցառումները, համակարգը, կազմակերպման հիմնադրույթները և կարգավորում է դրա հետ կապված հարաբերությունները, ինչպես նաև արտակարգ իրավիճակներից բնակչության և տարածքների պաշտպանության գործունեության ոլորտներում՝ պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների, ՀՀ քաղաքացիների, քաղաքացիություն չունեցող անձանց և օտարերկրյա քաղաքացիների իրավունքներն ու պարտականությունները, օրենսդրության նորմերի և պահանջների կատարման նկատմամբ հսկողության և վերահսկողության մարմինները:

Քուսական աշխարհի մասին (1999թ.) և **Կենդանական աշխարհի մասին** (2000թ.) ՀՀ օրենքները սահմանում են ՀՀ բույսերի և կենդանիների պահպանության, պաշտպանության, օգտագործման, վերարտադրության ու կառավարման, ինչպես նաև կենսաբազմազանության վրա մարդկանց գործունեության ազդեցությունը կարգավորելու քաղաքականությունը: Այս օրենքների հիմնանպատակը բուսական/կենդանական աշխարհի և կենսաբազմազանության պահպանության ապահովումն է: Այն նաև սահմանում է տեսակների՝ մասնավորապես էնդեմիկ և վտանգված, մոնիտորինգի և գնահատման ընթացակարգերը:

Դաշտադեմ ամրոցի մասնակի հիմնանորոգում, թանգարանի հիմնում և հարակից տարածքի բարեկարգում		
Ամսաթիվ Մայիս 2023	ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱՉԴԵՑՈՒԹՅԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՅՏ	Վարկած Rev02

ՀՀ կենդանիների Կարմիր գիրքը հաստատելու մասին №71-Ն և **ՀՀ բույսերի Կարմիր գիրքը հաստատելու մասին** №72-Ն ՀՀ կառավարության 29.01.2010թ.-ի որոշումները սահմանում են ՀՀ բուսական և կենդանական աշխարհների հազվագյուտ, անհետացած ու անհետացող, կրճատվող, ոնորոշ տեսակների կենսաբանությունը, թվաքանակը, տարածման վայրերը և ձևաբանությունը:

ՀՀ բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման կարգը սահմանելու մասին ՀՀ կառավարության 31.07.2014թ. №781-Ն որոշումը սահմանում է Հայաստանի Հանրապետության բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման ընթացակարգը:

Հողի բերրի շերտի օգտագործման կարգը հաստատելու, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի սեպտեմբերի 19-ի №1622-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու և 2001 թվականի ապրիլի 12-ի №286-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին №1396-Ն որոշումը սահմանում է Հայաստանի Հանրապետության տարածքում հողի բերրի շերտի (այսուհետ՝ բերրի շերտ) նպատակային և արդյունավետ օգտագործման հետ կապված հարաբերությունները՝ հանումը, տեղափոխումը, պահպանումը և հաշվառումը:

Հողի բերրի շերտի հանման նորմերի որոշմանը և հանված բերրի շերտի պահպանմանն ու օգտագործմանը ներկայացվող պահանջները սահմանելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թ.-ի հուլիսի 20-ի №1026-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին №1404-Ն ՀՀ կառավարության որոշումը սահմանում է հողի բերրի շերտի հանման նորմերը և հանված բերրի շերտի պահպանմանն ու արդյունավետ օգտագործմանը ներկայացվող պահանջները՝ հողային աշխատանքներ կատարելիս հողերի պահպանությունն ապահովելու, ցածր արդյունավետություն ունեցող հանդակների բերրիությունը բարձրացնելու և ռեկուլտիվացվող հողերի բերրիությունը վերականգնելու համար:

Հայաստանի Հանրապետության բնության հուշարձանների ցանկը հաստատելու մասին №967-Ն ՀՀ կառավարության որոշումը սահմանում է ՀՀ երկրաբանական, ջրաերկրաբանական, ջրագրական, բնապատմական և կենսաբանական հուշարձանների ցանկը:

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցուցակը հաստատելու մասին №628-Ն որոշման մեջ ներկայացված է ՀՀ Արագածոտնի մարզի պատմամշակութային հուշարձանների ցանկը:

5 Նախատեսվող գործունեության համառոտ նկարագիրը և տեխնիկական բնութագիրը

5.1 Ապամոնտաժման և կառուցապատման ցուցանիշները

Դաշտադեմ ամրոցի տարածքում և դրա հարևանությամբ նախատեսվում է իրականացնել հետևյալ աշխատանքները՝

Ապամոնտաժման աշխատանքներ (մանրամասն **Բաժին 5.7**-ում)՝

- Կիսաքանդ կառույց - 161.99 մ²,
- «Խանի պալատ» - 288 մ²:


Կառուցման աշխատանքներ (մանրամասն **Բաժին 5.8**-ում)՝

Դաշտադեն ամրոցի մասնակի հիմնանորոգում, թանգարանի հիմնում և հարակից տարածքի բարեկարգում		
Ամսաթիվ Մայիս 2023	ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱՉԴԵՑՈՒԹՅԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՅՏ	Վարկած Rev02

- Թանգարան- 1072 մ²,
- Քայլուղի - 664 մ²,
- Ներքին քայլուղի - 1360 մ²,
- Սեպտիկ հոր - 60 մ²,
- Ավտոկայանատեղի - 400մ²,
- Կոյուղագիծ - 115մ²,
- Ջրագիծ - 50մ²:

Ընդհանուր առմամբ իրականացվելու է 449.99մ² մակերեսով ապամոնտաժման և 3721մ² մակերեսով կառուցման աշխատանքներ:

Դաշտադեն ամրոցի տարածքը ներկայացված է ստորև **Նկար 5.1**-ում՝ դեղին սահմանագծով: Ամրոցի տարածքում բուսականությունը աղքատ է՝ ծառատեսակներ չկան: Տարածքը չորային է:



Նկար 5.1. Դաշտադեն ամրոցի տարածքը

5.2 Դաշտադեն ամրոցի տեղադիրքը և նկարագիրը

ՀՀ կադաստրի կոմիտեի տրամադրած ՀՀ Արագածոտնի մարզի Թալին համայնքի Դաշտադեն բնակավայրի «Ամրոց» պատմության և մշակույթի անշարժ հուշարձանի տարածքում հատուկ պահպանվող տարածքների պատմական և մշակութային հոգերի նկատմամբ գրանցված անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականների պատճենները ներկայացված են **Հավելված 16**-ում:

Դաշտադեն ամրոցը գտնվում է Արագածոտնի մարզի, Թալին բազմաբնակավայր համայնքի Դաշտադեն գյուղի հարավային եզրին (**Նկար 5.2**): Նախատեսվող գործունեության տարածքի

Դաշտադեն ամրոցի մասնակի հիմնանորոգում, թանգարանի հիմնում և հարակից տարածքի բարեկարգում		
Ամսաթիվ Մայիս 2023	ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱՉԴԵՑՈՒԹՅԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՅՏ	Վարկած Rev02

հյուսիսային մասը հարում է գյուղի բնակելի տներին, իսկ 15 մ հեռավորության վրա՝ ամրոցից դեպի արևմուտք, անցնում է Մ-9 «Մ1-Թալին-Քարակերտ-Թուրքիայի սահման» միջպետական նշանակության ավտոճանապարհը (տես իրադրային հատակագիծը՝ **Հավելված 10**): Նախատեսվող գործունեության վայրի WGS 84 կոորդինատային տվյալները ներկայացված են **Հավելված 14-ում**:



Նկար 5.2. Նախատեսվող գործունեության տեղադիրքը Դաշտադեն գյուղի վարչական սահմաններում

Դաշտադեն ամրոցի ուսումնասիրության պատմությունը սերտորեն կապված է Հայաստանում ամրաշինական կառույցների ուսումնասիրման պատմության հետ: Ամրոցն իր բնույթով եզակի և հետաքրքիր է, ունի պահպանման, ամրակայման և մասնակի վերականգնման կարիք: Դաշտադենի ամրոցի թանգարանացումը կարող է դիտարկվել, որպես ժառանգության արդիականացում, մշակութային և բնական ժառանգության (հուշարձանների) պահպանման ու ներգրավվածության կազմակերպումը ժամանակակից մշակույթի մեջ՝ ակտիվացնելով այդ օբյեկտների սոցիալ-մշակութային դերը և դրանց մեկնաբանումը:

Ամրոցը 2006-2008 թվականներին ենթարկվել է մասնակի վերանորոգման: Բացի այդ, ամրոցի վերականգնման աշխատանքներին զուգահեռ, ՀՀ կառավարության 2006թ.-ի ապրիլի 27-ի № 526-Ա որոշմամբ, ՀՀ մշակույթի նախարարությունը գնել է ամրոցի տարածքում գտնվող 8 սեփականատերերից 6-ի անշարժ գույքը, որոնք խոչընդոտում էին ամրոցի տարածքի ուսումնասիրման, միջնադարյան ժամանակահատվածի պատմական միջավայրի վերստեղծման, ինչպես նաև հուշարձանի վերականգնման աշխատանքներին: Այնուհետև, ՀՀ մշակույթի նախարարությունը, 2012թ.-ին, ՀՀ-ում ԱՄՆ-ի դեսպանների մշակութային արժեքների պահպանության հիմնադրամին է ներկայացրել «Դաշտադեն ամրոցի և նրա շրջակայքում գտնվող մշակութային ժառանգության, տարածքների ուսումնասիրման, գնահատման, վերականգնման, օգտագործման և հանրահռչակման» համալիր ծրագիրը: Ծրագրի մեկնարկն ապահովելու համար ՀՀ մշակույթի նախարարությունը, ՀՀ-ում ԱՄՆ

Դաշտադեմ ամբոցի մասնակի հիմնանորոգում, թանգարանի հիմնում և հարակից տարածքի բարեկարգում		
Ամսաթիվ Մայիս 2023	ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱՉԴԵՑՈՒԹՅԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՅՏ	Վարկած Rev02

դեսպանատան հետ ձեռք բերված փոխադարձ պայմանավորվածության համաձայն, ՀՀ պետական բյուջեից հատկացված միջոցների հաշվին, որպես պետական սեփականություն, ձեռք է բերել բացառիկ՝ գերակա հանրային շահ ճանաչված բնակելի տունն իր օժանդակ կառույցներով (թվով 9 շինություն):

Բացի այդ հուշագրավ է նաև այն, որ՝

- Տարածաշրջանն առանձնանում է իր պատմագագադրական նկարագրով և հարուստ է պատմամշակութային տարաբնույթ հուշարձաններով: Միայն ամբոցի տարածքում ժամանակագրական առումով պահպանված են հուշարձաններ ուրարտական ժամանակաշրջանից մինչև ուշ միջնադար:
- Ամբոցի պատմությունն առնչվում է Կամսարական, Բագրատունի, Չաքարյան իշխանական տների գործունեության, հայ ժողովրդի ազգային - ազատագրական պայքարի միջնադարյան փուլի հետ:
- Ամբոցը, որը Հանրապետությունում պահպանված ամրաշինական եզակի կառույցներից է, միջնադարում եղել է Անի քաղաքի պաշտպանական համակարգում ներառված 9 ամրոցներից մեկը և ունեցել է ռազմավարական և պաշտպանական կարևոր նշանակություն:
- Տարածքով են անցել Մետաքսի Մեծ և առևտրական նշանակության այլ ճանապարհներ՝ վկայությունը Արուճի և Թալինի քարավանատներն են, որոնց կառուցումը Միջնադարյան Հայաստանում համարվել է պետական մենաշնորհ:
- Ամբոցի պատմությունը սերտորեն առնչվում է քրիստոնեության, Հայաստանի կրոնական, կրթական, ռազմական ու մշակութային զարգացման ընթացքի հետ: Ամբոցի մշակութային արժևորումը կապված է տարբեր հայկական իշխանական տների անվան հետ, որոնց շնորհիվ հետագա դարերում Դաշտադեմ ամբոցը հզորանում է՝ դառնալով ռազմական, հոգևոր ու գիտակրթական նշանավոր կենտրոններից մեկը:

Ծրագրի սոցիալական արդյունքը կլինի զբոսաշրջության և հարակից ոլորտների զարգացման մուլտիպլիկատիվ ազդեցությունը, որի արդյունքում կունենանք ներդրումներ, հյուրանոցային տնտեսության, հյուրատների և կից ոլորտների՝ առևտրի, սննդի արտադրության ծավալների աճ: Ներքին զբոսաշրջության՝ հատկապես ճանաչողական, արկածային, գաստրո-, էթնո- էկոտուրիզմի զարգացման արդյունքում կունենանք տեղի արտադրանքի սպառման առավել մեծ ծավալներ:

5.3 Դաշտադեմ ամբոցի բնութագիրը

Դաշտադեմ ամբոցի հնագույն կառույցը միջնաբերդ-դղակն է, որը հետագայում ամրացվել է աշտարակներով, այնուհետև տարբեր ժամանակաշրջաններում ամբողջապես պարսպապատվել է կրկնակի աշտարակավոր պարիսպներով: Դաշտադեմ ամբոցը ներառում է միջնաբերդ դղակը բոլորող աշտարակավոր պարսպապատը, ամրոցապարիսպը, եկեղեցու գաղտնուդին, ջրավազանները և այլ կառույցները (վերջիններս ներկայացված են **Նկար 5.3**-ում): Տարածքում առաջին շինարարական կառուցապատումները վերագրվում են ուրարտական ժամանակաշրջանին, ապա՝ վաղ միջնադարից շարունակական հավելումներով ձգվում մինչև XIX դար: Մուտքի հատվածը և ճանապարհը մասամբ ասֆալտապատ են, մասամբ գրունտային:

1174 թվականին Անի Շադադյան Սուլթան իբն Շավարիի կողմից ամբոցի դահլիճի կողքերն ու անկյուններն արտաքուստ ամրացվել են բազմանկյուն և շրջանաձև հիմքերով, բրգաձև աշտարակներով: Հարավ-արևմտյան աշտարակի վրա պահպանվել է արաբատառ արձանագրություն, որից տեղեկանում ենք միջնաբերդ-դղակում կատարված վերոհիշյալ շինարարական ամրացումների

Դաշտադեմ ամրոցի մասնակի հիմնանորոգում, թանգարանի հիմնում և հարակից տարածքի բարեկարգում		
Ամսաթիվ Մայիս 2023	ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱՉԴԵՑՈՒԹՅԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՅՏ	Վարկած Rev02

մասին: Այնուհետև Չաքարյան իշխանների առաջնորդությամբ միջնաբերդ-դղյակը բոլորվում է աշտարակավոր պարսպապատով՝ կառուցված կարմրավուն սրբատաշ տուֆ քարից: 10 մ բարձրությամբ պարսպապատը ունեցել է մեկ կամարակապ մուտք՝ բացված հարավային կողմից: Պարսպապատի քարերին դեռ պահպանվել են քարտաշ վարպետների նշանները:

Նկատի ունենալով բնական պաշտպանվածությունից զուրկ լինելու հանգամանքը՝ Երևանի Սարդար Հուսեին խանը 1812 թվականին, միջնաբերդն ու այն բոլորող պարսպապատը պարփակում է ավելի հզոր՝ աշտարակներով հագեցված պարսպով, վերածելով այն անառիկ ամրոցի, զբաղեցնելով ավելի քան 20 հա տարածք: Կառուցված է կոպտատաշ՝ հիմնականում տուֆ քարից, հողաշաղախի համադրմամբ: Պատերը՝ աշտարակների հետ միասին, բավականին հաստ են և բարձր: Ամրոցապարիսպը հիմքում ութանկյուն պատկեր է հիշեցնում, որի անկյուններից վեր են խոյանում մեծածավալ աշտարակները: Աշտարակներից 7-ը նիստավոր են, իսկ 8-րդը, որտեղից ամրոցի գլխավոր, լայնաթռիչք կամարակապ մուտքն է բացվում, հիմքում ունի շրջանագիծ բնույթ: Վերևից ամբողջ եզրագծով բացված են նեղ պատուհաններ, որպես հրակնատներ: Ամրոցապարիսպն ունի երկրորդական փոքր մուտք՝ հարավ-արևմտյան աշտարակի կողմից: Աշտարակները օգտագործվել են որպես մթերանոցներ:

Ճարտարապետություն

Ամրոցը բաղկացած է միջնաբերդից և շրջապարսպից, որոնց միջև ստեղծված ներքին բակի տարբեր հատվածներում տեղակայված են պալատական միանավ եկեղեցին, պեղումներով հայտնաբերված աշխարհիկ երկու շենքերը, ջրամատակարարման համակարգը՝ ստորգետնյա ջրամբարներով, տնտեսական նշանակության այլ կառույցներ:

► Միջնաբերդ

Համալիրի կորիզը բազմանիստ և կիսակլոր աշտարակներով համալրված միջնաբերդն է, որի գլխավոր կառույցը ուղղանկյուն հատակագծով թաղակապ շինություն է՝ կառուցված սրբատաշ կարմրավուն տուֆ քարից (տես **Նկար 5.3, ա և բ**): Միակ մուտքը հարավային կողմում է, որը փակված է եղել քարե դռով: Կառույցի ներսում՝ հարավարևելյան պատի կենտրոնում տեղադրված մուտքից սկսվող միջանցքը և նեղ ոլորապտույտ աստիճանները տանում են դեպի միջնաբերդի աստիճանաձև տանիք: Տանիքի կենտրոնում՝ երկայնական ուղղությամբ երեք լուսահորեր են բացված՝ ներքին լուսավորությունն ապահովելու համար: Թաղակապ կառույցի ներսում պահպանվել է գաղտնուղին: Միջնաբերդի նիստավոր և պայտաձև աշտարակներում տեղակայվել են բնակելի հարկաբաժինները, որոնց մուտքերը բացվում են տանիքից: Դահլիճը թաղածածկ է, պատերը ներսից սվաղված են եղել կրաշաղախով, հատակը սալապատ: Պատուհաններ չեն եղել, լուսավորությունը ապահովվել է կտուրի երդիկների միջոցով: 1174 թվականին Սուլթան իբն Շավուրի կողմից դահլիճի կողքերն ու անկյուններն արտաքուստ ամրացել են բազմանկյուն, շրջանաձև և բրգաձև աշտարակներով: Հարավ-արևմտյան աշտարակի վրա պահպանվել է սրբատառ արձանագրություն, որը վկայում է այս մասին:

► Շրջապարիսպ

Անկանոն բազմանկյուն հատակագծով ներքին շրջապարիսպը՝ տասնմեկ կիսակլոր աշտարակներով և երկու դարպասներով, ընդգրկում է 2500 մ² տարածք (տես **Նկար 5.3, գ և դ**): Շրջապարսպի հարավային գլխավոր դարպասը նախագծված է որպես թաղակապ փոքր սրահ, որի արևելյան կողմում ներքուստ կցակառուցված է նեղ ու երկար խորշ: Երկրորդ՝ արևելյան դարպասը բացվեց 2015թ.-ի պեղումներով: Աշտարակների մի մասն ունեն միակողմանի կամ երկկողմանի սանդուղքներ: Մասնակի վերականգնվել են 2008-2009 և 2011-2013 թվականներին:

Դաշտադեմ ամրոցի մասնակի հիմնանորոգում, թանգարանի հիմնում և հարակից տարածքի բարեկարգում		
Ամսաթիվ Մայիս 2023	ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱՉԴԵՑՈՒԹՅԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՅՏ	Վարկած Rev02

► Պալատական եկեղեցի

Ամրոցի տարածքում եղել է երկու եկեղեցի: Դրանցից մեկը չի պահպանվել: Կառույցի որմնաքարին պահպանվել է Ս. Սարգիս անվամբ և 1018թ.-ի արձանագրություններ: Եկեղեցին կառուցված է եղել դղյակը բոլորող պարսպապատի հարավ-արևելյան աշտարակի հարավային կողմում, այն քանդվել է XX դարի երկրորդ տասնամյակի ընթացքում՝ բնակելի տներ կառուցելու համար:

Երկրորդ եկեղեցին կանգնած է պարսպապատից հյուսիս-արևելք (տես **Նկար 5.3, ե**): Կառուցվել է X դարում կարմրավուն սրբատաշ տուֆ քարից: Միանավ, սրահատիկ թաղածածկ, երկթեք սալածածկ տանիքով փոքր կառույց է՝ մուտքերը արևմտյան և հարավային կողմերից: Վերականգնվել է 2008-2009 թվականներին:

► Աշխարհիկ շենքեր

13-14-րդ դդ. բնորոշ երկու մոնումենտալ շենքերը հայտնաբերվեցին 2015 և 2018 թվականներին պեղումների արդյունքում: Դրանցից մեկը քառապլուս, մոտավորապես քառակուսի հատակագծով հանդիսավոր դահլիճ է՝ նախատեսված խնջույքների կամ հանդիսավոր ընդունելության համար: Թեև Դաշտադեմի դահլիճի միայն հիմնապատերն են պահպանվել, սակայն պեղումներով հայտնաբերված քանդակագարդ մանրամասները վկայում են նրա հարուստ հարդարանքի մասին: Երկրորդ աշխարհիկ կառույցը կցակառուցված է հարավային պարսպապատին՝ գլխավոր դարպասի մոտ: Այն երկարաձգված ուղղանկյուն շենք է, որի գործառության նշանակությունը դեռևս պարզորոշ չէ: Ծառայել է հավանաբար իբրև սեղանատուն կամ կայագորի համար նախատեսված շենք:

► Ջրամբար և ջրատար

Միջնադարյան դղյակի բնակչությանը խմելու ջրով ապահովելու համար կառուցվել է ջրամատակարարման համակարգ՝ ստորգետնյա ջրամբարներով և ջրատարով, որոնք տեղակայված են դղյակի հյուսիս-արևելյան հատվածում:

► Արտաքին պարիսպներ

Բազմանկյուն հատակագծով արտաքին բավականին հաստ պարսպապատը կառուցվել է կոպտատաշ տեղական կարծր տուֆով, մասամբ բազալտով և կավաբետոնի շաղախով (տես **Նկար 5.3, գ և դ**): Այն ուժեղացված է սրածայր, քառանիստ յոթ և մեկ կիսակլոր աշտարակներով: Ամրոցի գլխավոր մուտքը հյուսիսից է: Արտաքին պարսպապատն ունի գաղտնի միջանցք, որը դուրս է գալիս դեպի արևմտյան կողմի ձորակը:


► Խանի պալատ

Պալատական կառույցը՝ պայմանականորեն Խանի պալատը, կառուցվել է 19-րդ դարի վերջ 20-րդ դարի սկզբին և իր անվանումը ստացել է տեղի բնակիչների կողմից: Այն իրենից ներկայացնում է ուղղանկյունաձև 20 × 6 մ չափերով, կարմրավուն սրբատաշ տուֆով կառույց: Հետագայում՝ հավանաբար 20-րդ դարի կեսին, նրա արևմտյան մասում կցվել է երկու թևերը և օգտագործվել որպես համայնքի դպրոց:

Ամրոցի կառույցների լուսանկարները բերված են **Նկար 5.3**-ում, իսկ դրանց տեղադիրքերը պատկերված են **Նկար 5.4**-ում:




ա) միջնաբերդի հիմնական ուղղանկյուն կառույցը




բ) միջնաբերդի հիմնական ուղղանկյուն կառույցը ներսից



գ) շրջապարիսպը հյուսիսային հատվածից




դ) շրջապարիսպը հարավային հատվածից



ե) պալատական գործող եկեղեցի

Նկար 5.3. Ամրոցի կառույցների լուսանկարները



Պայմանանշաններ

- 1 - Գլխավոր մուտք
- 2 - Ամրոցապարիսպ՝ կառուցվել է 1812 թ.-ին
- 3 - Աշտարակով պարսպապատ՝ կառուցվել է 1267 թ. -ին
- 4 - Շրջապարիսպ՝ 1174 թ.-ին ամրացվել է բազմանկյուն շրջանաձև հիմքերով
- 5 - Սբ. Սարգիս եկեղեցի
- 6 - Միջնաբերդի դղյակ/դահլիճ
- 7 - "Խանի պալատ"
- 8 - "Խանի պալատ"-ին կից կառուցված շինություն
- 9 - Միջնադարյան ջրամբար
- 10 - Միջնադարյան դարբնոց
- 11 - Գոյություն ունեցող կիսաքանդ կառույց (ոչ միջնադարյան)

Նկար 5.4. Դաշտադեմ ամրոցի առկա շինությունները

Դաշտադեմ ամրոցի մասնակի հիմնանորոգում, թանգարանի հիմնում և հարակից տարածքի բարեկարգում		
Ամսաթիվ Մայիս 2023	ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱՉԴԵՑՈՒԹՅԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՅՏ	Վարկած Rev02

5.4 Իրականացված պեղումներ

Դաշտադեմ ամրոցի ողջ տարածքում 2022թ.-ին իրականացվել են հնագիտական պեղումներ, որոնց ընթացքում ամրոցը յուրաքանչյուր բացվեցվել են «հանդիսավոր սրահը», «սեղանատունը» և գլխավոր դարպասի նախասրահի թաղակիր պատերը: Սրանք կառուցվել են Չաքարյանների շրջանում, որը Դաշտադեմի ողջ համալիրի պատմության ու ճարտարապետության ամենաակնառու փուլն է:

Իրականացված հնագիտական պեղումների արդյունքում արձանագրվել է, որ Դաշտադեմի միջնադարյան դղակը ակտիվ կենսագործել է 12-14-րդ դդ.-ում: Կարևոր դիրք զբաղեցնելով Դվին և Անի քաղաքների միջև առևտրային ճանապարհների վրա՝ 13-րդ դարում և 14-րդ դարի առաջին քառորդում այն եղել է Չաքարյանների իշխանանիստ կենտրոններից մեկը Արագածոտնում: Ի տարբերություն համաժամանակյա մյուս դղակ-ամրոցների, այն միասնական նախագծով ստեղծված համալիր էր՝ ընդհանուր շրջապարսպով ամփոփված և դասական դղակներին հատուկ բոլոր համակառույցներով:

Հնագիտական պեղումների արդյունքում բացված «հանդիսավոր սրահը», «սեղանատունը» և գլխավոր դարպասի նախասրահի թաղակիր պատերի մասին մանրամասն տեղեկատվությունը ներկայացված է ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտ" ՊՈԱԿ-ի հաշվետվության մեջ (**Հավելված 12**): Դաշտադեմ ամրոցի տարածքում հնագիտական պեղումներ իրականացնելու թույլտվությունը ներկայացված է **Հավելված 11**-ում:

5.5 Պատմական ակնարկ

Դաշտադեմի ամրոց

Դաշտադեմի ամրոցը (նախկինում հայտնի Ներքին Թալինի, Նոր Թալինի կամ Փոքր Թալինի բերդ անուններով) Հայաստանի ամրաշինական համակարգի եզակի համալիրներից մեկն է, որը գտնվում է Արագածոտնի մարզի Թալին քաղաքից 5 կմ հարավ՝ Դաշտադեմ գյուղի հարավային եզրին: Տեղակայված լինելով Արտենի լեռան հարավարևելյան կողմում տարածվող լայնարձակ սարահարթի վրա (ծ.մ. 1450 մ)՝ այն հյուսիս-արևմուտքից գերիշխող դիրք ունի Արարատյան դաշտի նկատմամբ: Դաշտադեմի դղակ-ամրոցը գուրկ է բնական անառիկությունից, այդ իսկ պատճառով օղակվել է բավական բարձր պարիսպներով: Համալիրը բաղկացած է միջնադարյան դղակից, որն, իր հերթին, պարփակված է 19-րդ դարի սկզբին կառուցված արտաքին մեծ պարսպաշարով: Ամրոցից դուրս՝ հարավային կողմում լայնատարած գյուղատեղին է՝ բնակելի ու արտադրական կառույցների ավերակներով, գերեզմանոցներով ու առանձին կանգնեցված խաչքարերով: Թե ե՞րբ է հիմնադրվել դղակը դեռևս ստույգ պարզված չէ: Ըստ ճարտարապետական առանձնահատկությունների և պատմական սակավաթիվ սկզբնաղբյուրների՝ կառուցվել է 11-12-րդ դդ. միջակայքում: Առաջին թվակիր աղբյուրը միջնաբերդի հարավարևմտյան աշտարակի վրա պահպանված արաբատառ արձանագրությունն է, որի համաձայն՝ Սուլթան իբն Մահմուդ իբն Շավուր Շադդադյանը 1174թ.-ի սեպտեմբերին հիմնում է այս շինությունը: Դղակի պատմության երկրորդ առանցքային սկզբնաղբյուրը միջնաբերդի մուտքի վերևում, դեռևս 20-րդ դարի առաջին կեսին պահպանված հայերեն 1307թ.-ի արձանագրությունն է, որի համաձայն՝ Աղպուղա Չաքարյանը ազատում է իր Թալին գյուղը գինու հարկից: Պեղումներով ի հայտ եկած մեկ տասնյակից ավել վիմագրերի բեկորներից որոշները ևս կրում են Թալին տեղանունը: 12-րդ դ. վերջին հայ-վրացական միացյալ ուժերով Հայաստանն ազատագրելուց հետո Դաշտադեմի դղակն անցնում է Չաքարյաններին, որոնք զարկ տվեցին լայնածավալ շինարարությանն ու հատկապես ամրաշինական համակարգի վերանորոգումներին Անիում և իրենց տիրապետության տակ գտնվող շրջաններում: Նրանք

Դաշտադեմ ամրոցի մասնակի հիմնանորոգում, թանգարանի հիմնում և հարակից տարածքի բարեկարգում		
Ամսաթիվ Մայիս 2023	ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱՉԴԵՑՈՒԹՅԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՅՏ	Վարկած Rev02

ամրացրեցին դղյակի միջնաբերդը կիսակլոր աշտարակներով և լրացուցիչ օղակեցին այն շրջապարսպով:

Թեև 19-րդ դարից ամրոցը եղել է հայ ճարտարապետության պատմության հետազոտողների ուշադրության կենտրոնում, սակայն ամրոցի ուսումնասիրությունը սկսվեց միայն 20-րդ դարի վերջին ձեռնարկված պեղումներով, որոնք տևական ընդհատումներից հետո շարունակվում են այսօր:

Դղյակում իրականացված պեղումների արդյունքում վավերացվեցին 12-20-րդ դդ. ընդգրկող երեք մշակութային շերտեր՝ 12-14-րդ դդ., 15-18-րդ դդ.՝ բազմաթիվ վերակառուցումների փուլերով և 19-20-րդ դդ.: Չաքարյան իշխանական տան գործունեության շրջանը Դաշտադեմի ողջ համալիրի պատմության ու ճարտարապետության ամենասկնառու փուլն է, որը լավ ներկայացված է թե՛ ճարտարապետական կառույցներով, թե՛ վիմագրերով, թե՛ հայտնաբերված հնագիտական նյութով: Մոնղոլական արշավանքների արդյունքում, թեև 14-րդ դ. Չաքարյանները թողնում են տարածքը, սակայն ամրոցի պատմության հաջորդ փուլում շարունակվում է ինտենսիվ բնակեցումը: 15-18-րդ դդ. տարբեր շինարարական փուլերում նկատվում են վերակառուցումների ընթացքում փոխված հատակներ, ներդրված թոնիրներ, նոր կառուցված պատեր, որոնք որոշակի հատակագծային սխեմա են կազմում:

1812թ.-ին Երևանի Հուսեյն խանը ձեռնարկում է արտաքին մեծ պարսպապատի և պետական պահանջմունքների համար այլ կառույցների ու ամբարների շինարարությունը: Ռազմական հենակետ դառնալով ռուս-պարսկական բախումների ժամանակ՝ 19-րդ դարում ամրոցն իրականացնում էր դեպի Շիրակ գնացող ճանապարհի վերահսկողությունը: 20-րդ դարում ամրոցի տեղում հաստատվում են Արևմտյան Հայաստանից Մեծ եղեռնի հետևանքով գաղթյալ բնակչությունը: Ամրոցի տարածքում բնակեցումը շարունակվում է ընդհուպ մինչև 21-րդ դարի սկիզբ:

Դաշտադեմի դղյակը Անի մայրաքաղաքի շուրջ ձևավորված ամրոցների շղթայի հանգույցներից մեկն է և կառուցված է նույն սկզբունքներով, ինչ Տիգնիսի, Մաղաբերդի, Երազգավորսի, Բագարանի, Մրենի (ներկայիս Թուրքիայի տարածքում), Վահրամաբերդի, Գուսանագյուղի, Հոռոմի, Անբերդի, Արունի, Կոշի դղյակները:

Չարգացած միջնադարում այն գտնվում էր Դվինից Անի տանող քարավանային տարանցիկ ճանապարհների վրա և վերահսկում ու ապահովում էր այդ ճանապարհների անվտանգությունը: Ամրոցից ոչ հեռու գտնվող Թալինի քարավանատունը (13-րդ դ.) և դղյակի տարածքում իրականացված պեղումների արդյունքում հայտնաբերված հնագիտական հավաքածուներում առկա 12-14-րդ դդ. թվագրվող ներմուծված օրինակները (բյուզանդական ապակու նմուշներ, իրանական, մերձավորարևելյան, միջինասիական խեցանոթներ, չինական սելադոններ, ինչպես նաև բյուզանդական, սելջուկյան, վրացական և մոնղոլական դրամներ) վկայում են միջնադարյան ժամանակաշրջանում առևտրական ու մշակութային փոխհարաբերություններում դղյակի ունեցած դերի մասին:

Ամրոցի պատմությունը սերտորեն առնչվում է քրիստոնեության, Հայաստանի կրոնական, կրթական, ռազմական ու մշակութային զարգացման ընթացքի հետ: Ամրոցի մշակութային արժևորումը կապված է տարբեր հայկական իշխանական տների անվան հետ, որոնց շնորհիվ հետագա դարերում Դաշտադեմ ամրոցը հզորանում է՝ դառնալով ռազմական, հոգևոր ու գիտակրթական նշանավոր կենտրոններից մեկը:

Դաշտադեմ ամբոցի մասնակի հիմնանորոգում, թանգարանի հիմնում և հարակից տարածքի բարեկարգում		
Ամսաթիվ Մայիս 2023	ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱՉԴԵՑՈՒԹՅԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՅՏ	Վարկած Rev02

5.4 Թույլտվություններ և այլ համաձայնեցումներ

Դաշտադեմ ամբոցի մասնակի հիմնանորոգման, թանգարանի հիմնման և հարակից տարածքների բարեկարգման աշխատանքների նախագծման համար հիմք է հանդիսացել ՀՀ Արագածոտն մարզի Թալին համայնքի կողմից 25.04.2023թ.-ին տրված №16 նախագծման թույլտվությունը (ճարտարապետահատակագծային առաջադրանք), որը ներկայացված է սույն Հայտի **Հավելված 2**-ում:

Բացի այդ, Դաշտադեմ համայնքապետարանի կողմից 24.06.2022թ.-ին տրվել է №42 տեղեկանքը, համաձայն որի՝ Ծրագրով նախատեսված շինարարական աշխատանքների նախագծային փաստաթղթերի մշակման համար խմելու ջրի միացումը կիրականացվի Դաշտադեմ ամբոցի մուտքից դեպի ձախ գտնվող առաջին դիտահորից: Տեղեկանքը ներկայացված է **Հավելված 3**-ում:

"Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների և պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին" ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի և միջգերատեսչական հնագիտական հանձնաժողովի կողմից ստացված դրական եզրակացությամբ տրվել է Դաշտադեմ ամբոցի տարածքում հնագիտական պեղումներ իրականացնելու №40 թույլտվությունը, որը ներկայացված է **Հավելված 11**-ում:

"Դաշտադեմ ամբոցի մասնակի հիմնանորոգում, թանգարանի հիմնում և հարակից տարածքի բարեկարգում" աշխատանքային նախագիծը բերված է սույն Հայտի **Հավելված 15**-ում:

5.5 Նախատեսվող աշխատանքների փուլայնությունը

Դաշտադեմ ամբոցի մասնակի հիմնանորոգման, թանգարանի հիմնման և հարակից տարածքի բարեկարգման աշխատանքները նախատեսված է իրականացնել հետևյալ փուլերով՝

Փուլ I - Նախապատրաստական աշխատանքներ և շին. հրապարակի կազմակերպում (**Բաժին 5.6**)

- 1) տարածքի մաքրում և համահարթում,
- 2) ժամանակավոր ցանկապատի, տեղեկատվական վահանակների տեղադրում,
- 3) ժամանակավոր հարթակների պատրաստում շինարարական աղբի կուտակման համար,
- 4) ժամանակավոր շինությունների՝ կենցաղային, գրասենյակային և պահեստային տեղամասի կազմակերպում,
- 5) շին.հրապարակի գիշերային լուսավորվածություն,
- 6) հակահրդեհային անվտանգության գույքերի տեղադրում,

Փուլ II - Ապամոնտաժման աշխատանքներ (**Բաժին 5.7**)

- 1) գոյություն ունեցող կիսաքանդ կառույցի և «Խանի պալատ»-ի ապամոնտաժում (տես **Հավելված 4**),
- 2) ավելորդ քարերի հեռացում:

Փուլ III - Հողային աշխատանքների իրականացում (ծավալները բերված են **Բաժին 5.10**-ում)

- 1) հողի բերրի շերտի հեռացում և ժամանակավոր պահում՝ տարածքի հետագա բարեկարգման համար օգտագործելու նպատակով,
- 2) հողային աշխատանքների կատարում էքսկավատորներով, մասամբ նաև ձեռքով,
- 3) գրունտի մի մասի պահպանում փորվածքների հետլիցքի, տարածքի հարթեցման համար, մնացած մասի տեղափոխում աղբավայր:

Փուլ IV - Կառուցման աշխատանքներ (**Բաժին 5.8**)

Դաշտադեմ ամրոցի մասնակի հիմնանորոգում, թանգարանի հիմնում և հարակից տարածքի բարեկարգում		
Ամսաթիվ Մայիս 2023	ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱՉԴԵՑՈՒԹՅԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՅՏ	Վարկած Rev02

- 1) պահանջվող նյութերի տեղափոխում շին. հրապարակ,
- 2) թանգարանի շենքի իրականացում,
- 3) քայլուղիների և ավտոկայանատեղիի կառուցում:

Փուլ V - Մոնտաժման աշխատանքներ

- 1) ներքին ինժեներական գծերի իրականացում,
- 2) արտաքին ինժեներական ցանցի իրականացում,
- 3) արտաքին լուսավորության անցկացում,
- 4) խմելու ջրի խողովակների մոնտաժում:

Փուլ VI - Տարածքի մաքրում և բարեկարգում (**Բաժին 5.12**)

- 1) ավելորդ շինարարական աղբի հեռացում տարածքից և տեղադրում աղբավայրում,
- 2) տարածքի բարեկարգման աշխատանքներ (հողի բերրի շերտի օգտագործումով):

5.6 Նախապատրաստական աշխատանքներ և շին. հրապարակի կազմակերպում

Մինչ հիմնական աշխատանքների մեկնարկը Դաշտադեմ ամրոցի տարածքը մաքրվում է մարդածին ազդեցություն տարրերից և շինարարական աղբից, ապա հարթեցվում է: Տեղադրվելու է շինարարական կապալառու կազմակերպության գրասենյակային և կենցաղային տնակը՝ իր սանհանգույցով և առանձին պահեստային սենյակով (տես **Նկար 5.5-ը**):



Նկար 5.5. Կապալառու կազմակերպության գրասենյակային և կենցաղային տնակը

Տարածքը ցանկապատվելու է, տեղադրվելու են նախատեսվող գործունեության վերաբերյալ տեղեկատվական վահանակներ, ցուցանակներ, անվտանգության նշաններ, առաջնային հրդեհաշիջման միջոցներ: Կազմակերպվելու է առաջացող շինարարական և կենցաղային թափոնների ժամանակավոր պահման տեղամասը, անցկացվելու են անհրաժեշտ ենթակառուցվածքները, մասնավորապես

Դաշտադեմ ամրոցի մասնակի հիմնանորոգում, թանգարանի հիմնում և հարակից տարածքի բարեկարգում		
Ամսաթիվ Մայիս 2023	ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱՉԴԵՑՈՒԹՅԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՅՏ	Վարկած Rev02

ջրամատակարարումը, էլեկտրամատակարարումը: Մոնտաժվելու է տարածքի գիշերային լուսավորությունը:

Ճին. տեխնիկայի կայանման հարթակները, նյութերի պահման փակ պահեստը, ինչպես նաև կենցաղային և գրասենյակային ժամանակավոր շարժական տնակները ներկայացված են **Հավելված 13**-ում:

5.7 Ապամոնտաժման ենթակա կառույցները

Ապամոնտաժման ենթակա կառույցները երկուսն են՝ գոյություն ունեցող կիսաքանդ շինությունը և «Խանի պալատ»-ը:

Գոյություն ունեցող կիսաքանդ կառույց

Գյություն ունեցող կիսաքանդ կառույցը գտնվում է մեծ և փոքր պարսպապատերի ներսում՝ արևմտյան մասում (պատկերված է **Նկար 5.4**-ում՝ 11 թվանշանով, իսկ լուսանկարը բերված է **Նկար 5.6, ա)**-ում): Նախկինում այն կառուցվել է իբրև բնակելի տուն, սակայն տարիների ընթացքում չօգտագործվելու արդյունքում վերածվել է կիսաքանդ կառույցի: Կառույցի ընդհանուր մակերեսը 161.99 մ² է:

Գոյություն ունեցող կիսաքանդ կառույցի քանդման աշխատանքների մոտավոր ծավալը կազմում է՝

- Պատեր - 278 մ³ / 326 տ,
- Հիմք - 54 մ³ / 210 տ,
- Հողային հանույթ - 137 մ³:

«Խանի պալատ»

Մյուս ապամոնտաժվող կառույցը արևմտյան մասում գտնվող շինությունն է՝ տեղի բնակիչների կողմից անվանված «Խանի պալատ»-ը, որը 20-րդ դարի կեսերին կառուցվել և օգտագործվել է որպես համայնքի դպրոց (պատկերված է **Նկար 5.4**-ում՝ 8 թվանշանով, իսկ լուսանկարը բերված է **Նկար 5.6 բ)**-ում): Կառույցը այժմ գտնվում է կիսաքանդ և խարխուլ վիճակում և ենթակա է ապամոնտաժման: Կառույցի ընդհանուր մակերեսը 288 մ² է:

«Խանի պալատ»-ի քանդման աշխատանքների մոտավոր ծավալը կազմում է՝

- Պատեր - 295 մ³ / 205 տ,
- Հիմք - 40 մ³ / 90 տ,
- Հողային հանույթ - 378 մ³:

Կիսաքանդ կառույցների ապամոնտաժման աշխատանքների արդյունքում քանդված պատերը և հանված հիմքերը ժամանակավոր՝ մոտ 1-2 օր, կուտակվելու են ամրոցի հարավ-արևմտյան մասում (կուտակման/պահման վայրը ներկայացված է **Հավելված 13**-ում): Քանդված պատերը և հիմքերը որպես շինարարական աղբ տեղափոխվելու են մոտակա աղբավայր (տես **Բաժին 7.4**), որը գտնվում է նախատեսվող գործունեության տարածքից մոտ 3 մ հեռավորության վրա:



ա) Քանդման ենթակա կիսաքանդ կառույց



բ) «Էտանի պալատ»

Նկար 5.6. Քանդման ենթակա շինությունները

Դաշտադեմ ամրոցի մասնակի հիմնանորոգում, թանգարանի հիմնում և հարակից տարածքի բարեկարգում		
Ամսաթիվ Մայիս 2023	ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱՉԴԵՑՈՒԹՅԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՅՏ	Վարկած Rev02

5.8 Կառուցման աշխատանքներ

Թանգարանի շենք

Նախագծով նախատեսվում է կառուցել թանգարանային շենք: Թանգարանի շենքը տեղակայված է լինելու արտաքին պարիսպի և «Խսանի պալատ»-ի միջև: Այն կառուցվելու է գետնի տակ, ունենալու է 0.00=1438.15 բացարձակ նիշ՝ 3.15մ ներքև մուտքի հատվածի նիշից: Ունենալու է դեպի թանգարան տանող աստիճանավանդակ-ամֆիթատրոն և թեքահարթակներ, ինչպես նաև թեքահարթակ՝ տանող դեպի ամրոցի քայլուղի: Թանգարանի տեղադիրքը ամրոցի տարածքում ներկայացված է **Հավելված 5**-ում, իսկ թանգարանի հատակագիծը՝ **Հավելված 6**-ում: Վերջինիս համաձայն թանգարանի կառուցապատման ընդհանուր մակերեսը 1072մ² է, իսկ սենքերի ընդհանուր մակերեսը 496մ²: Սենքերի ճարտարապետական լուծումները, ինչպես նաև դրանց մակերեսները ներկայացված են ստորև **Աղյուսակ 5.1**-ում:

Աղյուսակ 5.1. Թանգարանի սենքերի ցանկը և դրանց մակերեսները

№	Թանգարանի սենքերը	Մակերեսները
1	Նախասրահ, տոմսարկղ, ժամանակավոր ցուցադրության սրահ, հուշանվերների վաճառակետ, կրթական ծրագրերի/փորձառությունների կազմակերպման համար հարմարեցված տարածք	117 մ ²
2	Մշտական ցուցադրության սրահ	130 մ ²
3	Միջնադարյան դարբնի արհեստանոց տաղավար	30 մ ²
4	Միջնադարյան կաշեգործի արհեստանոց տաղավար	30 մ ²
5	Միջնադարյան հյուսնի արհեստանոց տաղավար	30 մ ²
6	Սանհանգույց տղամարդկան համար (այցելուներ)	5 մ ²
7	Սանհանգույց կանանց համար (այցելուներ)	5 մ ²
8	Հանդերձասենյակ	4 մ ²
9	Պահեստային սենյակ՝ թեմատիկ միջոցառումների կազմակերպման համար և անհրաժեշտ պարագաները պահելու համար	13 մ ²
10	Ֆոնդարան	27 մ ²
11	Տեխնիկական սենյակ	31 մ ²
12	Արխիվային պահեստ	28 մ ²
13	Աշխատասենյակ	38 մ ²
14	Սանհանգույց տղամարդկան համար (աշխատակիցներ)	4 մ ²
15	Սանհանգույց կանանց համար (աշխատակիցներ)	4 մ ²
Ընդամենը		496 մ²

Թանգարանի շենքը ապահովվելու է հակահրդեհային, ջերմահովացման, օդափոխության և անվտանգության համապատասխան համակարգերով: Տաղավարները նախագծվելու են հրակայուն նյութերով, դարբնոցի հատակը՝ զնդանի վրա հարվածներից դիմակայելու անհրաժեշտ ամրությամբ, դարբնոցի վառարանի չափերը՝ հատակի պարագծով առնվազն՝ 80×110 սմ, ինչպես նաև վառարանին կից «փուքսի» համար լրացուցիչ մակերես ապահովելու համար հաշվի է առնվելու վառարանի ծխնելույզի համապատասխան հզորության ապահովման բացվածքի չափը:

Դաշտադեմ ամրոցի մասնակի հիմնանորոգում, թանգարանի հիմնում և հարակից տարածքի բարեկարգում		
Ամսաթիվ Մայիս 2023	ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱՉԴԵՑՈՒԹՅԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՅՏ	Վարկած Rev02

Թանգարանի, սանհանգույցի և տոմսավաճառի կրպակի ջեռուցումը իրականացվելու է ջեռուցման էլեկտրական սալերով: Ապահովվելու են շենքերի, ինչպես նաև արտաքին լուսավորության համակարգերի էներգաարդյունավետության և էներգախնայողության նորմատիվ պահանջները:


Քայլուղի

Նախագծում նախատեսվում է քայլուղի, որը սկսվում է գլխավոր մուտքից, շարունակվում թանգարանի թեքահարթակներով, անցնելով «Խանի պալատ»-ի մոտով դեպի Դաշտադեմի ամրոցի Ա մուտք: Բ մուտքից ուղղությունը տանում է դեպի Խանի պալատ և Ա մուտք: Քայլուղին ունենալու է մոտ 664մ² մակերեսով տարածք և իրականացվելու է մանր քարերի ծածկույթից բաղկացած լվացվող բոտենից: Վերջինիս ծավալը կազմելու է մոտ 99.6մ³:

Իրականացվելու է նաև ներքին քայլուղի, որը ցուցադրում է ներսի պատմամշակութային արժեքների հաջորդական ուղղությունը: Ներքին քայլուղին իրենից ներկայացնելու է գրունտային ճանապարհ, որի ընդհանուր մակերեսը 1360մ² է: Քայլուղիները ներկայացված են **Հավելված 7**-ում:

Ավտոկայանատեղի

Ամրոցի գլխավոր մուտքին հարող տարածքում՝ վերականգնվելու և բարեկարգվելու են հուշարձանին և կայանատեղիին մոտեցնող ճանապարհը (մոտ 2500մ² տարածք), վերանորոգվելու են ամրոցի մուտքին հարող հողամասի ծածկույթը՝ փոխարինվելով քարե սալահատակով: Կազմակերպվելու է ավտոկայանատեղի՝ մոտ 400մ² հողամասի սահմաններում: Ավտոկայանատեղիների վայրերը ներկայացված են **Նկար 5.7**-ում:



Նկար 5.7. Ավտոկայանատեղիների տեղակայման վայրերը

Դաշտադեմ ամրոցի մասնակի հիմնանորոգում, թանգարանի հիմնում և հարակից տարածքի բարեկարգում		
Ամսաթիվ Մայիս 2023	ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱՉԴԵՑՈՒԹՅԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՅՏ	Վարկած Rev02

5.8.1 Ենթակառուցվածքների իրականացում

Ջրամատակարարման և ջրահեռացման համակարգ

Աշխատանքային նախագծով նախատեսվում է թանգարանի շենքի և դրանում գործող սանհանգույցների համար իրականացնել ջրամատակարարման գծի տեղադրման աշխատանքներ: Նոր ջրագիծը սկիզբ է առնելու ամրոցի մուտքի հարևանությամբ գտնվող ջրագծից: Այն ուղղվելու է դեպի թանգարանի շենք: Նոր ջրագծի երկարությունը մոտ 136մ է:

Աշխատանքային նախագծով նախատեսվում է նաև իրականացնել կոյուղագծի տեղադրման աշխատանքներ: Նոր կոյուղագիծը անցկացվելու է ամրոցի մուտքի հարևանությամբ գտնվող տոմսավաճառի սանհանգույցի կետից՝ ուղղվելով դեպի թանգարանի շենք: Թանգարանի շենքից կոյուղագիծը ուղղվելու է դեպի ամրոցի մեծ պարսպի հարավային հատվածից դուրս գտնվող սեպտիկ հոր: Սեպտիկ հորից վնասագերծված/մաքրված ջուրը ուղղվելու է դեպի ամայի դաշտ: Կոյուղագծի ընդհանուր երկարությունը 290մ է:

Ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի համար նախատեսվում է իրականացնել՝

- Խմելունացնել էն և ջրահեռացման համակարգերի համաքին ցանցեր,
- Ներքիննացնել էն և ջրահեռացման,
- Ջրահեռացման էն և ջրահեռացման համակարգ:

Խմելու-տնտեսական ջրամատակարարման ներքին և արտաքին ցանցեր

Ծինության ջրամատակարարման մուտքագիծը սկսվում է ամրոցի հարևանությամբ անցնող Ø50մմ տրամագծով ջրագծից: Միացման հանգույցում նախատեսվում է կառուցել $D=1.0\text{մ}$, $H=1.2\text{մ}$ չափերով փականային և ջրաչափական հոր: Հորի ներսում նախատեսվում է 0.7լ/վ ջրապահանջին համապատասխան DN20 ջրաչափական հանգույց (DN20 փական, DN20 ֆիլտր և DN20 ջրաչափ): Խմելու-տնտեսական ջրամատակարարման ներքին և արտաքին ջրագծի երկարությունը կազմում է 136մ, որը նախատեսվում է իրականացնել de32 (PE) խմելու ջրի խողովակներով: Խողովակի տակ և վրա նախատեսված է համապատասխանաբար՝ նախապատրաստական և պաշտպանիչ շերտեր ավազից: Խողովակի խորությունը 1.1մ է: Մեքենաների շարժի և այլ կոմունիկացիաների հատման հատվածներում նախատեսվել են պողպատե DN200 պատյան խողովակներ:

Քանի որ ջրամատակարարման արտաքին ցանցի ճնշումը հայտնի չէ, ուստի խմելու-տնտեսական ջրամատակարարման ներքին ցանցում անհրաժեշտ ճնշում ապահովելու նպատակով 0.00 միշում նախատեսված է $Q=2.5\text{մ}^3/\text{ժամ}$, $H=15\text{մ}$, $N=0.55\text{կՎտ}$, $1\times 200\text{-}240\text{Վ}$ պարամետրերով 2 զուգահեռ ինվերտորային պոմպային համակարգեր (մեկը աշխատող մյուսը պահուստային): Պոմպային համակարգերի սնումը իրականացվում է ինչպես արտաքին ցանցից այնպես էլ 0.00 միշում նախատեսվող պաշարապահ ծավալից: Արտաքին ցանցում անհրաժեշտ ճնշում (ներանցման հատվածում 15մ) լինելու դեպքում ներքին ցանցի սնումը կարելի է իրականացնել պոմպային համակարգի շրջանցող գծով: Ջրամատակարարման ներքին ցանցը նախատեսվում է իրականացնել խմելու ջրի պոլիպրոպիլենային de32(PPR) -de20(PPR) ջերմային եռակցվող խողովակներով:

Ծինության տաք ջրամատակարարման համար շինության երկու կողմերում նախատեսվող սանհանգույցներից յուրաքանչյուրում նախատեսվել են մեկական 100լ տարողությամբ էլեկտրական ջրատաքացուցիչներ: Ջրամատակարարման ներքին ցանցը նախատեսվում է իրականացնել խմելու ջրի պոլիպրոպիլենային de25(PPR AL) -de20(PPR AL) խողովակներով:

Դաշտադեմ ամրոցի մասնակի հիմնանորոգում, թանգարանի հիմնում և հարակից տարածքի բարեկարգում		
Ամսաթիվ Մայիս 2023	ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱՉԴԵՑՈՒԹՅԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՅՏ	Վարկած Rev02

Ներքին հակահրդեհային համակարգ

Ծինության ներքին հակահրդեհային համակարգը նախագծվել է հաշվի առնելով ՀՀԾՆ 40-01.01-2014 պահանջները: Ծինության հակահրդեհային ջրամատակարարման ներքին ցանցը նախատեսվել է 2.5լ/վ հաշվարկային ելքով: Ծինության տարբեր հատվածներում նախատեսվել են 2 հատ հակահրդեհային պահարաններ՝ DN50 հակահրդեհային ծորակով, $L=20\text{մ}$ երկարությամբ $d=50\text{մմ}$ վուշե հակահրդեհային ճկափողով և ОП-10 փոշային կրակմարիչով: Հակահրդեհային ծորակների մոտ անհրաժեշտ ջրաքանակ և ճնշում ապահովելու համար 0.00 միշում նախատեսվել է 2.5մ^3 ծավալով պաշարապահ ծավալ և վերջինից սնվող $Q=9.0\text{մ}^3/\text{ժամ}$, $H=30\text{մ}$, $N=2 \times 1.5\text{կՎտ}$, $3 \times 400-480\text{Վ}$ պարամետրերով պոմպակայան երկու պոմպով (մեկը աշխատող մյուսը պահուստային, պոմպ $Q=0.25\text{լ/վ}$, $H=37\text{մ}$, $N=0.55\text{կՎտ}$, $2 \times 200-240\text{Վ}$ պարամետրերով):

Ջրահեռացման ներքին և արտաքին ցանցեր

Ջրահեռացման ներքին ցանցում ներառված են ինչպես կենցաղային կոյուղին, այպես էլ տարածքում նախատեսվող դրենաժային համակարգերը: Կենցաղային կոյուղու համակարգը նախատեսվում է իրականացնել կոյուղու պոլիվինիլքլորիդե de110(PVC) և de50(PVC) խողովակներով՝ ռետինե սեղմիչ օղակներով: Կենցաղային կոյուղու համակարգը նախատեսվում է իրականացնել 0.00 միշի հատակի միջով: Ծինության դրենաժային համակարգի համար նախատեսված են ջրհավաք առվակներ՝ մետաղական ճաղավանդակներով: Այս երկու համակարգերը միացվում են շինության երկու տարբեր հատվածներում նախատեսվող $1.0 \times 1.0 \times 1.0\text{մ}$ մ չափերով դրենաժային հորերին: Հորերի ներսում նախատեսվել են 2 հատ $Q=14\text{ մ}^3/\text{ժամ}$, $H=8.5\text{ մ}$, $N=780\text{ Վ}$ սուզապոմպեր (մեկը աշխատող, մյուսը պահուստային): Դրենաժային հորերից դուրս եկող կոյուղու ճնշումային հորերը միացվում են նախատեսվող կոյուղու արտաքին ցանցի ՆԴՀ-1 և ՆԴՀ-3 հորերին (տես **Նկար 5.8**):

Ջրահեռացման արտաքին ցանցի երկարությունը կազմում է 290մ : Այն նախատեսվում է իրականացնել կոյուղու պոլիէթիլենե de150(GF), SN8 խողովակներով: Կոյուղու արտաքին ցանցի կոլեկտորի վրա նախատեսվել են 11 հատ $D=1.0\text{մ}$ տրամագծով, $H=0.8-1.9\text{մ}$ բանվորական բարձրությամբ դիտահորեր: Կոյուղու կոլեկտորի ՆԴՀ-11 հորը միացվում է ամրոցի տարածքից դուրս նախատեսվող կոյուղու սեպտիկ հորերի համակարգին: Կոյուղու սեպտիկ համակարգը բաղկացած է երեք հորերից, որոնք de110(PVC) կողովակներով համապատասխան նիշերով միացվում են միմյանց: ՆՍՀ-1 և ՆՍՀ-2 հորերը իրենցից ներկայացնում են խտացման, պարզեցման և նստեցման հորեր: ՆՍՀ-2 հորը -1.85մ նիշում միացվում է ֆիտրող հորին և դրենաժային համակարգի խողովակներին:

Սեպտիկ հոր


Կոյուղաջրերի հավաքման և մաքրման համար ամրոցի մեծ պարսպից դուրս, մոտ 30մ հեռավորության վրա նախատեսվում է կառուցել սեպտիկ հոր՝ բաղկացած երկու պարզեցման խցից և մեկ կուտակիչ հորից: Սեպտիկ հորի լայնական կտրվածքը ներկայացված է ստորև **Նկար 5.8**-ում:

Սեպտիկ հորի ներքին պատերը ունենալու են հակակոռոզիոն մեկուսացում: Այն հագեցած է լինելու թուջե մտոցներով և օդափոխության խողովակներով՝ յուրաքանչյուր խցի համար մեկական թուջե մտոց և օդափոխության խողովակ: Սեպտիկ հորի պարզեցման խցերը, ինչպես նաև կուտակիչ հորը ունենալու են $2 \times 2 \times 4\text{ մ}$ չափեր՝ յուրաքանչյուրը զբաղեցնելով 16մ^3 ծավալ, հետևաբար 3 հորերը միասին կունենան 48 մ^3 ծավալ: Սեպտիկ հորի ընդհանուր մակերեսը 60մ^2 է:

Սեպտիկ հորի ծավալը հաշվարկելիս հաշվի է առնվել երեք օրվա ելքերի կուտակման հնարավորությունը յուրաքանչյուր խցում: Պարզեցման խցերից ՆՍՀ-1 հորի օգտակար ծավալը կազմում է 7.5մ^3 , իսկ ՆՍՀ-2 հորի ծավալը՝ 6.0մ^3 : Պարզեցնող խցերը՝ կեղտաջրերից անջատված զանգվածից/տիղմից մաքրումը իրականացվելու է 3 ամիսը մեկ անգամ՝ սեպտիկ հորերի մաքրմամբ զբաղվող մասնագի-

Դաշտադեմ ամրոցի մասնակի հիմնանորոգում, թանգարանի հիմնում և հարակից տարածքի բարեկարգում		
Ամսաթիվ Մայիս 2023	ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱՉԴԵՑՈՒԹՅԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՅՏ	Վարկած Rev02

տացված ընկերության կողմից: Մաքրման ընթացում նախատեսվում է պարզեցնող խցերում թողնել ակտիվ տիղմի 15%-ը: Պարզեցման արդյունքում գտված/մաքրված ջուրը ուղվելու է ամայի դաշտ:



Նկար 5.8. Սեպտիկ հորի լայնական կտրվածք

5.9 Բնառեսուրսների և շինարարական նյութերի ծախսը

Նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում պահանջվող բնառեսուրսները և հիմնական շինարարական նյութերը ամփոփված են **Աղյուսակ 5.2**-ում:

Աղյուսակ 5.2. Կառուցման համար պահանջվող բնառեսուրսները և շինարարական նյութերը

№	Բնառեսուրսի կամ շին. նյութի անվանումը	Չափման միավորը	Քանակը
1	Թանգարանի շենք		
1.1	Հողի բերրի շերտի հանում՝ ձեռքով	մ ³	27
1.2	Հողի մշակում մշակում III կարգի գրունտներում կողալիցքով էքսկ./ձեռքով	մ ³	1072
1.3	Բետոն (տարբեր մակնիշների)	մ ³	2000
1.4	Ամրան և այլ մետաղակոնստրուկցիա	տոննա	78.5
1.5	Վիտրամներ	մ ²	250
1.6	Խիճ, ավազ	մ ²	90
1.7	Ցանկապատման թիթեղ	գծամետր	250
1.8	Փայտանյութ	մ ³	6
1.9	Ներկեր և այլ քիմիական նյութեր	լ	470

Դաշտադեմ ամրոցի մասնակի հիմնանորոգում, թանգարանի հիմնում և հարակից տարածքի բարեկարգում		
Ամսաթիվ Մայիս 2023	ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱՉԴԵՑՈՒԹՅԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՅՏ	Վարկած Rev02

№	Բնառեսուրսի կամ շին. նյութի անվանումը	Չափման միավորը	Քանակը
1.10	Մալուխներ, էլեկտրահաղորդման լարեր	գծամետր	500
1.11	Ներքին հարդարման նյութեր	տոննա	4.5
1.12	Խողովակներ	գծամետր	300
1.13	Հողի հետլիցք	մ ³	5
1.14	Հողային զանգվածի տեղափոխում աղբավայր	մ ³	100.8
2	Ներքին սառը ջրամատակարարման համակարգի շին. աշխատանքների ծավալները		
2.1	PPR de 32 PN 10 պոլիպրոպիլեն խողովակների մոնտաժում	մ	15
2.2	PPR de 25 PN 10 պոլիպրոպիլեն խողովակների մոնտաժում	մ	90
2.3	PPR de 20 PN 10 պոլիպրոպիլեն խողովակների մոնտաժում	մ	30
2.4	PPR պոլիպրոպիլեն ձևավոր մասեր de 20-32 (եռաբաշխիչ, առմունկ, անցում)	հատ	65
2.5	Գնդիկավոր փական DN 25 PN 10	հատ	4
2.6	Գնդիկավոր փական DN 20 PN 10	հատ	4
2.7	de 32/ DN25 կցամաս	հատ	8
2.8	de 25/ DN20 կցամաս	հատ	8
2.9	գնդիկավոր փական DN 15 PN 10	հատ	9
2.10	Ճկուն խողովակ լվացարանի ծորակի և զուգարանակոնքի միացման համար (DN 10, L=0.8 մ)	հատ	10
3	Խմելու ջրի պոմպակայան և պաշարապահ բաք		
3.1	Ինվերտորային պոմպ Q=2.5մ ³ /ժամ, H=20մ, N=0.55կՎտ, 1 × 200-240Վ պարամետրերով 2 հատ (մեկը աշխատող, մյուսը պահուստային)	կոմպ.	2
3.2	Պաշարապահ բաք V=2.5մ ³ ծավալով	հատ	1
3.3	Գնդիկավոր փական DN 25, PN 10	հատ	2
3.4	Հակադարձ փական DN 25, PN 10	հատ	2
3.5	Լողանային փական DN 25, PN 10	հատ	1
3.6	de 32/ DN25 կցամաս	հատ	9
3.7	Մուֆտ DN50	հատ	1
4	Օժանդակ նյութեր և աշխատանքներ		
4.1	Ամրակալներ d=32 մմ (խողովակները ամրացնելու համար)	հատ	15
4.2	Ամրակալներ d=25 մմ (խողովակները ամրացնելու համար)	հատ	40
4.3	Ամրակալներ d=20 մմ (խողովակները ամրացնելու համար)	հատ	30
4.4	Ռետինե ջերմամեկուսիչ d=25 մմ (խողովակները ջերմամեկուսացման համար)	հատ	65
4.5	Ռետինե ջերմամեկուսիչ d=20 մմ (խողովակները ջերմամեկուսացման համար)	հատ	15
4.6	Համակարգի հիդրավլիկական փորձարկում, ախտահանում և լվացում	մ	135
5	Ներքին տաք ջրամատակարարման համակարգի շին. աշխատանքների ծավալներ		
5.1	Էլեկտրական ջրատաքացուցիչ, V=100լ ծավալով	հատ	2

Դաշտադեմ ամրոցի մասնակի հիմնանորոգում, թանգարանի հիմնում և հարակից տարածքի բարեկարգում		
Ամսաթիվ Մայիս 2023	ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱՉԴԵՑՈՒԹՅԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՅՏ	Վարկած Rev02

№	Բնառեսուրսի կամ շին. նյութի անվանումը	Չափման միավորը	Քանակը
5.2	PPR de 25 AL պոլիպրոպիլենե խողովակների մոնտաժում (տաք ջրի)	հատ	5
5.3	PPR de 20 AL պոլիպրոպիլենե խողովակների մոնտաժում (տաք ջրի)	մ	25
5.4	PPR պոլիպրոպիլենե ձևավոր մասեր de 20-25 (եռաբաշխիչ, առմունկ, անցում)	մ	54
5.5	Գնդիկավոր փական DN 20 PN 10	հատ	2
5.6	de 25/ DN20 կցամաս	հատ	4
5.7	Գնդիկավոր փական DN 15 PN 10	հատ	4
5.8	Ճկուն խողովակ լվացարանի ծորակի միացման համար (DN 10, L=0.8մ)	հատ	5
6	Սանիտարական սարքեր		
6.1	Չուգարանակոնքի մոնտաժում (հաշմանդամների համար սարքավորված)	հատ	2
6.2	Չուգարանակոնքի մոնտաժում	հատ	2
6.3	Լվացարանի մոնտաժում (խառնարանային ծորակով և շշաձև սիֆոնով)	հատ	4
6.4	Խոհանոցային երկխցանի լվացարանի մոնտաժում (խառնարանային ծորակով և շշաձև սիֆոնով)	հատ	1
7	Օժանդակ նյութեր և աշխատանքներ		
7.1	Ամրակալներ d=25 մմ (խողովակները ամրացնելու համար)	հատ	4
7.2	Ամրակալներ d=20 մմ (խողովակները ամրացնելու համար)	հատ	25
7.3	Ռետինե ջերմամեկուսիչ d=25 մմ (խողովակները ջերմամեկուսացման համար)	հատ	5
7.4	Ռետինե ջերմամեկուսիչ d=20 մմ (խողովակները ջերմամեկուսացման համար)	հատ	25
7.5	Համակարգի հիդրավլիկական փորձարկում, ախտահանում և լվացում	մ	30
8	Ներքին հակահրդեհային ջրամատակարարման համակարգի շին. աշխատանքների ծավալները		
8.1	Պողպատե DN 57×3.5 ջրագազատար խողովակ, երկշերտ հակակոռոզիան ներկումով	մ	31
8.2	Պողպատե DN 57×3.5 կարճախողովակ, միակողմանի պարուրակով, L=0.5մ	հատ	4
8.3	Պողպատե DN 50, PN 10 եռաբաշխիչ	հատ	6
8.4	ողպատե DN 50/DN 25, PN 10 անցումային եռաբաշխիչ	հատ	2
8.5	Պողպատե արմունկ DN 50, α=90°	հատ	8
8.6	Մետաղական պահարան 700×590×230մմ չափերով, ծորակների համար	հատ	2
8.7	Կրակմարիչ փոշիով ОП-10	հատ	2
8.8	Գնդային փական DN 50 (արագ միացման կցորդիչով)	հատ	8
8.9	Վուշե հրդեհային ճկափող d=50 մմ, L=20մ (արագ միացման	հատ	9

Դաշտադեմ ամրոցի մասնակի հիմնանորոգում, թանգարանի հիմնում և հարակից տարածքի բարեկարգում		
Ամսաթիվ Մայիս 2023	ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱՉԴԵՑՈՒԹՅԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՅՏ	Վարկած Rev02

№	Բնառեսուրսի կամ շին. նյութի անվանումը	Չափման միավորը	Քանակը
	կցորդիչով)		
8.10	Հրշեջ ծայրապնակ DN 50, 16մմ	հատ	10
9	Հակահրդեհային պոմպակայան		
9.1	Պոմպակայան Q=9.0մ³/ժամ, H=30մ, N=2×1.5կՎտ, 3×400-480Վ պարամետրերով 2 պոմպով (մեկը աշխատող մյուսը պահուստային) Grundfos CR 15-14 A-F-A-E-HQQE մակնիշի (առաջարվող*)	կոմպA	1
9.2	Ժոկեյ պոմպ Q=0.25 լ/վ, H=37մ, N=0.55կՎտ, 2×200-240Վ պարամետրերով Grundfos CMBE 1-44 I-U-C-D-D-A մակնիշի (առաջարվող*)	հատ	1
9.3	Հակահրդեհային համակարգի ղեկավարման վահանակ էլ. պաշտպանությունով 2×1.5կՎտ+1 x0.55կՎտ (առաջարվող*)	հատ	1
9.4	Սողնակ DN 50, PN 10	հատ	3
9.5	Հակադարձ փական DN 50, PN 10	հատ	2
9.6	Գնդային փական DN 25, PN 10 (էգ)	հատ	1
9.7	Հակադարձ փական DN 25, PN 10 (էգ)	հատ	1
9.8	Ճկուն միացում DN 50, PN 10	հատ	2
9.9	Պողպատե կցաշուրթ DN 50, PN 10	հատ	15
9.10	Պողպատե խցափակիչ DN 50, PN 10	հատ	3
9.11	Պողպատե կարճախողովակ միակողմանի պարուրակով DN 25, PN 10, L=0.3մ	հատ	4
9.12	Պողպատե կարճախողովակ երկկողմանի պարուրակով DN 25, PN 10, L=0.3մ	հատ	4
10	Օժանդակ նյութեր և աշխատանքներ		
10.1	Ամրակալներ d=57մմ (խողովակները ամրացնելու համար)	հատ	33
10.2	Համակարգի հիդրավլիկական փորձարկում և լվացում	մ	34
11	Ներքին ջրահեռացման համակարգի շին. աշխատանքների ծավալներ		
	Կենցաղային կոյուղի		
11.1	Կոյուղու պոլիվինիլքլորիդե խողովակ ռետինե սեղմիչ օղակներով d=110×3.2մմ	մ	18
11.2	Կոյուղու պոլիվինիլքլորիդե խողովակ ռետինե սեղմիչ օղակներով d=50×1.8մմ	մ	10
11.3	Եռաբաշխիչ 110/110 α=135°	հատ	2
11.4	Եռաբաշխիչ 110/50 α=135°	հատ	4
11.5	Եռաբաշխիչ 50/50 α=135°	հատ	3
11.6	Անկյունակ 110, α=90°	հատ	1
11.7	Անկյունակ 110, α=135°	հատ	7
11.8	Անկյունակ 50, α=90°	հատ	3
11.9	Անկյունակ 50, α=135°	հատ	16
11.10	Ճկուն միացում d=110մմ, զուգարանակոնքի միացման համար (гоффа)	հատ	4

Դաշտադեմ ամրոցի մասնակի հիմնանորոգում, թանգարանի հիմնում և հարակից տարածքի բարեկարգում		
Ամսաթիվ Մայիս 2023	ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱՉԴԵՑՈՒԹՅԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՅՏ	Վարկած Rev02

№	Բնառեսուրսի կամ շին. նյութի անվանումը	Չափման միավորը	Քանակը
11.11	Ճկուն միացում d=50մմ, լվացարանի միացման համար (гофра)	հատ	5
11.12	Արձնապատ հոսակ d=100մմ	հատ	1
11.13	Արձնապատ հոսակ d=50մմ	հատ	3
12	Դրենաժային համակարգ		
12.1	Կոյուղու պոլիվինիլքլորիդե խողովակ ռետինե սեղմիչ օղակներով d=160×4.0մմ	մ	30
12.2	Անկյունակ 160, α=135°	հատ	10
12.3	Մետաղական ճաղավանդակ "Standart 200 ВЧ целевая - ГидроПрупп", L=0.5մ	հատ	140
13	Դրենաժային պոմպին համակարգեր		
13.1	Դրենաժային պոպ GRUNDFOS UNILIFT CC9 A1 Q=14 մ³/ժամ, H=8.5մ, N=780Վտ	հատ	4
13.2	Հակադարձ կափյուր de 40, PN 10	հատ	2
13.3	Գնդային փական de 40, PN 10	հատ	4
13.4	Կցամաս de 40, PN 10	հատ	16
13.5	Պոլիէթիլենե խողովակ de 40(PE), PN 10	մ	3
13.6	Պոլիէթիլենե խողովակ de 63(PE), PN 10	մ	6
13.7	Պոլիէթիլենե եռաբաշխիչ de 40(PE), PN 10	հատ	2
13.8	Պոլիէթիլենե արմունկ de 40(PE), PN 10, α=90°	հատ	4
13.9	Պոլիէթիլենե արմունկ de 63(PE), PN 10, α=90°	հատ	4
13.10	Պոլիէթիլենե անցում de 63(PE)/de 40(PE), PN 10	հատ	2
13.11	Կոյուղու պոլիվինիլքլորիդե խողովակ ռետինե սեղմիչ օղակներով d=50×1.8մմ	մ	8
13.12	Անկյունակ 50, α=90°	հատ	1
14	Օժանդակ նյութեր և աշխատանքներ		
14.1	Ամրակալներ d=63մմ (խողովակները ամրացնելու համար)	հատ	6
14.2	Ամրակալներ d=50մմ (խողովակները ամրացնելու համար)	հատ	9
14.3	Համակարգի հիդրավիկական փորձարկում	մ	67
15	Մեպտիկ համակարգի շին. աշխատանքների ծավալներ		
15.1	Ամրակալներ d=63մմ (խողովակները ամրացնելու համար)	մ³	220/30
15.2	Ամրակալներ d=50մմ (խողովակները ամրացնելու համար)	մ³	27.3
15.3	Համակարգի հիդրավիկական փորձարկում	մ³	22.7
15.4	Ամրակալներ d=63մմ (խողովակները ամրացնելու համար)	մ	60
15.5	Ամրակալներ d=50մմ (խողովակները ամրացնելու համար)	հատ	150
15.6	Համակարգի հիդրավիկական փորձարկում	հատ	3
15.7	Ամրակալներ d=63մմ (խողովակները ամրացնելու համար)	հատ	1
15.8	Ամրակալներ d=50մմ (խողովակները ամրացնելու համար)	հատ	3

Դաշտադեմ ամրոցի մասնակի հիմնանորոգում, թանգարանի հիմնում և հարակից տարածքի բարեկարգում		
Ամսաթիվ Մայիս 2023	ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱՉԴԵՑՈՒԹՅԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՅՏ	Վարկած Rev02

№	Բնառեսուրսի կամ շին. նյութի անվանումը	Չափման միավորը	Քանակը
15.9	Համակարգի հիդրավլիկական փորձարկում	հատ	12
15.10	Ամրակալներ d=63մմ (խողովակները ամրացնելու համար)	հատ	3
15.11	Ամրակալներ d=50մմ (խողովակները ամրացնելու համար)	հատ	3
15.12	Համակարգի հիդրավլիկական փորձարկում	տ	0.182
15.13	Ամրակալներ d=63մմ (խողովակները ամրացնելու համար)	մ ³	159.5
15.14	Ամրակալներ d=50մմ (խողովակները ամրացնելու համար)	մ ³	90.5
15.15	Համակարգի հիդրավլիկական փորձարկում	մ	3
15.16	Ամրակալներ d=63մմ (խողովակները ամրացնելու համար)	մ ³	37.8
16	Կոյուղու K1 կոլեկտորի շին. աշխատանքների ծավալներ		
16.1	Խրամուղու մշակում V կարգի գրունտներում ձեռքով՝ կողալիցքով	մ ³	370/850
16.2	Խրամուղու մշակում V կարգի գրունտներում ձեռքով՝ բարձելով ա/մ	մ ³ /տ	120/280
16.3	Փափուկ ավազի բարձում և տեղափոխում, 12 կմ հեռ.	մ ³	100
16.4	Նախաշերտի իրականացում ձեռքով բերովի փափուկ ավազից	մ ³	21
16.5	Կոյուղու ծալքավոր պոլիէթիլեն de 150 (GF) SN8 խողովակի մոնտաժում	մ	280
16.6	Կոյուղու ծալքավոր պոլիէթիլեն de 150 (PVC) խողովակի մոնտաժում	մ	2
16.7	Խճի նախաշերտի իրականացում դիտահորերի տակ	մ ³ / մ ²	25/2.5
16.8	Կոյուղու հորի հատակի սալ ՀՄ -10	հատ	11
16.9	Կոյուղու հորի առվակի բետոնացում B 15 դասի բետոնով	մ ³	4
16.10	Կոյուղու հորի պատի օղակ ՊՕ-10-6	հատ	4
16.11	Կոյուղու հորի պատի օղակ ՊՕ -10-9	հատ	9
16.12	Կոյուղու հորի ծածկի սալ ԾՄ 1-10-2	հատ	11
16.13	Հենման օղակ ՀՕ - 1 (Մ տիպի թուջե մտոցով)	հատ	11
16.14	Կոյուղու հորի ամրացման մետաղական մասեր	տ	0.09
16.15	Համակարգի հիդրավլիկ փորձարկում	մ	292
16.16	Հորերի արտաքին մակերևույթի ջրամեկուսացում	մ ²	42
16.17	Պաշտպանիչ շերտի իրականացում ձեռքով բերովի ավազից	մ ³	79
16.18	Խրամուղու հետլիցք և հարթակի ստեղծում կողալիցքի գրունտով, տոփանումով	մ ³	370
16.19	Ավելցուկային բնահողի տեղափոխում 7.0կմ	մ ³	120/280
17	Կոյուղու ճնշումային թողարկների շին. աշխատանքների ծավալներ		
17.1	Խրամուղու մշակում V կարգի գրունտներում ձեռքով՝ կողալիցքով	մ ³	32/75
17.2	Խրամուղու մշակում V կարգի գրունտներում ձեռքով՝ բարձելով ա/մ	մ ³ /տ	11/25
17.3	Փափուկ ավազի բարձում և տեղափոխում, 12 կմ հեռ.	մ ³	10.5

Դաշտադեմ ամրոցի մասնակի հիմնանորոգում, թանգարանի հիմնում և հարակից տարածքի բարեկարգում		
Ամսաթիվ Մայիս 2023	ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱՉԴԵՑՈՒԹՅԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՅՏ	Վարկած Rev02

№	Բնառեսուրսի կամ շին. նյութի անվանումը	Չափման միավորը	Քանակը
17.4	Նախաշերտի իրականացում ձեռքով բերովի փափուկ ավազից	մ ³	2.5
17.5	Կոյուղու պոլիէթիլեն de 63 (PE) խողովակի մոնտաժում	մ	50
17.6	Համակարգի հիդրավիկ փորձարկում	մ	50
17.7	Պաշտպանիչ շերտի իրականացում ձեռքով բերովի ավազից	մ ³	8
17.8	Խրամուղու հետլիցք և հարթակի ստեղծում կողալիցքի գրուտով, տոփանումով	մ ³	32
17.9	Ավելցուկային բնահողի բարձում և տեղափոխում, 7.0կմ	մ ³	11/25
18	Նախատեսվող W 1 ջրագծի շին. աշխատանքների ծավալները		
18.1	Խրամուղու մշակում V կարգի գրունտներում ձեռքով՝ կողալիցքով	մ ³ /տ	106/240
18.2	Խրամուղու մշակում V կարգի գրունտներում ձեռքով՝ բարձելով ա/մ	մ ³ /տ	29/67
18.3	Փափուկ ավազի բարձում և տեղափոխում, 12 կմ հեռ.	մ ³	27
18.4	Նախաշերտի իրականացում ձեռքով բերովի փափուկ ավազից	մ ³	8
18.5	Հորի հատակի տակ խճի նախապատրաստական շերտի իրականացում	մ ² / մ ³	2.25/0.2
18.6	Հորի ՀՍ-10 հատակի սալի տեղադրում խրամուղում	հատ	1
18.7	Հորի ՊՕ-10- 9 պատի օղակի մոնտաժում	հատ	1
18.8	Հորի ԾՍ-10-2 ծածկի սալի մոնտաժում	հատ	1
18.9	Հենման օղակ ՀՕ - 1 (Մ տիպի թուջե մտոցով)	հատ	1
18.10	Մետաղական էլեմենտներ	կգ	10
18.11	Պողպատե պատյան խողովակ DN 219x5.0 (St)	մ	14.5
18.12	de 32(PE) PN 10 պոլիէթիլեն խողովակների մոնտաժում	մ	136
18.13	Ջրի ֆիլտր de20 PN 10	հատ	1
18.14	Ջրաչափ de20 PN 10	հատ	1
18.15	Կցորդիչ pe/st, de32/DN20	հատ	1
18.16	Կցորդիչ pe/st, de25/DN20	հատ	1
18.17	Գոտի միացում de63/ de63	հատ	1
18.18	Համակարգի հիդրավիկ փորձարկում	մ	136
18.19	Պաշտպանիչ շերտի իրականացում ձեռքով բերովի ավազից	մ ³	19
18.20	Խրամուղու հետլիցք և հարթակի ստեղծում կողալիցքի գրուտով, տոփանումով	մ ³	106
18.21	Ավելցուկային գրունտի տեղափոխում	մ ³	29/67

5.10 Հողային աշխատանքներ

Ամրոցի մասնակի հիմնանորոգման, թանգարանի հիմնման և հարակից տարածքի բարեկարգման աշխատանքների ընթացքում իրականացվելու են հողային աշխատանքներ: Հողային աշխատանքների ընդհանուր ծավալները ներկայացված են ստորև **Աղյուսակ 5.3**-ում:

Դաշտադեմ ամրոցի մասնակի հիմնանորոգում, թանգարանի հիմնում և հարակից տարածքի բարեկարգում		
Ամսաթիվ Մայիս 2023	ԾՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱՉԴԵՑՈՒԹՅԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՅՏ	Վարկած Rev02

Աղյուսակ 5.3. Ապամոնտաժման և կառուցման ընթացքում իրականացվող հողային աշխատանքները

№	Իրականացվող աշխատանք	Քանակը	Միավոր
Ապամոնտաժում			
1	Կիսաքանդ կառույց (161.99 մ ²)		
1.1	Պատերի քանդում	278	մ ³
1.2	Հիմքերի քանդում	54	մ ³
1.3	Հողային հանույթ	137	մ ³
1.4	Հետլիցք	137	մ ³
2	"Խանի պալատ" (288 մ ²)		
2.1	Պատերի քանդում	295	մ ³
2.2	Հիմքերի քանդում	40	մ ³
2.3	Հողային հանույթ	378	մ ³
2.4	Հետլիցք	378	մ ³
3	Ընդամենը		
3.1	Պատերի քանդում	573	մ³
3.2	Հիմքերի քանդում	94	մ³
3.3	Հողային հանույթ	515	մ³
3.4	Հետլիցք	515	մ³
Կառուցում			
4	Թանգարան (1072 մ ²)		
4.1	Հողային հանույթ	2931	մ ³
4.2	Հողի բերրի շերտ	10	մ ³
4.3	Հետլիցք	325	մ ³
4.4	Հողի բերրի շերտի օգտագործում	10	մ ³
4.5	Հողային զանգվածի տեղափոխում աղբավայր	2606	մ ³
5	Քայլուղի (664 մ ²)		
5.1	Հողային հանույթ	105.8	մ ³
5.2	Հողի բերրի շերտ	27	մ ³
5.3	Հետլիցք	5	մ ³
5.4	Հողի բերրի շերտի օգտագործում	27	մ ³
5.5	Հողային զանգվածի տեղափոխում աղբավայր	100.8	մ ³
6	Ներքին քայլուղի (1360 մ ²)		
6.1	Հողի փխրեցում ձեռքով	204	մ ³
7	Սեպտիկ հոր (60 մ ²)		
7.1	Հողային հանույթ	220	մ ³
7.2	Հետլիցք	159.5	մ ³
7.3	Հողային զանգվածի տեղափոխում աղբավայր	60.5	մ ³
8	Կոյուղագիծ (115 մ ² /290 մ)		
8.1	Հողային հանույթ	533	մ ³
8.2	Հետլիցք	402	մ ³

Դաշտադեմ ամրոցի մասնակի հիմնանորոգում, թանգարանի հիմնում և հարակից տարածքի բարեկարգում		
Ամսաթիվ Մայիս 2023	ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱՉԴԵՑՈՒԹՅԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՅՏ	Վարկած Rev02

№	Իրականացվող աշխատանք	Քանակը	Միավոր
8.3	Հողային զանգվածի տեղափոխում աղբավայր	131	մ ³
9	Ջրագիծ (50 մ ² /136 մ)		
9.1	Հողային հանույթ	135	մ ³
9.2	Հեռվիցք	106	մ ³
9.3	Հողային զանգվածի տեղափոխում աղբավայր	29	մ ³
10	Ընդամենը		
10.1	Հողային հանույթ	3924.8	մ³
10.2	Հողի բերրի շերտ	37	մ³
10.3	Հեռվիցք	997.5	մ³
10.4	Հողի բերրի շերտի հեռվիցք	37	մ³
10.5	Հողային զանգվածի տեղափոխում աղբավայր	2927.3	մ³

Վերը նշված **Աղյուսակ 5.3**-ի համաձայն՝ ապամոնտաժման աշխատանքների արդյունքում փորվելու է 515մ³ ծավալի հող, ինչը ամբողջությամբ օգտագործվելու է փորված հատվածներում հետցման համար: Նույն աղյուսակի համաձայն՝ կառուցման աշխատանքների արդյունքում փորվելու է 3924.8մ³ ծավալի հող, որից 37մ³ ծավալի հողը բերրի շերտն է: Փորված ամբողջ ծավալի հողից 997.5մ³ ծավալը օգտագործվելու է հետցման համար, իսկ 2927.3մ³ ծավալով հողը տեղափոխվելու է մոտակա աղբավայր: Հողի բերրի շերտը ամբողջությամբ օգտագործվելու է տարածքի հարթեցման աշխատանքների համար, որպես հողի վերին շերտ:

Հողային աշխատանքներն ընթանալու են շին. տեխնիկայի օգնությամբ (տես **Աղյուսակ 5.5**-ը): Մասամբ դժվարհասանելի վայրերում, ինչպես նաև շին. տեխնիկայի մուտքը չին. տարածք նվազեցնելու նպատակով հողային աշխատանքները իրականացվելու են նաև ձեռքով:

Դաշտադեմ ամրոցի տարածքում իրականացվող հողային զանգվածի քարտեզագիրը՝ քանդման և ապամոնտաժման ենթակա կառույցներով ներկայացված է **Հավելված 4**-ում:

5.11 Հողի բերրի շերտի հեռացումը և ժամանակավոր պահումը

Մինչ շինարարական աշխատանքների մեկնարկը մոտ 37մ³ ծավալով հողի բերրի շերտը ժամանակավորապես պահվելու է նախատեսվող գործունեության տարածքի հարավային մասում՝ ծածկված անջրաթափանց թաղանթով՝ ապահովելով ՀՀ կառավարության №1396-Ն¹ և №1404-Ն² որոշումների պահանջները: Կուտակված հողի բերրի շերտը օգտագործվելու է ամրոցի տարածքի հետագա բարեկարգման աշխատանքների ժամանակ:

5.12 Բարեկարգման աշխատանքներ

Տարածքի բարեկարգման աշխատանքների շրջանակներում բարեկարգվելու է ամրոցի ներսում գտնվող այն հատվածները որոնք տանելու են դեպի թանգարանային շենք և միջնաբերդի դղյակ (տես **Հավելված 8**): Մեծ պարիսպների ներսում ստեղծվելու են քայլուղիներ (տես **Հավելված 7**) և հանգստի հարթակներ: Տարածքում տեղադրվելու են տեղեկատվական և գրոսաշրջիկներին ուղղորդող ցուցանակներ, կազմակերպվելու է տարածքի արտաքին լուսավորությունը: Ամրոցի գլխավոր մուտքին հարող տարածքում իրականացվելու է հուշարձանին և կայանատեղիին մոտեց-

¹<https://www.arlis.am/documentview.aspx?docID=71439>

²<https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=117360>

Դաշտադեմ ամրոցի մասնակի հիմնանորոգում, թանգարանի հիմնում և հարակից տարածքի բարեկարգում		
Ամսաթիվ Մայիս 2023	ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱՉԴԵՑՈՒԹՅԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՅՏ	Վարկած Rev02

նող ճանապարհի վերականգնման և բարեկարգման աշխատանքներ (տես **Նկար 5.7**): Ամրոցի պահպանման մակարդակի բարձրացման նպատակով իրականացվելու են դղյակի, միջնաբերդի, միջնաբերդը շրջապատող առաջին և երկրորդ պարսպապատերի և այլ կառույցների վնասված հատվածների վերականգնման և ամրակայման աշխատանքներ:

5.13 Վերականգնման, վերակառուցման և ամրակայման աշխատանքներ

Ամրոցի պահպանման մակարդակի բարձրացման նպատակով (դղյակի, միջնաբերդի, միջնաբերդը շրջապատող առաջին և երկրորդ պարսպապատերի և այլ կառույցների վնասված հատվածների վերականգնում, ամրակայում) վերականգնման աշխատանքների շրջանակներում իրականացվելու են՝

- Մեծ պարսպի գլխավոր մուտքի վերանորոգման և ամրակայման աշխատանքներ,
- «Դարբնոցային» հատվածում իրականացվելու են փլատակների մաքրում և պահպանված պատերի ամրակայման աշխատանքներ,
- Իրականացվելու են ամրոցի արևմտյան մասում գտնվող արտաքին մեծ պարիսպների ամբողջական վերականգնման աշխատանքներ,
- Ճաղավանդակներով փակվելու են 3-րդ և 4-րդ աշտարակների միջև փլուզված հատվածը՝ մարդկանց և տնային կենդանիների շարժը սահմանափակելու համար,
- Միջնաբերդի մուտքի մետաղական դուռը փոխարինվելու, իսկ մուտքը մասնակի վերանորոգվելու է,
- Միջնաբերդի 3-րդ աշտարակի հարկայնությունը վերականգնվելու է փայտե գերանների և տախտակամածի միջոցով,
- Իրականացվելու է ջրամբարի տանիքաձածկույթի վերականգնում, ներքին պատերի կրաշաղախի վերականգնում և ջրամբար իջնող աստիճանի տեղադրում:

Վերը թվարկված աշխատանքների տեղադիրքերը ներկայացված են **Հավելված 8**-ում:

5.14 Ժամանակացույցը

Տեխնոլոգիական առանձնահատկություններից և տեղայնքից ելնելով՝ շինարարության տևողությունը մեկնարկման օրվանից հաշվարկված կազմելու է 14 ամիս: Աշխատանքների իրականացման ժամանակացույցային գրաֆիկը ըստ իրականացվող փուլերի ներկայացված է ստորև **Աղյուսակ 5.4**-ում:

Աղյուսակ 5.4. Աշխատանքների իրականացման ժամանակացույցը

Փուլեր	Ամիսներ													
	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14
Փուլ I - Նախապատրաստական աշխատանքներ և շին. հրապարակի կազմակերպում														
Փուլ II - Ապամոնտաժման աշխատանքներ														
Փուլ III - Հողային աշխատանքների իրականացում														
Փուլ IV - Կառուցման աշխատանքներ														
Փուլ V - Մոնտաժման աշխատանքներ														
Փուլ VI - Տարածքի մաքրում և բարեկարգում														

Դաշտադեմ ամրոցի մասնակի հիմնանորոգում, թանգարանի հիմնում և հարակից տարածքի բարեկարգում		
Ամսաթիվ Մայիս 2023	ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱՉԴԵՑՈՒԹՅԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՅՏ	Վարկած Rev02

5.15 Օգտագործվող մեխանիզմները և տեխնիկան

Դաշտադեմ ամրոցի մասնակի հիմնանորոգման, թանգարանի հիմնման և հարակից տարածքների բարեկարգման համար անհրաժեշտ շինարարական սարքավորումների, մեխանիզմների և տեխնիկայի պահանջարկը որոշվում է աշխատանքների ծավալների, մեխանիզմների և մեքենաների միջին արտադրողականության և աշխատանքների կատարմամբ ընտրված եղանակների հիման վրա: Հիմնական մեխանիզմների և տեխնիկայի անվանացանկը և քանակները բերված են **Աղյուսակ 5.5-ում**:

Աղյուսակ 5.5. Շինարարական մեքենաների և մեխանիզմների անվանացանկը և քանակները

№	Անվանումը	Մակնիշը	Քանակը
1	Թրթուրավոր էքսկավատոր	Caterpillar 432 F	1
2	Բուլդոզեր	ДТ-75 ДРС2	1
3	Շարժական կոմպրեսոր	ЗИФ-55В	1
4	Վերամբարձ ավտոկրունկ	КС-55744	1
5	Տոփանիչ	CR 3/60	4
6	Հղկող մեքենա	Иэ-2201	6
7	Թրթռազլողոն	HAMI 3410	1
8	Եռակցման ագրերգատ		1
9	Էլեկտրական հարվածային մուրճ		1
10	Բետոնամուղ պոմպ		1
11	Ավտոբետոնախառնիչ	СБ-69Б	Հաշվարկով
12	Ավտոբետոնատար	КрА3-65055	Հաշվարկով
13	Ինքնաթափ մեքենա	МА3-5550	Հաշվարկով

Նաև շինարարության ընթացքում կիրառվելու են ձեռքի էլեկտրական, մեխանիկական, ատաղձագործական և ներկարարական գործիքներ:

5.16 Աշխատուժը

Ամրոցի մասնակի հիմնանորոգման, այլ շինությունների կառուցման և տարածքների բարեկարգման համար ներգրավվելու են 17 աշխատող, այդ թվում՝

- Ինժեներատեխնիկական անձնակազմ - 1 մարդ,
- Արհեստագործներ և բանվորներ - 12 մարդ,
- Վարորդներ և մեքենավարներ - 4 մարդ:

5.17

5.17 Ջրօգտագործումը և ջրահեռացումը

Խմելու տնտեսական որակի ջուրը օգտագործվելու է աշխատողների սանիտարահիգիենիկ կարիքները հոգալու համար: Աշխատանքային նախագծով նախատեսվում է թանգարանի շենքերի և դրանում գործող սանհանգույցների համար իրականացնել ինժեներական ենթակառուցվածքի

Դաշտադեմ ամրոցի մասնակի հիմնանորոգում, թանգարանի հիմնում և հարակից տարածքի բարեկարգում		
Ամսաթիվ Մայիս 2023	ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱՉԴԵՑՈՒԹՅԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՅՏ	Վարկած Rev02

արտաքին և ներքին համակարգերի՝ ջրամատակարարման գծի, կոյուղագծի, կոյուղու սեպտիկ հորի տեղադրման աշխատանքներ:

Նոր ջրագիծը սկիզբ է առնելու ամրոցի մուտքի հարևանությամբ գտնվող ջրագծից: Այն ուղղվելու է դեպի թանգարանի շենք: Նոր ջրագծի երկարությունը մոտ 136մ է:

Նոր կոյուղագիծը անցկացվելու է ամրոցի մուտքի հարևանությամբ գտնվող տոմսավաճառի սան-հանգույցի կետից՝ ուղղվելով դեպի թանգարանի շենք: Թանգարանի շենքից կոյուղագիծը ուղղվելու է դեպի ամրոցի մեծ պարսպի հարավային հատվածից դուրս գտնվող սեպտիկ հոր: Սեպտիկ հորից վնասագերծված/մաքրված ջուրը ուղղվելու է դեպի ամայի դաշտ: Որպես այլընտրանք դիտարկվում է նաև մասնագիտացված կազմակերպության կողմից սեպտիկ հորերում հավաքված կեղտաջրերի պարբերական հեռացման տարբերակը: Կոյուղագծի ընդհանուր երկարությունը 290մ է:

Կոյուղաջրերի հավաքման և մաքրման համար ամրոցի մեծ պարսպից դուրս, մոտ 30մ հեռավորության վրա նախատեսվում է կառուցել սեպտիկ հոր՝ բաղկացած երկու պարզեցման խցից և մեկ կուտակիչ հորից: Սեպտիկ հորի նկարագիրը և լայնական կտրվածքը ներկայացված է **Նկար 5.8**-ում:

Նախատեսվող գործունեության տարածքում նոր ջրագծի և կոյուղագծի անցկացման գծերի վայրերը, ինչպես նաև սեպտիկ հորի և խմելու ջրի ջրառի տեղադիրքերը ներկայացված են **Հավելված 9**-ում:

Մթնոլորտային տեղումների ժամանակ առաջացած հեղեղաջրերի հավաքման և ամրոցի տարածքից հեռացման համար ամրոցի ներսում՝ մեծ պարսպի պարագծով, նախատեսվում է անցկացնել ջրատար առու, որը նույնպես ուղղվելու է ամրոցի մեծ պարսպի տարածքից դուրս՝ ամայի դաշտ:

Ծինարարության փուլում անհրաժեշտ ջուրը բերվելու է կապալառու կազմակերպության կողմից՝ տարողություններով և օգտագործվելու է հողային աշխատանքների ժամանակ շին. հրապարակի ջրցանի իրականացման և շին.տեխնիկայի անիվների լվացման համար: Հողային աշխատանքների փուլում (Փուլ III, տես **Աղյուսակ 5.3**)՝ 6 ամիսների ընթացքում, ընդհանուր առմամբ ծախսվելու է 90 մ³ ջուր (օրական ծախսը կազմում է 0.5մ³):

Խմելու և սանիտարահիգիենիկ ջրապահանջը շինարարության ողջ ընթացքի համար հաշվարկվել է համաձայն **[3]** փաստաթղթի, հաշվի առնելով, որ՝

- Մեկ բանվորական աշխատողի ջրածախսը՝ 25լ/օր,
- Մեկ վարչական աշխատողի կամ ԻՏԱ ջրածախսը՝ 16լ/օր:

Նախատեսվող գործունեության իրականացման փուլում ջրօգտագործման և ջրահեռացման հաշվարկը ամփոփված է **Աղյուսակ 5.6**-ում:

Աղյուսակ 5.6. Ջրօգտագործման և ջրահեռացման հաշվարկների արդյունքները

№	Ջրօգտագործման/ջրահեռացման հոդվածը	Նորմը, մ ³ /օր	Հաշվարկի ելակետային տվյալները	Ծին. ժամանակահատվածը, օր	Ընդհանուր ծախսը, մ ³
1	Խմելու և սանիտարահիգիենիկ կարիքներ				141.77

³СНиП 2.04.01-85. Внутренний водопровод и канализация зданий. Системы внутреннего холодного и горячего водоснабжения.

Դաշտադեմ ամրոցի մասնակի հիմնանորոգում, թանգարանի հիմնում և հարակից տարածքի բարեկարգում		
Ամսաթիվ Մայիս 2023	ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱՉԴԵՑՈՒԹՅԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՅՏ	Վարկած Rev02

№	Ջրագործման/ջրահեռացման հոդվածը	Նորմը, մ ³ /օր	Հաշվարկի ելակետային տվյալները	Շին. ժամանակահատվածը, օր	Ընդհանուր ծախսը, մ ³
1.1	Բանվոր	0.025	16 աշխատող	340.8*	136.32
1.2	Վարչական աշխատող/ԻՏԱ	0.016	1 աշխատող	340.8*	5.45
2	Շին. հրապարակի ջրցան	0.5		180**	90.0
3	Անիվների լվացում	0.1	1	340.8*	34.08
Ջրագործում, մ³					265.85
4	Սանիտարակենցաղային կեղտաջրեր				139.64
Ջրահեռացում, մ³					139.64

*16 ամիս × 21.3 օր (1 ամսում աշխատանքային օրերի միջին թիվը) ≈ 340.8 օր

**Շին. հրապարակի ջրցանի ժամանակաշրջան

Շահագործման փուլում ջրամատակարարման և ջրահեռացման հաշվարկային ելքերը ներկայացված են ստորև **Աղյուսակ 5.7**-ում:

Աղյուսակ 5.7. Շահագործման փուլում ջրամատակարարման և ջրահեռացման հաշվարկային ելքերը

№	Համակարգի անվանումը	Հաշվարկային ելքեր		
		մ ³ /օր	մ ³ /ժամ	լ/վրկ
1	Ջրամատակարարում	2.1	0.51	0.68
2	Ջրահեռացում	2.07	0.5	0.67

5.18 Ժամանակավոր պաշտպանական կառույց

Պատերազմական և արտակարգ իրավիճակներում ամրոցի տարածքում աշխատողների և այցելուների քաղաքացիական պաշտպանությունը ապահովելու նպատակով որպես ժամանակավոր պաշտպանական կառույց նախատեսված է օգտագործել թանգարանի շենքը, որը կառուցվելու է գետնի տակ և ունենալու է 0.00=1438.15 բացարձակ նիշ՝ 3.15 մ ներքև մուտքի հատվածի նիշից:

Ժամանակավոր պաշտպանական կառույցը բավարարելու է ՀՀԾՆ 31-03.02-2022 **Հայաստանի Հանրապետության քաղաքացիական պաշտպանության պաշտպանական կառույցներ** շինարարական նորմերի պահանջները⁴:

5.19 Աշխատանքի անվտանգությունը

Նախատեսվող աշխատանքների իրականացման համար ընտրված կապալառու կազմակերպությունը (ներառյալ իր ենթակապալառուները) մինչ շինարարական աշխատանքների մեկնարկը, պետք է մշակի շինարարական աշխատանքների աշխատանքի անվտանգության կառավարման պլան, որում առնվազն պետք է ներառվեն՝

- 1) Աշխատանքների և աշխատաքային գոտիների ֆիզիկական ռիսկերը (աղմուկ, թրթռում, թունավորում, շարժվող մեխանիզմներ, էլեկտրական հարված, սայթակում և այլն),

⁴<http://www.irtek.am/views/act.aspx?aid=115326>

Դաշտադեմ ամբողջի մասնակի հիմնանորոգում, թանգարանի հիմնում և հարակից տարածքի բարեկարգում		
Ամսաթիվ Մայիս 2023	ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱՉԴԵՑՈՒԹՅԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՅՏ	Վարկած Rev02

- 2) Հնարավոր արտակարգ իրավիճակները (հրդեհ, վնասվածք և այլն) և դրանց արագ հակազդման գործողությունները,
- 3) Աշխատանքներին ներգրավված անձանց աշխատանքի անվտանգության ոլորտում պարտավորությունները և պատասխանատվությունը,
- 4) Ուսուցման և հրահանգավորման թեմաները ու դրանց իրականացման պարբերությունը և ժամանակացույցը (նախնական, աշխատատեղում, կրկնվող, նպատակային),
- 5) Անձնակազմի հատուկ և կոլեկտիվ պաշտպանության միջոցները,
- 6) Կրակմարիչների տեղադրման վայրերը և անհրաժեշտ քանակները,
- 7) Առաջին բուժ. օգնության մոտակա բժշկական հաստատությունները,
- 8) Քիմիական նյութերի հետ վարվելու ընթացակարգը,
- 9) Շին. տեխնիկայի և տրասնպորտային միջոցների անվտանգ տեղաշարժման ուղիները,
- 10) Շին. հրապարակի աշխատանքի և հրդեհային անվտանգության ստուգայցները, ուղղիչ միջոցառումների վերացմանը միտված միջոցառումները,
- 11) Առավել վտանգավոր աշխատանքների անվտանգ իրականացման ընթացակարգը,
- 12) Աշխատանքի պաշտպանության մշտադիտարկման մեթոդները:

Նախատեսվող գործունեության բաղադրիչների անվտանգ իրականացումը և ներգրավված անձնակազմի առողջությունը ապահովելու նպատակով կմշակվի նաև դաշտային աշխատանքների անվտանգության պլան, որտեղ ամփոփված կլինեն աշխատանքի պաշտպանության համար անհրաժեշտ անձանց և հաստատությունների կոնտակտային տվյալները, կրակմարիչների, պաշտպանության և անվտանգության այլ միջոցների տեղադրման վայրերը, հակավթարային գործողությունները և այլն:

6 Տարածաշրջանի շրջակա միջավայրի նկարագիրը

6.1 Տարածքի ֆիզիկաաշխարհագրական դիրքը

Դաշտադեմ ամրոցը գտնվում է Արագածոտնի մարզի, Դաշտադեմ գյուղի հարավային եզրին (**Նկար 5.2**): Ամրոցից արևմտյան մասով՝ 15մ հեռավորության վրա, անցնում է Մ-9 «Մ1-Թալին-Քարակերտ-Թուրքիայի սահման» միջպետական նշանակության ավտոճանապարհը:

6.2 Գրունտների հատկանիշները

Շրջանի տարածքն անտառազուրկ է: Տարածված են շագանակագույն, բարձրադիր գոտում նաև՝ քարքարոտ սակավագոր սևահողերը, ծածկված հացազգի, տարախոտահացազգի, երբեմն մարգագետնատափաստանային բուսականությամբ:

Տարածաշրջանը ներկայացված է չոր տափաստանային գոտուն առանձնահատուկ շագանակագույն հողերը: Շագանակագույն հողերի մակերեսային քարքարոտությունը կազմում է 70.3%, որից 18.8%-ը՝ թույլ քարքարոտ, 17.0%-ը՝ միջակ քարքարոտ, 34.5-ը՝ ուժեղ քարքարոտ: Շագանակագույն հողերն ձևավորվել են տիպիկ չոր տափաստանային բուսականության տակ, հրաբխային ապարների հողմահարված նյութերի, ինչպես նաև տեղակուտակ, ողողաբերուկ և հեղեղաբերուկ գոյացումների վրա: Հողաշերտի հզորությունը միջին հաշվով տատանվում է 30-50 սմ սահմաններում, ռելիեֆի իջվածքային մասերում հաճախ այն հասնում է 65-70 սմ: Ըստ մեխանիկական կազմի այս հողերը դասվում են միջակ և ծանր կավավազային տարատեսակների շարքին: Կախված ռելիեֆի

Դաշտադեմ ամրոցի մասնակի հիմնանորոգում, թանգարանի հիմնում և հարակից տարածքի բարեկարգում		
Ամսաթիվ Մայիս 2023	ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱՉԴԵՑՈՒԹՅԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՅՏ	Վարկած Rev02

պայմաններից և էրոզիայի ենթարկվածության աստիճանից՝ հանդիպում են ինչպես ավելի թեթև, այնպես էլ ծանր մեխանիկական կազմով հողեր:


Հողերի կլանման տարողությունը համեմատաբար ցածր է, որը պայմանավորված է հումուսի սակավ պարունակությամբ և թեթև կավավազային մեխանիկական կազմով: Շագանակագույն հողերի ծավալային զանգվածը տատանվում է 1.24-1.48 գ/սմ³, տեսակարար զանգվածը՝ 2.50-2.65 գ/սմ³, ընդհանուր ծակոտկենությունը՝ 4.38-52.1, խոնավությունը՝ 20-30%-ի սահմաններում:

Այս տիպի հողերը պարունակում են մեծ քանակությամբ կարբոնատներ՝ մինչև 10-25%, որն առաջ է բերում հողերի ցեմենտացիա և քարացում: Հողը և փխրուկաբեկորային մայրատեսակը հարուստ են հողալկալի մետաղներով, ֆոսֆորական թթվով և կալիումով: Ամռանը հողերում հողի կազմը խոշոր կնձկային է: Տարածաշրջանում հողաբուսական շերտը ներկայացված է առավելագույնը 0.2 մ հզորությամբ խոտաբույսերի արմատներ պարունակող շագանակագույն հողերով: Հումուսի պարունակությունը հասնում է 1.7%, CO₂ 3.9%, կլանված կատիոնների գումարը՝ 26.5 մ/էկվ 100 գ հողում:

6.3 Սեյսմատեկտոնիկ պայմանները

Սեյսմատեկտոնական տեսակետից ուսումնասիրվող տարածքը գտնվում է Երևանյան խզվածքի սահմաններում: Նախատեսվող գործունեության տարածքում վտանգավոր ֆիզիկաերկրաբանական երևույթները և պրոցեսները (սողանքներ) տեղամասում բացակայում են:


Ըստ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2020 թվականի դեկտեմբերի 28-ի "Երկրաշարժադիմացկուն շինարարություն. նախագծման նորմեր" թիվ 102-Ն հրամանի՝ նախատեսվող գործունեության տարածքը գտնվում է 1-ին սեյսմիկ գոտում, որտեղ գրունտի հորիզոնական արագացման մեծությունը կազմում է 300 սմ/վ² կամ 0.3g՝ **Նկար 6.1:**



Նկար 6.1. Նախատեսվող գործունեության վայրի սեյսմիկ գոտիականությունը

Դաշտադեմ ամրոցի մասնակի հիմնանորոգում, թանգարանի հիմնում և հարակից տարածքի բարեկարգում		
Ամսաթիվ Մայիս 2023	ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱՉԴԵՑՈՒԹՅԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՅՏ	Վարկած Rev02

Նախատեսվող գործունեության վայրի սեյսմիկ և սելավային ռիսկերի քարտեզը ներկայացված է ստորև **Նկար 6.2**-ում, որտեղ երևում է որ գործունեության տարածաշրջանը գտնվում է սելավային ռիսկերի ցածր գոտում, իսկ բուն նախատեսվող գործունեության տարածքում սողանքային գոտիներ չկան:



Նկար 6.2. Նախատեսվող գործունեության վայրի սեյսմիկ և սելավային ռիսկերի քարտեզ

6.4 Տարածաշրջանի երկրաբանությունը և ռելիեֆը

Արագածոտնի մարզի տարածքի բացարձակ բարձրությունները ծովի մակարդակի նկատմամբ տատանվում են 1030-4090 մ բարձրության վրա՝ Ոսկեվագ-Օշական հատվածից մինչև Արագածի լեռնագագաթ:

Լեռնագրական տեսակետից տարածաշրջանի հյուսիսային հատվածը հարում է Հայկական հրաբխային բարձրավանդակի Արագած-Սյունիքի ենթամարզի Արագածի լեռնազանգվածի հարավային լանջերին՝ Շամիրամի սարավանդի հարավ-արևելյան մասերին և բնութագրվում է բլրալիքավոր ռելիեֆով: Ռելիեֆին բնորոշ են հրաբխաբլուրներ, մակերևույթի խիստ կտրտվածությունը, ինչպես նաև ֆիզիկական ակտիվ հողմահարությունը: Մակերևութային գերակշռող թեքությունը կազմում է 4°:

Տարածաշրջանին բնորոշ են նաև հանգած հրաբուխների կոնաձև բարձրացումները և առանձին լավային հոսքերի ողողամաշման-հրաբխային սարավանդները՝ կտրտված անջուր ձորակներով: Մակերևույթը խիստ քարքարոտ է:

Երկրաբանական ուղղվածության տեսակետից տարածաշրջանը հարում է Արագածի տեկտոնահրաբխային զանգվածի հարավային իջեցված բեկորին Հարավարագածյան իջույթին (առանձնացված է երկրաֆիզիկական տվյալներով): Վերջինս սահմաններում առանձնացվում են ավելի ցածր կարգի տեկտոնական տարրեր՝ տեղային բարձրացումներ, անտիկլինալներ, սինկլինալներ և աղային

Դաշտադեմ ամրոցի մասնակի հիմնանորոգում, թանգարանի հիմնում և հարակից տարածքի բարեկարգում		
Ամսաթիվ Մայիս 2023	ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱՉԴԵՑՈՒԹՅԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՅՏ	Վարկած Rev02

կառուցվածքներ: Երկրաբանական կառուցվածքի ձևավորման գլխավոր գործոնը հրաբխային Արագած լեռան վերին պալեոգենյան գործունեությունն է: Հրաբխային համալիրները ներկայացված են անդեզիտա-բազալտներով, դագիտներով, տուֆերով և տուֆոլավաներով, որոնք ծածկված են էրոզիոն գոյացությունների հաստ շերտով:

6.5 Մակերևութային ջրերը

Մարզի խոշոր գետերն են Քասախը և Գեղաձորը: Մարզի տարածքով է անցնում Արզնի-Շամիրամ ջրանցքը, գործում է նաև Թալինի ջրանցքը: Մարզն աչքի է ընկնում ջրամբարների առատությամբ: Մարզում առկա է 29 արհեստական ջրամբար, որոնցից են Ապարանի, Հալավարի, Ծիլքարի, Ներքին Սասնաշենի, Դավթաշենի, Թալինի, Վերին Բազմաբերդի, Կաքավաձորի, Շենիկի, Աշնակի, Սաբունջիի ջրամբարները և այլն:

Գործող ջրամբարները ամենամեծը Ապարանի ջրամբարն է՝ մակերեսը 7.9 կմ² է, ընդհանուր ծավալը՝ 91 մլն.մ³, օգտակարը՝ 81 մլն.մ³, ջրթողունակությունը վայրկյանում 18 մ³: Արագածի մերձագագթային սարավանդի վրա գտնվում է Քարի լիճը:

Տարածաշրջանում է գտնվում Սև ջուր գետի աջ վտակը՝ Սելավ Մաստարան: Գետի երկարությունը 98 կմ է, ավազանը՝ 1580 կմ²: Սկիզբ է առնում Արագած լեռան հարավ-արևմտյան լանջից, մոտ 2500 մ բարձրությունից: Հոսում է դեպի հարավ, ապա՝ հարավ-արևելք: Վերին հոսանքում հունն ունի մինչև 30 մ խորություն: Սնուցումը գերազանցապես անձրևային է: Ունի անկայուն, սելավային ռեժիմ, երբեմն ցամաքում է (30-50 օր):

Տարածաշրջանում ստորերկրյա ջրերը բացակայում են, ինչը պայմանավորված է տեղամասի տարածքի երկրաբանական և գեոմորֆոլոգիական առանձնահատկություններով:

6.6 Կլիման և օդերևութաբանական պայմանները

Տարածաշրջանի կլիման չոր ցամաքային է: Մակերևութային բարձրությունների մեծ տատանումների շնորհիվ կլիմայական պայմանները ցածրադիր և բարձրադիր մասերում բազմազան են: Տարեկան միջին ջերմաստիճանը և տեղումների քանակն ըստ բարձրության խիստ տարբեր են: Արագածի գագաթամերձ շրջանում տեղումները տարեկան հասնում են 850-900 մմ, իսկ համեմատաբար ցածրադիր (1000 մ) բարձրություններում՝ 300 մմ: Արարատյան դաշտին հարող հատվածներում ամռանը տաք է, իսկ ձմռանը՝ չափավոր ցուրտ: Եթե ցածրադիր հատվածում ամառը տևում է 5 ամիս (մայիս-սեպտեմբեր), ապա Արագածի մերձագագթային հատվածում տարվա մեծ մասը ձմեռ է. այնտեղ նույնիսկ ամռան ամիսներին կարելի է հանդիպել ձնաբքերի:

Նախատեսվող գործունեության տարածքի կլիմայի բնորոշման համար հիմք են ծառայել ՀՀԾՆ II-7.01-2011 «Շինարարական կլիմայաբանություն» շինարարական նորմերում ներկայացված Թալինի օդերևութաբանական կայանի ցուցանիշները:

6.6.1 Ջերմաստիճանը

Տարածաշրջանում օդի բացարձակ նվազագույն աստիճանը -26 °C է: Բացարձակ առավելագույն ջերմաստիճանը կազմում է 38 °C, ամենատաք ամսվա միջին առավելագույնը՝ 20.8 °C: Ըստ ՀՀԾՆ II-7.01-2011-ի, տարածաշրջանում օդի միջին ամսական, տարեկան, բացարձակ նվազագույն և առավելագույն ջերմաստիճանները բերված են **Աղյուսակ 6.1**-ում:

Դաշտադեմ ամրոցի մասնակի հիմնանորոգում, թանգարանի հիմնում և հարակից տարածքի բարեկարգում		
Ամսաթիվ Մայիս 2023	ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱՉԴԵՑՈՒԹՅԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՅՏ	Վարկած Rev02

Աղյուսակ 6.1. Օդի միջին ամսական և տարեկան ջերմաստիճանը, °C

Բնակավայրի օդերևութա- բանական կայանի անվանումը	Բարձրություն ծովի մակարդակից, մ	Միջին ջերմաստիճանը ըստ ամիսների, °C												Միջին տարեկան, °C	Բացարձակ նվազագույն, °C	Բացարձակ առավելագույն, °C
		Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր			
Թալին	1637	-5.2	-4	0.6	7.6	12.1	16.4	20.7	20.8	16.5	10.1	3.3	-2.9	8	-26	38

6.6.2 Հարաբերական խոնավությունը

Օդի միջին տարեկան հարաբերական խոնավությունը կազմում է 66%: Ամենացուրտ ամսվա օդի միջին հարաբերական խոնավությունը կազմում է 69%, իսկ ամենաշոգ ամսվանը՝ 36%: Ըստ ՀՀՀՆ II-7.01-2011-ի, տարածաշրջանում օդի հարաբերական խոնավության տվյալները բերված են **Աղյուսակ 6.2**-ում:

Աղյուսակ 6.2. Օդի հարաբերական խոնավության տվյալները

Բնակավայրի, օդերևութա- բանական կայանի անվանումը	Օդի հարաբերական խոնավությունը, %														
	ըստ ամիսների												Միջին տարեկան, %	Միջին ամսական ժամը 15-ին	
	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր		ամենացուրտ ամսվա, %	ամենաշոգ ամսվա, %
Թալին	76	75	68	64	67	61	56	55	55	64	72	77	66	69	36

6.6.3 Մթնոլորտային տեղումները

Միջին տարեկան տեղումների քանակը կազմում է 438 մմ: Առավելագույնը դիտվում է մայիս ամսին՝ 79 մմ, նվազագույնը՝ սեպտեմբեր ամիսին՝ 20 մմ: Ըստ ՀՀՀՆ II-7.01-2011-ի, տարածաշրջանում մթնոլորտային տեղումների վերաբերյալ տվյալները ամփոփված են **Աղյուսակ 6.3**-ում:

Աղյուսակ 6.3. Մթնոլորտային տեղումները, %


Բնակավայրի, օդերևութաբանական կայանի անվանումը	Տեղումների քանակը		միջին ամսական օրական առավելագույն , մմ											Զնաձևակայություն		
			ըստ ամիսների											Առավելագույն տասնօրյակային բարձրությունը, սմ	Տարվա մեջ ձնածածկույթի օրերի քանակը	Զյան մեջ ջրի առավել- ագույն քանակը, մմ
	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր	Տարեկան			
Թալին	25	27	37	57	79	52	32	22	20	35	28	24	438	64	84	137
	18	25	38	32	37	63	41	52	67	36	50	19	67			

Դաշտադեմ ամբոցի մասնակի հիմնանորոգում, թանգարանի հիմնում և հարակից տարածքի բարեկարգում		
Ամսաթիվ Մայիս 2023	ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԳԵՑՈՒԹՅԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՅՏ	Վարկած Rev02


6.6.4 Քամի

Դիտարկվող տարածքում քամու միջին արագությունների բաշխվածությունը տարվա տարբեր ժամանակաշրջաններում բերված է ստորև **Նկար 6.3**-ում:

Քամու միջին արագության ամենամեծ արժեքը գրանցված է ապրիլ և հուլիս ամիսներին հյուսիս-արևմտյան ուղղությամբ՝ 4.1 մ/վ արագությամբ: Տարվա տարբեր ժամանակաշրջաններում քամու միջին ամսական արագության ամենամեծ արժեքը ստացվում է ապրիլ և հուլիս ամիսներին և կազմում է 2.2 մ/վ, իսկ միջին տարեկան արագությունը հավասար է 1.9 մ/վ: Ուժեղ քամիներով օրերի քանակը (≥ 15 մ/վ) 49-ն է: Քամու ուղղությունների կրկնելիության պատկերները բերված են ստորև **Նկար 6.4**-ում: Ամենամեծ կրկնելիությունը դիտվում է հուլիս ամսին հյուսիս-արևելյան ուղղությամբ և կազմում է 28%:



Նկար 6.3. Քամու միջին արագությունների բաշխվածությունը



Նկար 6.4. Քամու ուղղությունների կրկնելիությունը

6.7 Մթնոլորտային օդի աղտոտվածությունը

Նախատեսվող գործունեության՝ Դաշտադեմ ամրոցի շրջակա տարածքում, փոշու (կախված մասնիկներ) և ածխածնի օքսիդների կոնցենտրացիաների որոշման համար իրականացվել են գործիքային չափումներ, որոնց արդյունքները բերված են ստորև **Աղյուսակ 6.4**-ում:

Աղյուսակ 6.4. Փոշու (PM2.5 և PM10) և ածխածնի օքսիդի օրական միջին և առավելագույն թույլատրելի կոնցենտրացիաները⁵

№	Վնասակար նյութի անվանումը	Փաստացի արժեք	ՍԹ-Կ (մգ/մ ³)	
			Առավելագույն միանվագ	Միջին օրական
1	Կախված մասնիկներ PM2.5	0.006	0.18	0.035
2	Կախված մասնիկներ PM10	0.009	0.3	0.06
3	Ածխածնի օքսիդ (CO)	0.027	5	3

⁵Բնակավայրերում մթնոլորտային օդի աղտոտող նյութերի սահմանային թույլատրելի խտությունների (կոնցենտրացիաների-ՍԹ-Կ) նորմատիվները հաստատելու մասին թիվ 160-Ն ՀՀ կառավարության որոշում (<https://www.arlis.am/documentview.aspx?docid=163276>)

Դաշտադեմ ամբոցի մասնակի հիմնանորոգում, թանգարանի հիմնում և հարակից տարածքի բարեկարգում		
Ամսաթիվ Մայիս 2023	ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱՉԴԵՑՈՒԹՅԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՅՏ	Վարկած Rev02

6.8 Բուսական և կենդանական աշխարհը

6.8.1 Բուսական աշխարհը

Նախատեսվող գործունեության տարածքը պատկանում է Շիրակի ֆլորիստիկ շրջանին: Այն տեղակայված է Արագածի հարավահայաց լանջին՝ լավային հոսքերի առաջացրած մեղմաթեք սարավանդին: Նախատեսվող գործունեության տարածքի բուսականության գերակշռող ձևն է՝ լեռնային տափաստանը: Այստեղ՝ չոր, քարքարոտ սուբստրատի վրա հանդիպում են նաև կիսաանապատային տարրեր և ֆրիգանոիդ բուսականության համար բնորոշ տեսակներ:

Չարգացած են տոմիլարային ձևերը՝ կիսաթփերից և բազմամյա խոտաբույսերից կազմված բուսական խմբավորությունները: Տեղանքում աճող շրթնաձևավոր բույսերից են, մասնավորապես՝ ուրց նոսրածաղիկը (*Thymus rariflorus* K. Koch), մեղրածուծ պարսկականը (*Marrubium persicum* C. A. Mey), երնջա լեռնային (*Sideritis montana* L.):

Հաճախակի հանդիպող բույսերից են՝ կտավատ ավստրիականը (*Linum usitatissimum*) և հազարատերևուկ Բիբերշտեյնիին (*Achillea biebersteinii* Afan.), վառվռուկ անապատայինը (*Alyssum desertorum* Stapf.), երիզաքիստ կամ երիզախոտ երկարամազը (*Taeniatherum crinitum* (Schreb.) Nevski):

Նախատեսվող գործունեության տարածքում աճող բազմաթիվ տեսակներ հանդիսանում են արժեքավոր ուտելի, համեմունքային բույսեր կամ ժողովրդական բժշկության մեջ օգտագործվող դեղաբույսեր: Դրանցից են՝ անթառամ հայկականը (*Helichrysum armenum* DC. Subsp. *armenum*), սոխ կեղծ դեղինը (*Allium pseudoflavum* Vved.), հազարատերևուկը և այլ բուսատեսակներ:

Տարածաշրջանում հաճախակի հանդիպում են՝ իշակաթնուկ Միգիերին, խոնդակը, քոսքոսուկը, եղերդակը և այլն: Առավել տարածված հացազգիներից են՝ սեզը կամ չայիրը (*Elytrigia* sp.), վարսակը (*Avena* sp.), ցորնուկը (*Bromus* sp.) և այլն: Հանդիպում են նաև հովանոցազգիների և հատկապես բարդաձևավորների ներկայացուցիչներ՝ երնջակը (*Eryngium* sp.), կանճրակը կամ գաթի ծաղիկը (*Carthamus* sp.), խինձը (*Scorzonera* sp.), արճնախոտազգիների ընտանիքին պատկանող ոգնաթուփը (*Acantholimon* sp.):

Դաշտադեմ գյուղին բնորոշ բույսերից են՝ քոսքոսուկ արծաթագույնը (*Scabiosa argentea* L.), անմեռուկը (*Xeranthemum longipapposum* Fisch. et C. A. Mey.), խոնդատը (*Verbascum*), ճարճատուկ կամ եղերդակ սովորականը (*Cichorium intybus*) և այլն: Նախատեսվող գործունեության տարածքում գերակշռում են խոտաբույսեր, բայց հանդիպում են նաև առանձին ցածրանոց թփեր, որոնք բնորոշ են ֆրիգանոիդ բուսականությանը: Դաշտադեմ գյուղի համար ավելի բնորոշ բույսերի լուսանկարները բերված են ստորև **Նկար 6.5**-ում: Բուն նախատեսվող գործունեության և հարակից տարածքում ՀՀ բույսերի Կարմիր գրքում գրանցված բուսատեսակներ չկան:



Ճարճատուկ կամ եղերդակ սովորականը (*Cichorium intybus*)



Քոսքոսուկ արծաթագույնը (*Scabiosa argentea* L.)



Խոնդախոր (*Verbascum*)



Ամանեռուկ (*Xeranthemum longipapposum* Fisch. et C. A. Mey)

Նկար 6.5. Դաշտադեմ գյուղում համար ավելի բնորոշ բույսեր

6.8.2 Կենդանական աշխարհը

Նախատեսվող գործունեության բուն տարածքում կենդանական աշխարհի ներկայացուցիչների բներ, բնադրավայրեր չկան: Հանդիսանալով պատմամշակութային արժեք ունեցող կառույց և զբոսաշրջության վայր, ինչպես նաև բնակեցված վայրին մոտ լինելու հետևանքով, տարածքում անբարենպաստ պայմաններ են ձևավորվել վայրի կենդանիների կենսագործունեության համար: Նշված տարածքում խոշոր կենդանիներ չեն բնակվում: Տարածաշրջանում ողնաշարավորներից հանդիպում են՝ ժայռային մողես, սովորական լորտու, ճնճղուկ, մոխրագույն ագռավ, կաչաղակ, սովորական դաշտամուկ:

ՀՀ Կարմիր գրքում ներառված կենդանիները նախատեսվող գործունեության տարածքում բացակայում են: Կենդանիների Կարմիր գրքում գրանցված տեսակներից տարածաշրջանում հայտնի են հետևյալ կենդանատեսակները, որոնք թվարկված են **Աղյուսակ 6.4**-ում: **Նկար 6.6**-ում ներկայացված են տարածաշրջանում հանդիպող կենդանատեսակներից որոշների լուսանկարները:

Դաշտադեն ամրոցի մասնակի հիմնանորոգում, թանգարանի հիմնում և հարակից տարածքի բարեկարգում		
Ամսաթիվ Մայիս 2023	ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՅՏ	Վարկած Rev02

Աղյուսակ 6.4. Տարածաշրջանում հանդիպող ՀՀ Կարմիր գրքում ընդգրկված կենդանիների ցանկը

№	Հայերեն անվանումը	Լատիներեն անվանումը	Ըստ ԲԳՄՄ-ի կողմից մշակված սանդղակի ⁶
1	Շիղլովսկու դաշտամուկ	Microtus (Sumeriomys) schidlovskii Argyropulo	EN
2	Խայտաքիս	Vormela peregusna	VU
3	Սցինկ	Scincidae	CR
4	Գառնանգո (մորուքավոր անգո)	Gypaetus barbatus Linnaeus	VU
5	Իշանգո	Neophron percnopterus Linnaeus	EN
6	Սպիտակագլուխ անգո	Gyps fulvus	VU
7	Տափաստանային արծիվ	Aquila nipalensis orientalis Hodgson	VU
8	Քարարծիվ	Aquila chrysaetos	VU
9	Ներկարար	Coracias garrulus	VU



Խայտաքիս (Vormela peregusna)



Շիղլովսկու դաշտամուկ (Microtus (Sumeriomys) schidlovskii Argypulo)



Սցինկ (Scincidae)



Քարարծիվ (Aquila chrysaetos)

⁶EN - վտանգված տեսակ,
VU - խոցելի տեսակ,
CR - կրիտիկական վիճակում գտնվող տեսակ

Դաշտադեմ ամրոցի մասնակի հիմնանորոգում, թանգարանի հիմնում և հարակից տարածքի բարեկարգում		
Ամսաթիվ Մայիս 2023	ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱՉԴԵՑՈՒԹՅԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՅՏ	Վարկած Rev02



Տափաստանային արծիվ (*Aquila nipalensis orientalis* Hodgson)



Ներկարար (*Coracias garrulus*)

Նկար 6.6. Տարածաշրջանում հանդիպող ՀՀ Կարմիր գրքում ընդգրկված կենդանիներից որոշների լուսանկարները

6.9 Հատուկ պահպանվող տարածքներ

Դաշտադեմ ամրոցի մոտակայքում հատուկ պահպանվող տարածքներ չկան: Ամենամոտ հատուկ պահպանվող տարածքը՝ «Արագածի ալպյան» արգելավայրը գտնվում է նախատեսվող գործունեության վայրից մոտ 33 կմ հեռավորության վրա:

Արագածի ալպյան արգելավայրը գտնվում է Արագածոտնի մարզում: Այն բնության հատուկ պահպանվող տարածք է, Հայաստանի Հանրապետության 27 արգելավայրերից մեկը: Կազմավորվել է 1959 թվականին, ունի 300 հա տարածք: Գտնվում է Արագած լեռնագագնգվածի 3200-3500 մ բարձրություններում: Ստեղծվել է սառցադաշտային Քարի լճի և հարակից ալպյան մարգագետինների պահպանության նպատակով:

6.10 Նախատեսվող գործունեության տարածաշրջանի սոցիալ-տնտեսական վիճակը

Դաշտադեմ գյուղը գտնվում է Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզում: «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին 24.09.2021թ.-ի թիվ ՀՕ-328-Ն օրենքի համաձայն, Դաշտադեմ բնակավայրը ընդգրկվել է Թալին բազմաբնակավայր համայնքի կազմում: Նախկինում ունեցել է Նոր Թալին, Ներքին Թալին, Փոքր Թալին, Թուրքի Թալին անվանումները: Դաշտադեմ բնակավայրի սոցիալ-տնտեսական իրավիճակի նկարագրության համար հիմք է հանդիսացել Դաշտադեմ համայնքի ավագանու կողմից 16.12.2016թ.-ին ընդունված Դաշտադեմ համայնքի 2016-2021թթ. զարգացման հնգամյա ծրագիրը:

Դաշտադեմ

Մակերեսը՝ 3027.51 հա, որից 139.66 հա բնակավայր,

Բնակչությունը՝ 592 մարդ:

1979թ.-ին Ներքին Թալին գյուղը վերանվանվել է Դաշտադեմ: Բնակիչների նախնիները եղել են 1915թ.-ի եղեռնից տեղահանված՝ Մուշից, Ալաշկերտից և Խնուսից: Բնակավայրից հարավ 2 կմ հեռավորության վրա գտնվում է պատմական Քաղենի քաղաքի, հիմնովին վերականգնված «Սուրբ Քրիստափոր» վանքը (VII դար): Վանքի և բնակավայրի միջև ընկած 2 կմ տարածքում պահպանվել են քաղաքի բնակելի տների հիմքերը և բնակավայրի հարավային եզրում պահպանվում է Կամսարական եղբայրների նստավայր՝ բերդ - ամրոց «Դաշտադեմի ամրոց» խոշոր համալիրը (VII-

Դաշտադեմ ամրոցի մասնակի հիմնանորոգում, թանգարանի հիմնում և հարակից տարածքի բարեկարգում		
Ամսաթիվ Մայիս 2023	ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱՉԴԵՑՈՒԹՅԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՅՏ	Վարկած Rev02

IX դար): Ամրոցի ներսում գործում է հիմնովին վերականգնված "Սուրբ Սարգիս" եկեղեցին՝ XIII դար (տես **Նկար 5.4-ը**):

Գյուղատնտեսություն

Համայնքում կան միայն գյուղացիական տնտեսություններ, կոլեկտիվ գյուղացիական տնտեսություններ չկան: Գյուղացիական տնտեսությունները զբաղված են անասնապահությամբ, հիմնականում խոշոր եղջերավոր 465 գլուխ, մանր եղջերավոր 1100 գլուխ և խոզեր 86 գլուխ: Գյուղատնտեսական մշակության արտադրանքը հիմնականում բազմամյա խոտաբույսերն են, այգեգործություն մեջ ծիրանենու, խնձորենու մշակումն է, իսկ բանջարաբոստանային կուլտուրաներից՝ ձմերուկի, լոլիկի և վարունգի աճեցումը:

Կրթություն, մշակույթ և սպորտ

Համայնքում գործում է մեկ միջնակարգ դպրոց: Դպրոցի մասնաշենքը 1976 թվականի տիպային կառույց է, նախատեսված հոգրությունը 240 աշակերտի համար: Ուսուցման մասնաշենքը երկհարկանի է և ունի կից սպորտի դահլիճ: 2016-2017 ուսումնական տարում աշակերտների թիվը հասնում էր 70 աշակերտի, ուսուցիչների թիվը՝ 19 մարդ, սպասարկող անձնակազմը՝ 6 մարդ: Գյուղում գործում է մսուր մանկապարտեզ, 1984 թվականի տիպային երկհարկանի կառույց է:

Սոցիալական ապահովություն և առողջապահություն

Համայնքում առկա է 1990 թվականին կառուցված բուժ. կետի երկհարկանի մասնաշենքը: Գործում է, ունի մեկ բուժբույր: Ընտանեկան նպաստներ համակարգում գրանցված են 35 ընտանիք, որից 20 ընտանիք օգտվում է համակարգի նպաստից: Համայնքի 414 աշխատաձեռքի առկայության մակարդակով 73 քաղաքացի ընդգրկված են աշխատանքի պետական, մասնավոր ձեռնարկություններում և գերատեսչություններում:

6.11 Ազդակիր ենթակառուցվածքներ

Դաշտադեմ ամրոցի հյուսիսային մասում, անմիջապես գլխավոր մուտքի հարևանությամբ գտնվում է հացատուն/սրճարան, որը պատկանում է "Օձասար" ՍՊ ընկերությանը: Ամրոցի անմիջապես արևելյան մասը հարում է բնակելի կառույցին, իսկ ամրոցից դեպի արևմուտք՝ 15մ հեռավորության վրա գտնվում է Մ-9 «Մ1-Թալին-Քարակերտ-Թուրքիայի սահման» միջպետական նշանակության ավտոճանապարհը: Ամրոցին մոտ գտնվող ազդակիր կառույցներն են՝ "Օձասար" ՍՊԸ հացատունը և բնակելի տները: Կառուցվող թանգարանի շենքից մինչև "Օձասար" ՍՊԸ հացատունը մոտ 60մ է, իսկ մինչև ամրոցի շինությունը՝ 50մ: "Տատիկի քարե բնական քանդակ" երկրաբանական հուշարձանը գտնվում է Դաշտադեմ ամրոցի մեծ պարսպից 280մ հեռավորության վրա: Վերջիններիս տեղադիրքերը ներկայացված են ստորև **Նկար 6.7-ում**:

Դաշտադեմ ամրոցի մասնակի հիմնանորոգում, թանգարանի հիմնում և հարակից տարածքի բարեկարգում		
Ամսաթիվ Մայիս 2023	ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱՉԴԵՑՈՒԹՅԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՅՏ	Վարկած Rev02



Նկար 6.7. Դաշտադեմ ամրոցի և մոտակա ագղակիր ենթակառուցվածքների, ինչպես նաև մոտակա երկրաբանական հուշարձանի տեղադիրքերը

6.12 Պատմամշակութային և բնության հուշարձանները

ՀՀ Կառավարության 2002թ.-ի մայիսի 29-ին №628-Ն որոշմամբ հաստատված՝ Արագածոտնի մարզի հուշարձանների պետական ցուցակի համաձայն, Դաշտադեմ գյուղում կան թվով 60 հուշարձաններ (12 միավոր), որոնք ներկայացված են ստորև **Աղյուսակ 6.5**-ում:

ՀՀ Կառավարության 2008թ.-ի օգոստոսի 14-ին №967-Ն որոշմամբ հաստատված՝ ՀՀ բնության հուշարձանների ցանկի համաձայն, նախատեսվող գործունեության վայրի մոտ գտնվող բնության հուշարձանը դա «Տատիկ» քարե բնական քանդակ» երկրաբանական հուշարձանն է, որը գտնվում է Դաշտադեմ ամրոցից 280մ հեռավորության վրա՝ դեպի արևելք (տես **Նկար 6.7**), ուստի չի կարող ազդվել նախատեսվող գործունեության իրականացումից:

Աղյուսակ 6.5. Դաշտադեմ գյուղի պատմամշակութային հուշարձանները

№	Հուշարձանի անվանումը	Կառուցման տարեթիվը	Հասցեն	Նշանակությունը՝ հանրապետական/ տեղական	Հավելյալ նշումներ
1	Ամրոց	7-19 դդ.	2 կմ հարավում	Հ	
2	Գերեզմանոց	10-13 դդ.	0,3 կմ արևելք	Տ	տարածքի զգալի մասը՝ մեկտրացված
3	Գերեզմանոց	12-14 դդ.	0,5 կմ հարավ	Տ	տապանաքարերը մեծ մասամբ տեղաշարժված են

Դաշտադեմ ամրոցի մասնակի հիմնանորոգում, թանգարանի հիմնում և հարակից տարածքի բարեկարգում		
Ամսաթիվ Մայիս 2023	ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱՉԴԵՑՈՒԹՅԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՅՏ	Վարկած Rev02

4	Գերեզմանոց	12-14 դդ.	1,5 կմ հարավ-արևելք	S	
5	Գերեզմանոց	12-16 դդ.	1,3 կմ հարավ-արևմուտք	S	ս. Քրիստափոր եկեղեցի տանող ճանապարհի աջ կողմում, դաշտի մեջ
6	Գերեզմանոց	14-15 դդ.	2 կմ հարավ-արևմուտք	S	Դաշտադեմի ամրոցից 300 մ հարավ
7	Գերեզմանոց	16-17 դդ.	1,2 կմ հարավ	S	ծիրանի այգիների տարածքում
8	Գյուղատեղի "Քաղենի"	7-18 դդ.	2 կմ հարավ-արևմուտք	S	Թալին-Արմավիր ճանապարհի երկու կողմերում
9	Դամբարանադաշտ	մ.թ.ա. 2-1 հզ	Արևմտյան և արևելյան մասերում	<	
10	Եկեղեցի Սբ. Քրիստափոր	7 դ.	2,5 կմ հարավ-արևմուտք	<	վրկնգ՝ 1981-ին, վրկնգ. ճարտ.՝ Ռ. Դավթյան
11	Խաչքար	9-10 դդ.	հարավ-արևմտյան մասում	<	Ս. Քրիստափոր եկեղեցի տանող ճանապարհից ձախ, հենած քարերին, բարձրադիր տեղում
12	Խաչքար	11-12 դդ.	1 կմ արևմուտք	<	"Չայիր" վայրում, ձորի մեջ, ստորին մասը չի պահպանվել

7 Ծրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման արդյունքները

Նախագծային փաստաթղթերի, առկա գրականության, հաշվետվությունների ու քարտեզների վերլուծության, ինչպես նաև նախատեսվող գործունեության շահառուների հետ քննարկումների և հանրային խումբների իրականացման արդյունքում հատկորոշվել են այն հիմնական ռիսկերը և ազդեցությունները, որոնք կարող են առաջանալ նախատեսվող գործունեության՝ Դաշտադեմ ամրոցում իրականացվող աշխատանքների արդյունքում: Այդ ռիսկերը և ազդեցությունները ամփոփված են ստորև՝ **Բաժիններ 7.1-7.9**-ում, իսկ դրանց նվազեցմանը և մեղմացմանը միտված բնապահպանական և աշխատանքի անվտանգության միջոցառումները ներկայացված **Գլուխ 8**-ում:

7.1 Մթնոլորտային օդի աղտոտումը

Նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում փոշու տեսքով մթնոլորտային արտանետումների հիմնական մասը կառաջանա հողային աշխատանքների (Փուլ III), մասամբ նաև շինությունների ապամոնտաժման (Փուլ II), կառուցման (Փուլ IV) և տարածքի բարեկարգման (Փուլ VI) փուլերում: Գազային արտանետումները հիմնականում պայմանավորված են շինարարական

Դաշտադեմ ամրոցի մասնակի հիմնանորոգում, թանգարանի հիմնում և հարակից տարածքի բարեկարգում		
Ամսաթիվ Մայիս 2023	ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱՉԴԵՑՈՒԹՅԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՅՏ	Վարկած Rev02

տեխնիկայի և բեռնատար մեքենաների աշխատանքից և բաղկացած են վառելիքի այրման արգասիքներից՝ CO-ից, CH-ից, NOx-ից, ՊՄ-ից, N₂O-ից, ՑՕՄ-ից և CO₂-ից:

Փոշու, ինչպես նաև շին. տեխնիկայից զազային արտանետումները կարելի է նվազեցնել ստորև թվարկված միջոցառումների միջոցով՝

1. Օգտագործել ժամանակակից, տեխնիկապես սարքին և պարբերաբար զննվող բեռնատար մեքենաներ և շին.տեխնիկա,
2. Հողային աշխատանքների ժամանակ իրականացնել ջրցան,
3. Սորուն նյութեր տեղափոխելիս բեռնատար մեքենաների թափքը պահել ծածկված վիճակում,
4. Սորուն նյութերը շին. հրապարակում պահել ծածկված անջրաթափանց թաղանթով,
5. Շին.հրապարակ բեռնատար մեքենաների մուտքի և ելքի ժամանակ լվանալ դրանց անիվները,
6. Արգելել շին. հրապարակում շինարարական նյութերի և թափոնների այրումը:

7.2 Ազդեցություն ջրային ռեսուրսների վրա

Առկա գրականության և հիդրոերկրաբանական հետազոտությունների տվյալների վերլուծության համաձայն վրա կարելի է փաստել, որ ստորերկրյա ջրերը գտնվում են բավականին խորը հորիզոններում: Հետևաբար, նախատեսվող գործունեությունը չի կարող ազդել ստորգետնյա ջրերի վրա:

Աշխատանքային նախագծով մթնոլորտային տեղումների ժամանակ առաջացած հեղեղաջրերի հավաքման և ամրոցի տարածքից դրանց հեռացման համար ամրոցի ներսում՝ մեծ պարսպի պարագծով, նախատեսվում է անցկացնել ջրատար առու, որը նույնպես ուղղվելու է դեպի ամրոցի մեծ պարսպի հարավային հատվածից դուրս գտնվող սեպտիկ հոր: Մաքրումից հետո այն բաց է թողնվելու ամառի դաշտ:

Շինարարության փուլում, հատկապես հողային աշխատանքների ժամանակ, առաջարկվում է անհապաի դադարեցնել դրանք անբարենպաստ օդերևութաբանական պայմանների դեպքում:

7.3 Ազդեցություն հողային ռեսուրսների վրա

Ամրոցի մասնակի հիմնանորոգման, թանգարանի հիմնման և հարակից տարածքի բարեկարգման աշխատանքների ընթացքում իրականացվող հողային աշխատանքները բնութագրվում են հողային հանույթի (գրունտերի), հողի բերրի շերտի առաջացմամբ, դրանց մի մասի պահպանմամբ, իսկ մյուս մասի հեռացմամբ, որոնց ծավալային արտահայտումը ամփոփված է ստորև՝

- Հեռացվող հող - 4439.8 մ³ (ապամոնտաժում և կառուցում), որից՝
 - Հողի բերրի շերտ՝ 37 մ³,
 - Հետլցման ենթակա հող՝ 1549.5 մ³ (այդ թվում 37 մ³ հողի բերրի շերտը),
 - Աղբավայր տեղափոխվող հող՝ 2927.3 մ³ (6640 տ):

Մինչ շինարարական աշխատանքների մեկնարկը առաջացող հողի բերրի շերտը ժամանակավորապես պահվելու է նախատեսվող գործունեության տարածքի հարավային մասում՝ ծածկված անջրաթափանց թաղանթով՝ բացառելով դրա որակական հատկանիշների վատթարացումը: Այն հիմնանորոգման աշխատանքներից հետո օգտագործվելու է բարեկարգման աշխատանքների համար (տես **Բաժին 5.12-ը**):

Դաշտադեմ ամրոցի մասնակի հիմնանորոգում, թանգարանի հիմնում և հարակից տարածքի բարեկարգում		
Ամսաթիվ Մայիս 2023	ԾՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱՉԴԵՑՈՒԹՅԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՅՏ	Վարկած Rev02

Հողային հանույթի՝ գրունտի տեղափոխումը դեպի աղբավայր պետք է իրականացվի բեռնատար մեքենաներով՝ ծածկված թափքով: Անբարենպաստ օդերևութաբանական պայմանների դեպքում անհապաղ պետք է դադարեցնել հողային աշխատանքները, ինչպես նաև գրունտի աղբավայր տեղափոխելը: Նշված միջոցառումները թույլ կտան նվազագույնի հասցնել շինարարական աշխատանքների՝ հողային ռեսուրսների վրա բացասական ազդեցությունը:

Հողային աշխատանքների ընթացքում առաջացող հողի բերրի շերտի հետ կապված միջոցառումներն անհրաժեշտ է իրականացնել հաշվի առնելով ՀՀ կառավարության 02.11.2017թ.-ի №1404-Ն և 08.09.2011թ.-ի №1396-Ն որոշումներով հաստատված պահանջները:

7.4 Թափոնների առաջացումը և կառավարումը

Կանխատեսվում է, որ ամրոցի վերակառուցման աշխատանքների ընթացքում կառաջանան հետևյալ տեսակի թափոնները՝

- Ծինարակական աղբ (ծածկագիր՝ 91200601 01 00 4)⁷, քանակը՝ 679 մ³ / 1510 տ, որից՝
 - Քանդված պատեր և հիմքեր՝ 667 մ³ / 1494 տ,
 - Ծինարարության արդյունքում առաջացած աղբ՝ 12 մ³ / 16 տ:
- Կենցաղային աղբ (ծածկագիր՝ 91200400 01 00 4)⁸, քանակը՝ 1.4 տ,
- Սև մետաղի ջարդոն (ծածկագիր՝ 35131100 01 00 4)⁹, քանակը՝ 0.02 տ,
- Գունավոր մետաղների (ալյումինի և պղնձի) ջարդոն (ծածկագրեր՝ 35310101 01 99 5 և 35310301 01 01 3)¹⁰, քանակը՝ 0.011 տ,
- Եռակցման խարամ (ծածկագիր՝ 31404800 01 99 4), քանակը՝ 0.008 տ,
- Հողային հանույթ (ծածկագիր՝ 31401100 08 99 5)¹¹, քանակը՝ 2927.3 մ³ / 6640 տ:

Բոլոր առաջացող թափոնների համար շին. հրապարակում նախատեսված են լինելու պահման հարթակներ, իսկ որոշ թափոնատեսակների համար նաև կոնտեյներներ (թափոնների պահման հարթակները ներկայացված են **Հավելված 13**-ում): Ծինարարական աղբը որոշակի քանակներ կուտակվելուց հետո հեռացվելու է մոտակա աղբավայր: Եռակցման խարամը փոքր քանակներով խառնվելու է կենցաղային աղբի հետ և նույնպես հեռացվելու է մոտակա աղբավայր: Մոտակա աղբավայրը նախատեսվող գործունեության տարածքից գտնվում է մոտ 3 կմ հեռավորության վրա:

Սև և գունավոր մետաղները նույնպես հավաքվելու են շին. հրապարակում և պարբերաբար հանձնվեն մասնագիտացված ընկերությունների:

Հաշվի առնելով թափոնների հետ գործածության վերոնշյալ գործողությունները, ինչպես նաև սույն Հայտի **Գլուխ 8**-ում բերված միջոցառումները, կարելի է փաստել, որ առաջացող թափոնների ազդեցությունը շրջակա միջավայրի վրա նվազագույն է և էական հետևանքներ՝ հիմնականում մթնոլորտային օդի և հողային ռեսուրսների վրա, չեն դիտվի:

ՀՀ բնապահպանության նախարարի №342-Ն հրամանի համաձայն՝

⁷Ծեների քանդումից առաջացած շինարարական աղբ

⁸Կազմակերպությունների կենցաղային տարածքներից առաջացած չտեսակավորված աղբ (բացառությամբ խոշոր եղրաչափերի)

⁹Չտեսակավորված սև մետաղներ պարունակող թափոններ (այդ թվում թուջի և/կամ պողպատի փոշի)

¹⁰Չտեսակավորված ալյումինի ջարդոն և Չտեսակավորված պղնձի ջարդոն

¹¹Փորման աշխատանքների ընթացքում առաջացած վտանգավոր նյութերով չադադարված հող

Դաշտադեմ ամրոցի մասնակի հիմնանորոգում, թանգարանի հիմնում և հարակից տարածքի բարեկարգում		
Ամսաթիվ Մայիս 2023	ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱՉԴԵՑՈՒԹՅԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՅՑ	Վարկած Rev02

7.5 Աղմուկի և թրթռման ազդեցությունը

Դաշտադեմ ամրոցի տարածքում աղմուկի ֆոնային մակարդակը ձևավորվում է զբոսաշրջության շարժի, բնակիչների մարդատար տրանսպորտային միջոցների երթևեկության արդյունքում և այլ մարդածին գործունեությունից: Ակնկալվում է, որ նախատեսվող գործունեության արդյունքում տրանսպորտային միջոցների հոսքի հետագա անը կարող է բերել տարածքում և շրջակայքում աղմուկի համարժեք (միջին) մակարդակի բարձացմանը, որը սակայն չի հանգեցնի ֆոնային աղմուկի՝ ՀՀ սանիտարական նորմերով սահմանված թույլատրելի մակարդակի գերազանցմանը, հաշվի առնելով նաև, որ աշխատանքային նախագծով նախատեսված են մի շարք աղմկամեղմիչ միջոցառումներ: Էական թրթռման արձակումներ նախատեսվող գործունեության արդյունքում չեն սպասվում:

Հնարավոր է աղմուկի մակարդակի որոշակի բարձրացում հատկապես հողային և շինարարական աշխատանքների ընթացքում: Աղմուկի մակարդակի բարձրացում կդիտվի նաև Մ-9 ավտոմայրուղու երկայնքով՝ պայմանավորված շինարարական և այլ նյութերի փոխադրման աշխատանքներով, որը կարելի է նվազեցնել հետևյալ միջոցառումների միջոցով՝

1. Դադարեցնել տրանսպորտային միջոցների և շին.տեխնիկայի աշխատանքը գիշերային ժամերին,
2. Նվազեցնել բեռնատար մեքենաների արագությունը (պահպանել առաջարկվող արագությունը) բնակավայրերում,
3. Բարձր աղմուկ առաջացնող գործունեություն ծավալելուց առնվազն 24 ժամ առաջ զգուշացնել շրջակա բնակչությանը:

7.6 Ազդեցությունը կենսաբազմազանության վրա

Գրականության տվյալների համաձայն՝ տարածաշրջանում կարող են հանդիպել ՀՀ Կարմիր գրքում ներառված 9 կենդանատեսակներ, որոնք ներկայացված են **Ենթաբաժին 6.7.2**-ում: Նախատեսվող գործունեության՝ Դաշտադեմ ամրոցի տարածքը գործնականում զուրկ է կենսատեսակներից և բուսատեսակներից, քանի որ երկար տարիների ընթացքում տարածքը գտնվում է մարդածին գործունեության ազդեցության տակ:

Այնուամենայնիվ, նախատեսվող գործունեության բուն իրականացման փուլում, եթե նման անհրաժեշտության առաջանա, պետք է մշակել գործողությունների պլան, հիմնվելով ՀՀ կառավարության «ՀՀ բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման կարգը սահմանելու մասին» №781-Ն որաշման դրույթների հիման վրա:

7.7 Ազդեցությունը երթևեկության հոսքի վրա

Երթևեկությունը նախատեսվող գործունեության վայրում այնքան էլ ինտենսիվ չէ և կրում է սեզոնային բնույթ՝ Դաշտադեմ ամրոց զբոսաշրջիկների հոսքով պայմանավորված: Ամրոցի վերակառուցման աշխատանքների ողջ ընթացքում մի փոքր կծանրաբեռնվի Մ-9 «Մ1-Թալին-Քարակերտ-Թուրքիայի սահման» միջալետական նշանակության ավտոճանապարհը և Դաշտադեմ ամրոց տանող ճանապարհը: Շինարարական աշխատանքներին ներգրավված բեռնատար մեքենաների ազդեցությունը վերոնշյալ ճանապարհների ծանրաբեռնվածության վրա նվազեցնելու նպատակով, նախատեսվում է պահանջվող նյութերը շին. հրապարակ տեղափոխել փոքր քանակներով (ըստ

Դաշտադեմ ամրոցի մասնակի հիմնանորոգում, թանգարանի հիմնում և հարակից տարածքի բարեկարգում		
Ամսաթիվ Մայիս 2023	ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱՉԴԵՑՈՒԹՅԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՅՏ	Վարկած Rev02

օրապահանջի) և հիմնականում առավոտյան կամ երեկոյան ժամերին, երբ երթևեկությունը ծանրաբեռնված չէ:

7.8 Ազդեցությունը հարակից բնակավայրերի, օբյեկտների և ենթակառուցվածքների վրա

Դաշտադեմ ամրոցը գտնվում է Դաշտադեմ գյուղի հարավային մասում՝ անմիջապես բնակելի տների հարևանությամբ: Ամրոցի հյուսիսային մասում, անմիջապես գլխավոր մուտքի հարևանությամբ գտնվում է հացատուն/սրճարան, որը պատկանում է «Օձասար» ՍՊԸ-ը: Ամրոցի անմիջապես արևելյան մասը հարում է բնակելի կառույցին, իսկ ամրոցից դեպի արևմուտք՝ 15մ հեռավորության վրա գտնվում է Մ-9 «Մ1-Թալին-Քարակերտ-Թուրքիայի սահման» միջպետական նշանակության ավտոճանապարհը (տես **Նկար 6.7**):

Վերակառուցման աշխատանքների ընթացքում հնարավոր են ժամանակավոր ազդեցություններ աղմուկի և փոշու տեսքով: Ամրոցի վերակառուցման աշխատանքները հարակից բիզնես և հանրային օբյեկտների վրա բացասական ներգործություն չեն ունենա: Ընդհակառակը՝ ամրոցի վերակառուցման արդյունքում՝ վերջինիս վերականգնման, հուշարձանախմբի ամրակայման, մշտական և ժամանակավոր ցուցադրություններով թանգարանի ստեղծման, ամրոցի տարածքում թեմատիկ միջոցառումների կազմակերպման, ինչպես նաև բազմալեզու զբոսաշրջային ցուցանակների տեղադրման արդյունքում, կստեղծվի զբոսաշրջության նոր ուղղություն և կստեղծվեն նոր աշխատատեղեր՝ նպաստելով տարածաշրջանի տնտեսական աճին:

7.9 Սոցիալ-տնտեսական ազդեցությունը

Դաշտադեմ ամրոցի մասնակի հիմնանորոգման, թանգարանի հիմնման և հարակից տարածքի բարեկարգման աշխատանքները կնպաստեն ամրոցի պահպանման մակարդակի բարձրացմանը (դղակի, միջնաբերդի, միջնաբերդը շրջապատող առաջին և երկրորդ պարսպապատերի և այլ կառույցների վնասված հատվածների վերականգնում, ամրակայում, արտաքին լուսավորության կազմակերպում), բարեկարգ հանրային ենթակառուցվածքի ստեղծմանը (ավտոկայանատեղի, գուգարան, բարեկարգ քայլուղիներ, հուշանվերների վաճառք և այլն), ինչպես նաև տարածաշրջանում զբոսաշրջության նոր ուղղության զարգացմանը:

Ծրագրի իրականացումը կնպաստի տարածաշրջանում մասնավորապես Դաշտադեմ գյուղում, զբոսաշրջիկության զարգացմանը: Կստեղծվեն նոր աշխատատեղեր: Ամրոցի գլխավոր մուտքին հարող տարածքում վերականգնվելու և բարեկարգվելու է հուշարձանին և կայանատեղիին մոտեցնող ճանապարհը, տեղադրվելու են երթևեկության նշաններ, ինչպես նաև կազմակերպվելու է ամրոցից դուրս արտաքին լուսավորությունը՝ նպաստելով տարածքում ապահով երթևեկությանը թե գիշերային և թե ցերեկային ժամերին: Մեծ պարիսպների ներսում ստեղծվելու են քայլուղիներ և հանգստի հարթակներ, ինչը տեղի բնակչությունը հնարավորություն կտա ունենալ զբոսնելու և հանգիստը անցկացնելու ևս մեկ վայր:

7.10 Ազդեցությունը Դաշտադեմ ամրոցի վրա

Դաշտադեմ ամրոցը գտնվում է փոքր պարսպի սահմաններում, մինչդեռ շինարարական աշխատանքներն իրականացվելու են փոքր և մեծ պարիսպների միջև պարփակված տարածքում: Այսինքն, գործնականում անհնար է շինարարական աշխատանքների ընթացքում ազդեցություն ունենալ Դաշտադեմի ամրոցի կամ դրա հուշարձանների վրա:

Դաշտադեմ ամբողջի մասնակի հիմնանորոգում, թանգարանի հիմնում և հարակից տարածքի բարեկարգում		
Ամսաթիվ Մայիս 2023	ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱՉԴԵՑՈՒԹՅԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՅՏ	Վարկած Rev02

8 Բնապահպանական և աշխատանքի անվտանգության ազդեցությունների կառավարում և մշտադիտարկում

ա) Բնապահպանական և աշխատանքի անվտանգության միջոցառումների ծրագիր

Շրջակա միջավայրի և այլ հարաչափեր	Միջոցառումներ	Պատասխանատու	Վերահսկող	Արժեքը
1. Մթնոլորտային օդի աղտոտումը	- Օգտագործել ժամանակակից, տեխնիկապես սարքին և պարբերաբար զննվող բեռնատար մեքենաներ և շին. տեխնիկա, - Սորուն նյութեր տեղափոխելիս բեռնատար մեքենաների թափքը պահել ծածկված վիճակում, - Սորուն նյութերը շին. հրապարակում պահել ծածկված անջրաթափանց թաղանթով, - Հողային աշխատանքների ժամանակ իրականացնել ջրցան, - Շին. հրապարակ բեռնատար մեքենաների մուտքի և ելքի ժամանակ լվանալ դրանց անիվները, - Արգելել շին. հրապարակում շինարարական նյութերի և թափոնների այրումը:	Կապալառու կազմակերպություն	Պատվիրատու	Ներառված է ծախսերի մեջ
2. Ազդեցություն ջրային ռեսուրսների վրա	Անբարենպաստ օդերևութաբանական պայմանների դեպքում անհապաղ դադարեցնել հողային աշխատանքները:	Կապալառու կազմակերպություն	Պատվիրատու	Ներառված է ծախսերի մեջ
3. Հողային ռեսուրսները, սուրսները և թերթի շերտերը	- Հողի բերրի շերտը պահել ծածկված անջրաթափանց թաղանթով, - Հողի բերրի շերտը հանելու, պահեստավորելու և պահելու ընթացքում բացառել դրա որակական հատկանիշների վատթարացումը, - Գրունտը տեղափոխելիս բեռնատար մեքենաների թափքի պահել ծածկված վիճակում, - Շին. աշխատանքների ավարտից հետո իրականացնել տարածքի բարեկարգում, - Հողային աշխատանքների ընթացքում առաջացող հողի բերրի շերտի հետ կապված միջոցառումներն իրականացնել հաշվի առնելով ՀՀ կառավարության №1404-Ն և № 1396-Ն որոշումներով հաստատված պահանջները:	Կապալառու կազմակերպություն	Պատվիրատու	Ներառված է ծախսերի մեջ
4. Թափոնների	Շինարարության փուլում նախատեսել	Կապալառու	Պատվիրատու	Ներառված է

Դաշտադեմ ամբողջի մասնակի հիմնանորոգում, թանգարանի հիմնում և հարակից տարածքի բարեկարգում		
Ամսաթիվ Մայիս 2023	ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱՉԴԵՑՈՒԹՅԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՅՏ	Վարկած Rev02

Շրջակա միջավայրի և այլ հարաչափեր	Միջոցառումներ	Պատասխանատու	Վերահսկող	Արժեքը
առաջացումը	շին. հրապարակում առաջացող թափոնների համար առանձին պահման կոնտեյներներ՝ համապատասխան նշագրմամբ, - Շինարարական աշխատանքների ընթացքում առաջացած սև և գունավոր մետաղների ջարդոնը հանձնել մասնագիտացված ընկերություններին, - Կազմակերպել շինարարական ու կենցաղային աղբի պարբերաբար հեռացումը շին. հրապարակից դեպի աղբավայր, - Շահագործման փուլում տեղադրել տարածքում բավարար քանակությամբ աղբամաններ, կազմակերպել դրանց պարբերաբար բեռնաթափումը և հեռացումը աղբավայր:	կազմակերպություն		ծախսերի մեջ
5. Աղմուկը և թրթռումը	- Դադարեցնել տրասնպորտային միջոցների և շին.տեխնիկայի աշխատանքը գիշերային ժամերին, - Նվազեցնել բեռնատար մեքենաների արագությունը (պահպանել առաջարկվող արագությունը) բնակավայրերում, - Աղմուկ առաջացնող գործունեություն ծավալելուց առնվազն 24 ժամ առաջ զգուշացնել մոտակ ազդակիր կառույցների բնակիչներին:	Կապալառու կազմակերպություն	Պատվիրատու	Ներառված է ծախսերի մեջ
6. Կենսաբազմազանություն	- Անհրաժեշտության դեպքում մշակել գործողությունների պլան, հիմնվելով ՀՀ կառավարության "ՀՀ բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման կարգը սահմանելու մասին" №781-Ն որաշման դրույթների հիման վրա: - Աշխատանքները իրականացնել ապահովելով հողային ռեսուրսների, բուսական և կենդանական աշխարհի ներկայացուցիչների պաշտպանությունը:	Կապալառու կազմակերպություն	Պատվիրատու	Ներառված է ծախսերի մեջ
7. Ճանապարհների ծանրաբեռնվածությունը	- Օգտագործել ժամանակակից, տեխնիկապես սարքին և պարբերաբար զննվող բեռնատար մեքենաներ, - Շինարարական նյութերը տեղափոխել շին. հրապարակ, ինչպես նաև հողային	Կապալառու կազմակերպություն	Պատվիրատու	Ներառված է ծախսերի մեջ

Դաշտադեմ ամբողջի մասնակի հիմնանորոգում, թանգարանի հիմնում և հարակից տարածքի բարեկարգում		
Ամսաթիվ Մայիս 2023	ԾՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱՉԴԵՑՈՒԹՅԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՅՏ	Վարկած Rev02

Ծրջակա միջավայրի և այլ հարաչափեր	Միջոցառումներ	Պատասխանատու	Վերահսկող	Արժեքը
	հանույթը և շին. աղբը փոխադրել դեպի աղբավայր օրվա առավոտյան կամ երեկոյան ժամերին, • Ծին. հրապարակ տանող ճանապարհը կահավորել համապատասխան նախագծուշացնող նշաններով:			
8. Աշխատանքային միջավայրը	• Աշխատանքի անվտանգության գծով հրահանգավորում աշխատողների հետ, • Աշխատանքների սանիտարական պայմանների, ներառյալ ցնցուղարանների, պետքարանների և հանդերձարանների կազմակերպում, • Աշխատողների ապահովում անհատական պաշտպանության միջոցներով՝ հատուկ արտահագուստով, կոշիկներով, դիմակներով, ակնոցներով, ձեռնոցներով և այլն, • Առաջին բուժօգնության դեղորայքի ապահովում, • Առաջնային հրդեհաշիջման միջոցներով ապահովում:	Կապալառու կազմակերպություն	Պատվիրատու	Ներառված է ծախսերի մեջ
9. Արտակարգ իրավիճակներ (հրդեհներ, դժբախտ դեպքեր, տեխնածին վթարներ և այլն)	• Ծինարարական տեխնիկայի շահագործման պատշաճ կառավարում, • Ծին. հրապարակի ապահովում անհրաժեշտ քանակով կրակմարիչներով, • Արտադրական վտանգավոր օբյեկտների (հիմնականում ամբարձիչների) տեխնիկական անվտանգության փորձաքննության իրականացում, • Ծրջակա բուժկենտրոնների նույնականացում՝ վնասվածք ստացած աշխատողներին հրատապ բուժօգնություն ցուցաբերելու համար, • Բեռնատար մեքենաների վարորդների հրահանգավորում՝ սահմանված երթուղիներին և արագությանը համապատասխանեցնելու համար, • Առավել վտանգավոր աշխատանքների իրականացում հատուկ կարգադրի հիման վրա, • Վարորդների առողջության բուժ. գնում:	Կապալառու կազմակերպություն	Պատվիրատու	Ներառված է ծախսերի մեջ
10. Ընդհանուր	• Մինչ շինարարական աշխատանքների	Կապալառու	Պատվիրատու	Ներառված է

Դաշտադեմ ամբողջ մասնակի հիմնանորոգում, թանգարանի հիմնում և հարակից տարածքի բարեկարգում		
Ամսաթիվ Մայիս 2023	ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱՉԴԵՑՈՒԹՅԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՅՏ	Վարկած Rev02

Շրջակա միջավայրի և այլ հարաչափեր	Միջոցառումներ	Պատասխանատու	Վերահսկող	Արժեքը
անվտանգությունը	մեկնարկը պարսպատել շին. հրապարակը, Դաշտադեմ ամբողջ տանող ճանապարհը կահավորել համապատասխան տեղեկատվական վահանակներով և նախագծուշացնող նշաններով:	կազմակերպություն		ծախսերի մեջ

բ) Բնապահպանական և աշխատանքի անվտանգության մշտադիտարկումների ծրագիր

Զափման հարաչափը	Մշտադիտարկման եղանակը	Հաճախականությունը	Վայրը	Պատասխանատուն	Ծախս, դրամ
Փողու կոնցենտրացիան	Գործիքային չափումներ	- ամիսը մեկ անգամ - ըստ անհրաժեշտության	- շին. հրապարակ - շրջակա ազդակիր վայրեր	Կապալառու / Հրավիրված լաբորատորիա	50000
Աղմուկի մակարդակ	Գործիքային չափումներ	- ամիսը մեկ անգամ - ըստ անհրաժեշտության	- շին. հրապարակ - շրջակա ազդակիր վայրեր	Կապալառու / Հրավիրված լաբորատորիա	50000
Թթվածանի մակարդակ	Գործիքային չափումներ	- ամիսը մեկ անգամ - ըստ անհրաժեշտության	- շին. հրապարակ - շրջակա ազդակիր վայրեր	Կապալառու / Հրավիրված լաբորատորիա	50000
Մեպտիկ հորի պարզեցված ջրերի քիմ. կազմի որոշում	Քիմիական անալիզ	վեց ամիսը մեկ անգամ	շին. հրապարակ	Կապալառու / Հրավիրված լաբորատորիա	96000
Կենդանիների պատահական ներթափանցում	Շրջայց և տեսողական զննում	ամեն օր	շին. հրապարակ	Կապալառու	-
Շին. տեխնիկայի տեխնիկական վիճակ	Տեսողական զննում	- ըստ սահմանված պլանի - ըստ անհրաժեշտության	- հարթեցվող ճանապարհների մոտ - շին. հրապարակում	Կապալառու	-
Անհատական պաշտպանության միջոցների կիրառում	Տեսողական զննում	- ամեն օր - ըստ անհրաժեշտության	շին. հրապարակում	Կապալառու	-
Կրակմարիչների առկայություն	Տեսողական զննում, փորձարկումներ	- ամիսը մեկ անգամ - ըստ անհրաժեշտության	շին. հրապարակում	Կապալառու	-
Թափոնների կուտակում և հեռացում	Տեսողական զննում	- ամեն օր - ըստ անհրաժեշտության	շին. հրապարակում	Կապալառու	-

Դաշտադեմ ամբոցի մասնակի հիմնանորոգում, թանգարանի հիմնում և հարակից տարածքի բարեկարգում		
Ամսաթիվ Մայիս 2023	ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱՉԴԵՑՈՒԹՅԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՅՏ	Վարկած Rev02

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐԻ ՄԱՍ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶ



REPUBLIC OF ARMENIA
ARAGATSOTN MARZ

ԹԱԼԻՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

MUNICIPALITY OF TALIN

0501 ք. Թալին, Գալի 1
Հեռ.՝ (0249) 2-25-46, 2-24-19
Էլ. հասցե: taliniqaxaqapetaran@list.ru

№ 056/1207

0501 t. Talin
Tel: (0249) 2-25-46, 2-24-19
E-mail: taliniqaxaqapetaran@list.ru

26 12 2022 թ.

<<ԷՅ ԹԻ ԷՄ ԷՍ ՍՈԼՅՈՒՇՆՍ>> ՍՊԸ
ՏՆՕՐԵՆ ՊԱՐՈՆ Ա.ՏԵՐ-ԹՈՐՈՍՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Տեր-Թորոսյան

Ի պատասխան Ձեր 20.12.2022թ. թիվ 256-HSE գրության, հայտնում ենք, որ Թալինի համայնքապետարանը տալիս է իր նախնական համաձայնությունը՝ <<Դաշտադեմ ամրոցի մասնակի հիմնանորոգում, թանգարանի հիմնում և հուշարձանի հարակից տարածքի բարեկարգում>> նախագծի վերաբերյալ:

ԹԱԼԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



ՏԱՎՐՈՍ ՍԱՓԵՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆ ՄԱՐԶ ԹԱԼԻՆ ՀԱՄԱՅՆՔ
(մարզը, համայնքը)

ՆԱԽԱԳԾՄԱՆ ԹՈՒՅՆՏՎՈՒԹՅՈՒՆ
(ՀԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ)

ՍՈՒՑՆ ՀԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔԸ ՏՐՎՈՒՄ Է 06. 05. 2022թ.-ԻՆ
ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ԹԻՎ 11 ԱՌԱՋԱԴՐԱՆՔԻ ՓՈԽԱՐԵՆ (ՀԻՄՔ ԷՍՔԻԶԱՅԻՆ ՆԱԽԱԳԾԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ)

N 16 25. 04. 2023թ.

Օրյեկտ „Դաշտադեմ ամրոցի մասնակի հիմնանորոգում, թանգարանի հիմնում և հուշարձանի
հարակից տարածքի բարեկարգում „ ենթաձրագրով նախատեսված՝
(օրյեկտի անվանումը, կառուցում, վերակառուցում, ուժեղացում, վերականգնում, գործառնական
նշանակության փոփոխություն)

Դաշտադեմի ամրոցի կառույցների վնասված հատվածների վերականգնման/ամրակայման,
թանգարանային շենք կառուցման, մեծ պարսպի ներսում գտնվող բնակելի, կիսաքանդ շինության և
նախկինում որպես դպրոց օգտագործվող շենքի ապամոնտաժման, ամրոցի տարածքի բարեկարգման,
քայլուղիների, աստիճանների, ցուցանակների, հանգստի հարթակների և այլն, տարածքի արտաքին
լուսավորության, ինչպես նաև՝ ամրոցի մուտքի մոտ կայանատեղու կազմակերպման, մուտքի հարթակի և
հուշարձանին ու կայանատեղուն մոտնեցնող ճանապարհի վերականգնման և կահավորման, մուտքի
հատվածում կամ թանգարանի շենքի հետ համատեղված հանրային գուգարանի և տոմսավաճառակետի
կառուցման, շենք/շինությունների համար ջրամատակարարման, էլեկտրամատակարարման գծերի
կառուցման, կոյուղագծի և կոյուղու մաքրման սարքավորումների տեղադրման,
աղբամանների, նստարանների և բարեկարգման այլ տարրերի տեղադրման աշխատանքների համար հար
(հակիրճ բնորոշումը, հզորությունը)

_____ նախագծային փաստաթղթերի մշակման համար:

4-րդ կատեգորիա: << Աշխատանքային նախագիծ >> փուլ _____
ոիսկայնության աստիճանը (կատեգորիան), նախագծման փուլերը և այլն)

Գտնվելու վայրը ՀՀ Արագածոտնի մարզ Թալին համայնք, Դաշտադեմ բնակավայր 14-րդ փող. 10
ծածկագիր (02-035-0035-0006, 02-035-0036-0024, 02-035-0036-0023, 02-035-0036-0012, 02-035-0036-0021, 02-
035-0036-0013, 02-035-0036-0020, 02-035-0036-0014, 02-035-0036-0019, 02-035-0036-0016, 02-035-0036-0018)
(մարզի, համայնքի, փողոցի անվանումները, շենքի համարը, հողամասի ծածկագիրը)

Կառուցապատող Հայաստանի Տարածքային Զարգացման հիմնադրամ (ՀՏԶ), ի դեմս՝ ՀՏԶ-ի գործադիր
տնօրեն Սարգիս Բաղինյան Երևան 0037, Կ. Ուլնեցու 31 շ. հեռ՝ (37410)240159, (37410)247123, էլ. հասցե՝
atdf@atdf.am

(կազմակերպության անվանումը, գտնվելու վայրը, ֆիզիկական անձի անունը, ազգանունը,
բնակության վայրը, հեռախոսահամարը, էլեկտրոնային հասցեն)

Առաջադրանքի տրամադրման հիմքը՝ 13.04.2023թ թիվ Ե/01/646-23 գրությունը/հայտը, հայտին կից
Էսքիզային նախագիծը և Դաշտադեմի արգելոցի մասով՝ 03.09.2021թ տրված 03092021-02-0041
սեփականության իրավունքի վկայականը

(կառուցապատման նպատակով ՀՀ օրենսդրությամբ
սահմանված

կարգով հողամասի տրամադրման, անշարժ գույքի փոփոխման իրավունքը հաստատող անհրաժեշտ
փաստաթղթերը)

Առաջադրանքի գործողության ժամկետը 1(մեկ) տարի
(N 1 հավելվածի 32-րդ կետին համապատասխան)

ՆԱԽԱԳԾՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

(աստղանիշով () նշված դրույթների գրաֆիկական արտացոլումը տրամադրվում է կից ներկայացվող
ամփոփ սխեմայով՝ Մ 1:500)*

1. Հողամասը գտնվում է

Արագածոտնի մարզ Թային համայնք, Դաշտաղեմ բնակավայր
14-րդ փող. 10: Դաշտաղեմ ամրոցի տարածքը, Մեծ պարսպի
մուտքի դիմացի համայնքային սեփականություն հանդիսացող
հողամասը և դրանից ձախ՝ կայանատեղու կազմակերպման
համար հատվածը հուշարձանին և կայանատեղիին մոտեցնող
ճանապարհահատվածը՝ մոտ 1720քմ, ինչպես նաև մոտ 100քմ
հողամաս, նախնական Մեծ պարսպից դուրս դեպի հարավ
կոյուղու մարման կայանի/սարքավորումների տեղադրման
համար:

Հատուկ պահպանվող տարածքների նպատակային՝
պատմական և մշակութային գործառնական նշանակության

Բնակավայրերի նպատակային՝ քնդհանուր օգտագործման
գործառնական նշանակության

(հողամասի դիրքը քաղաքաշինական միջավայրում, դրա
նպատակային և գործառնական նշանակությունը)

2. (*) Հողամասի չափերը

Դաշտաղեմ ամրոցի տարածքը, մոտ 3.0 հա, Համայնքային
հողամասը մոտ 900քմ, ճանապարհի հատվածը՝ մոտ 1720քմ,
ԿՄԿ-ի համար անհրաժեշտ հողամասը՝ 100-120քմ.

(հողամասի սահմանները՝ կոորդինատային նշահարմամբ,
մակերեսը (հա)

3. Հողամասի առկա վիճակը

Դաշտաղեմի ամրոցը՝ ներառում է միջնաբերդ-դոյակը բոլորող
աշտարակավոր պարսպապատը, ամրոցապարիսպը, եկեղեցին,
գաղտնուղին, ջրավազանները և այլ կառույցներ: Տարածքում
առաջին շինարարական կառուցապատումները վերագրվում են
ուրարտական ժամանակաշրջանին, ապա՝ վաղ միջնադարից
շարունակական հավելումներով ձգվում մինչև XIX դար: Մուտքի
հատվածը և ճանապարհը մասամբ ասֆալտապատ են, մասամբ
գրունտային:

(ռելիեֆի բնութագիրը, շենքերի (այդ թվում՝ քանդման ենթակա)
առկայությունը (օգտագործումը, նշանակությունը,
հարկայնությունը, շինարարական նյութերը և այլն).`

4. (*) Տրանսպորտային պայմանները

Թային համայնք, Դաշտաղեմ բնակավայր 14-րդ փողոց
(ճանապարհների առկայությունը, երկաթուղային տրանսպորտի
մոտեցումները և այլն)

5. (*) Ինժեներական ցանցեր

և սարքավորումներ

(ջրամատակարարման,

կոյուղու, գազամատակարարման, տաք
ջրի մատակարարման,

Հողամասին հարող տարածքում առկա են

էլեկտրահաղորդման գիծ, գազի գիծ, ջրամատակարարման գիծ
/սխեման կցվում է/

(նախագծվող հողամասով կամ կից տարածքով անցնող
ինժեներական ենթակառուցվածքները, այդ թվում՝

6. (*) Կից հողամասեր

Մկրտիչ Նորոյան և Օձասար, ՄՊԸ
(կից հողօգտագործումների անվանումը և դրանց սահմանները՝
համաձայն ներկայացված սխեմայի)

7. Բնության հատուկ պահպանվող և
(կամ) պատմամշակութային
հուշարձանների տարածքներ
(պահպանական գոտիներ)

„Դաշտադեմ ամրոց“, արգելոց

(հուշարձանի անվանումը, կարգավիճակը և այլն)

8. (*) Հատակագծային
սահմանափակումներ

չկա

(տեղանքում գործող արտադրական, պաշտպանվող
օբյեկտների, ինժեներատրանսպորտային
ենթակառուցվածքների և այլ օբյեկտների նկատմամբ
սահմանափակումները, այդ թվում՝ սերվիտուտները)

ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՊԱՀԱՆՁՆԵՐԸ

(աստղանիշով (*) նշված դրույթների գրաֆիկական արտացոլումը տրամադրվում է կից ներկայացվող
ամփոփ սխեմայով՝ Մ 1:500)

9. Ճարտարապետահատակագծային
պահանջներ

Համաձայն էսքիզային առաջարկի

(էլեկտրոլ Հայաստանի Հանրապետության օրենսդրության և
նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներից,
առկա քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի
դրույթներից կամ դրանց բացակայության դեպքում՝
կազմավորված (կազմավորվող) քաղաքաշինական
միջավայրի պայմաններից)

9.1. (*) օբյեկտի հեռավորությունը կարմիր
զծից (մետր)

Ըստ պահանջվող նորմերի

9.2. (*) հեռավորությունը հարևան
հողակտորներից (օբյեկտներից) (մետր)

Ըստ պահանջվող նորմերի

9.3. թույլատրելի բարձրությունը (մետր)

Պարսպապատերի վերականգնման բարձրությունը՝ ըստ
նախագծի, թանգարանի շենքը, հանրային սանհանգույցը և
տոմսավաճառի կետը՝ մեկ հարկանի

9.4. կառուցապատման խտության
գործակիցը (կառույցի(կառույցների)
ընդհանուր մակերեսի հարաբերությունը
հողամասի մակերեսին)

Համաձայն էսքիզային առաջարկի

9.5. կառուցապատման տոկոսը
(կառուցապատվող (անջրանցիկ)
տարածքի հարաբերությունը հողամասի
մակերեսին՝ տոկոսներով (%)

Համաձայն էսքիզային առաջարկի

9.6. կանաչապատման տոկոսը
(կանաչապատ տարածքի
հարաբերությունը հողամասի մակերեսին՝
տոկոսներով (%)

Համաձայն էսքիզային առաջարկի

9.7. այլ պահանջներ

չկա

10. Հողամասում գտնվող շենքերի ու շինությունների քանդման կամ տեղափոխման (ապամոնտաժման) պայմանները և աշխատանքների հերթականությունը

Համաձայն էսքիզային առաջարկի

11. Ստորգետնյա, կիսանկուղի և առաջին հարկերի տարածքների օգտագործման պայմանները

Նախատեսել հնագետի մասնակցություն/հսկողություն՝ ինժեներական գծերի համար ստորգետնյա աշխատանքների իրականացման ընթացքում

12. (*) Ինժեներական ցանցեր և սարքավորումներ

Պահանջներ՝ գոյություն ունեցող և նախագծվող ենթակառուցվածքների ու ցանցերի նկատմամբ

12.1. (*) ջրամատակարարում, կոյուղի, տաք էջվում է ջրի մատակարարում

Ըստ համայնքի կողմից տրված պայմանների (համաձայն մատակարարող կազմակերպության տեխնիկական պայմանների)

12.2. (*) էլեկտրամատակարարում

Կցվում է Համաձայն „ՀԵՑ. ՓԲԸ“-ի կողմից տրված տեխնիկական պայմանների
(համաձայն մատակարարող կազմակերպության տեխնիկական պայմանների)

12.3. (*) գազամատակարարում

Կցվում է Չի նախատեսվում
(համաձայն մատակարարող կազմակերպության տեխնիկական պայմանների)

12.4. (*) էլեկտրոնային հաղորդակցության մալուխատար կոյուղու (ներառյալ դիտահորը) տեղադիրքը

Կցվում է Համաձայն գործող նորմերի
(համաձայն N 1 հավելվածի 58-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված ելակետային տվյալների)

12.5. թույլ հոսանքներ

Չի նախատեսվում

12.6. աղբահանություն

Պայմանագրային

13. Տարածքի ինժեներական նախապատրաստում

Համաձայն գործող նորմերի
(ոելիեֆի կազմակերպման, ջրահեռացման, ինժեներական պաշտպանության միջոցառումները)

14. Բարեկարգում

Ըստ ծրագրով նախատեսված միջոցառումների
(լանդշաֆտային պլանավորման վերաբերյալ պահանջները, կանաչապատում, ճարտարապետական փոքր ձևեր, ցանկապատում, գովազդ և այլն)

15. Շինարարական նյութեր

Տեղական շինարարական նյութեր՝ պատմական կառույցներին համահունչ գունային լուծումներով

16. Պաշտպանական կառույցներ

Ըստ գործող նորմերի
(արտակարգ իրավիճակներում մարդկանց և օբյեկտների պաշտպանության միջոցառ.)

17. Հակահրդեհային պահանջներ

Ըստ գործող նորմերի
(հակահրդեհային անվտանգության ապահովման

18. Հաշմանդամների և բնակչության սակավաշարժ խմբերի պաշտպանության միջոցառումներ

Ապահովել մատչելիությունը հաշմանդամների և բնակչության սակավաշարժ խմբերի համար/ՀՀՀՀ IV-II.07.01.2006/

19. Շրջակա միջավայրի պահպանում

Նախագիծը ներկայացնել ՀՄԱԳ փորձաքննության՝ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդված, 8-րդ մաս (շրջակա միջավայրը վտանգավոր ազդեցությունից բացառելու միջոցառումները)

20. Շինարարության կազմակերպում

Շինարարական աշխատանքների կազմակերպման նախագծում հաշվի առնել պատմամշակութային հուշարձանի տարածքում շինարարական աշխատանքների իրականացմանը ներկայացվող պահանջները
(առաջարկություններ շինարարության հետ կապված անբարենպաստ ազդեցության բացառման, քաղաքային տնտեսության և տրանսպորտի անխափան աշխատանքի ապահովման վերաբերյալ)

21. Առաջադրանքի գործողության ժամկետը և նախագծի մշակման փուլերը

1/մեկ/ տարի, մեկ՝ «Աշխատանքային նախագիծ» փուլ (նշվում են առաջադրանքի գործողության ժամկետը և նախագծի մշակման փուլերը)

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

22. Նախագծային փաստաթղթերի փորձաքննությանը ներկայացվող պահանջներ

Համաձայն ՀՀ կառավարության 2015թ. 596-Ն որոշմամբ հաստատված կարգի (Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված փորձաքննության տեսակը կամ նախագծողի երաշխավորագիրը՝ հղում կատարելով համապատասխան իրավական ակտին)

23. Միջանկյալ համաձայնեցում

ՀՀ ԿԳՄՄՆ /հուշարձանների պահպանության մասով/ (իրավասու մարմնի կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում շահագրգիռ մարմինների հետ էսքիզային նախագծի նախնական համաձայնեցում, նշվում է նաև առաջադրանքի փոփոխման հնարավորությունը՝ N 1 հավելվածի 89-րդ կետով նախատեսված դեպքում)

24. Հասարակական քննարկումներ

ՀՄԱԳ փորձաքննության շրջանակներում
(Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով)

25. Համաձայնեցումների կամ մասնագիտական եզրակացությունների ստացում

ՀՀ ԿԳՄՄՆ, ՀՀ ոստիկանության, թանգարանի մասով՝ հրդեհային անվտանգության համար լիազոր մարմին, «ՀԵՑ», ՓԲԸ
(նշվում են տվյալ օբյեկտի համաձայնեցման՝ օրենքով սահմանված պահանջները՝ հուշարձանների ու բնության պահպանության և այլ լիազորված մարմինների հետ, ինչպես նաև N 1 հավելվածի 56-րդ կետով սահմանված դեպքերում՝ ինժեներական ենթակառուցվածքի


26. Փոստային
բաժանորդային
պահարանների
տեղադրում

ըստ անհրաժեշտության

27. Այլ պայմաններ

չկա

ԹԱԼԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



ՏԱՎՐՈՍ ՍԱՓԵՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՇՏԱԴԵՄԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի
Դաշտադեմ համայնք, 1 փողոց, 22, Հեռ. 055 005 665

N 42

«24» հունիսի 2022թ.

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք


«Դաշտադեմ ամրոցի մասնակի հիմնանորոգում, թանգարանի հիմնում և հարակից տարածքի բարեկարգում» ենթաձրագրով նախատեսված շինարարական աշխատանքների նախագծային փաստաթղթերի մշակման համար խմելաջրի միացումը կտրվի Դաշտադեմ ամրոցի մուտքից դեպի ձախ գտնվող առաջին դիտահորից:

ՎԱՐՉԱԿԱՆ ՂԵԿԱԿԱՆՔ



Ա. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՀՈՂԱՅԻՆ ՉԱՆԳԱԾՆԵՐԻ ՔԱՐՏԵԶԱԳԻՐ
ՔԱՆԴԱՆՈՒՄ ԵՎ ԱՊԱՄՈՆՏԱԺՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԿԱՌՈՒՑՆԵՐ




ՀԵՌԱՑՎՈՂ ՇԻՆԱԴԲԻ ՆԱԽՆԱԿԱՆ ԾԱՎԱԼՆԵՐ

001	Հեռացվող հողի ծավալ Հեռացվող քարերի ծավալ	110 մ³ 30 մ³
002	Հեռացվող հողի ծավալ Հեռացվող քարերի ծավալ	150 մ³ 100 մ³
003	Հեռացվող քարերի ծավալ	50 մ³
004	Հեռացվող քարերի ծավալ	260 մ³
005	Հեռացվող հողի ծավալ	240 մ³
006	Հեռացվող քարերի ծավալ	110 մ³
007	Հեռացվող հողի ծավալ Հեռացվող քարերի ծավալ	60 մ³ 100 մ³
008	Հեռացվող հողի ծավալ Հեռացվող քարերի ծավալ	240 մ³ 50 մ³
009	Հեռացվող քարերի ծավալ	600 մ³
010	Հեռացվող հողի ծավալ Հեռացվող քարերի ծավալ	200 մ³ 40 մ³
011	Հեռացվող քարերի ծավալ	40 մ³
012	Հեռացվող հողի ծավալ Հեռացվող քարերի ծավալ	25 մ³ 20 մ³
013	Հեռացվող քարերի ծավալ	15 մ³
014	Հեռացվող հողի ծավալ Հեռացվող քարերի ծավալ	60 մ³ 110 մ³
015	Հեռացվող հողի ծավալ Հեռացվող քարերի ծավալ	30 մ³ 10 մ³
016	Հեռացվող հողի ծավալ ** (Նախագծվող կառույցի սահմաններով, հարկի և հիմքերի իջեցման չապով)	4000 մ³
Ընդհանուր հեռացվող հողի ծավալ		5115 մ³
Ընդհանուր հեռացվող քարերի ծավալ		1535 մ³

ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ

- Հողահանման, ապամոնտաժման գոտի
- Ապամենտաժվող շինություն
1. գոյություն ունեցող կիսաքանդ կառույց
2. Խանի պալատին ժամանակին ավելացված
կցակառույց *(ավելացվել է խորհրդային տարիներին
կողմից և ծառայել որպես դպրոց)



ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԾԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ ՀՈՒՇԱՐՁԱՆԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ

- 1

ԳԼԽԱՎՈՐ ՄՈՒՏՔ

Գլխավոր մուտքը տեղադրված է տարածքի հյուսիսային հատվածում, գոյություն ունեցող հրապարակի կողմից։ Մուտքը միայն հետիոտների համար։
- 2

ՄՈՒՏՔ ՀՈՒՇԱՐՁԱՆԻ ՏԱՐԱԾՔ

Հուշարձանի տարածք մուտքը կազմակերպվում է արտաքին պարսպի գլխավոր մուտքից։
- 3

ԹԱՆԳԱՐԱՆԻ ՇԵՆՔ

Թանգարանի շենքը տեղադրված է Արտաքին պարիսպի և խանի պալատի միջև։ Այն տեղակայված է գետնի տակ 0.00=1438.15 բացարձակ նիշից, 3,15 մ ներքև մուտքի հատվածի նիշից։ Ունի դեպի թանգարան տանող աստիճանավանդակ-ամֆիթատրոն և թեքահարթակներ, ինչպես նաև թեքահարթակ՝ տանող դեպի ամրոցի քայլուղի։
- 4

ԽԱՆԻ ՊԱԼԱՏ

Թանգարանի՝ դեպի ամրոցի քայլուղի տանող, թեքահարթակը եզրափակում է խանի պալատը, որը առաջարկվում է օգտագործել որպես բացօթյա սրճարան՝ շարժական սպասարկող կետով։
- 5

ՔԱՅՆՈՒՐԻ

Նախագծում նախատեսվում է քայլուղի, որը սկսվում է Գլխավոր մուտքից, շարունակվում թանգարանի թեքահարթակներով, անցնելով խանի պալատի մոտով դեպի Դաշտադեմի ամրոցի Ա մուտք։ Բ մուտքից ուղղությունն է դեպի խանի պալատ և կցվում է քայլուղուն։
- 6


ՆԵՐՔԻՆ ՔԱՅՆՈՒՐԻ

Ներքին պարիսպի քայլուղին ցուցադրվում է Ներսի պատմամշակութային արժեքների հաջորդական ուղղությունը։

ՊԱՇՏԱԴԵՄ ԱՄՐՈՑԻ ՄԱՍՆԱԿԻ ՀԻՄՆԱՆՈՐՈԳՈՒՄ,
ԹԱՆԳԱՐԱՆԻ ՀԻՄՆՈՒՄ ԵՎ
ՀՈՒՇԱՐՁԱՆԻ ՀԱՐԱԿԻՑ ՏԱՐԱԾՔԻ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ

ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ԼՈՒԾՈՒՄՆԵՐԻ ՀԱՅԵՑԱԿԱՐԳ
ՀԱՏԱԿԱԳԻԾ/ ԱԿՍՈՆՈՄԵՏՐԻԿ ՏԵՍԵՐ

Թանգարանի սենքերը և դրանց տեղադիրքը (մակերես՝ 496 մ²)



ԹԱՆԳԱՐԱՆԻ ՍԵՆՔԵՐԻ ՑԱՆԿ

1	Նախասրահ, տոմսարկղ, ժամանակավոր ցուցադրության սրահ, հուշանվերների վաճառակետ, կրթական ծրագրերի/փորձառությունների կազմակերպման համար հարմարեցված տարածք	117 մ²
2	Մշտական ցուցադրության սրահ	130 մ²
3	Միջնադարյան դարբնի արհեստանոց տաղավար	30 մ²
4	Միջնադարյան կաշեգործի արհեստանոց տաղավար	30 մ²
5	Միջնադարյան հյուսնի արհեստանոց տաղավար	30 մ²
6	Ս/Հ տղամարդկանց/ այցելուների	5 մ²
7	Ս/Հ կանաց/ այցելուների	5 մ²
8	Հանդերձասենյակ	4 մ²
9	Պահեստային սենյակ՝ թեմատիկ միջոցառումների կազմակերպման համար անհրաժեշտ պարագաները պահելու համար	13 մ²
10	Ֆոնդարան	27 մ²
11	Տեխնիկական սենյակ	31 մ²
12	Արխվային պահեստ	28 մ²
13	Աշխատասենյակ	38 մ²
14	Ս/Հ տղամարդկանց/ աշխատակազմի համար	4 մ²
15	Ս/Հ կանաց/ աշխատակազմի համար	4 մ²


ՏԵԽՆԻԿԱՏՆԵՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

Կառուցապատման մակերես	1072 մ²
Օգտակար մակերես	496 մ²
Շինարարական ծավալ	3000 մ³
Բետոնի նախնական ծավալ	2000 մ³
Վիտրաժների նախնական մակերես	250 մ²

ԹԱՆԳԱՐԱՆԻ ԳՈՏԻՆԵՐ

ՑՈՒՑԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՐԱՀՆԵՐ	ՍԱՆՏԱՆԱԳՈՒՅՑՆԵՐ	ՊԱՐԵՍՏԱՑԻՆ ՍԵՆՑԱԿՆԵՐ
ՏԱՐԱԿԱՐՆԵՐ	ԱՇԽԱՏԱՍԵՆՑԱԿՆԵՐ	ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍԵՆՑԱԿՆԵՐ

Հավելված 6



Ինվերտորային պոմպ Q=2.5մ³/ժամ, H=15մ, N=0.55կՎտ, 1 x 200-240Վ պարամետրերով 2 հատ(մեկը աշխատող մյուսը պահուստային) Grundfos CMBE 1-44 I-U-C-D-D-A մակնիշի (առաջարկող*)

Ներառվում է de 32 (PE)

Պոմպակայան Q=9.0մ³/ժամ, H=30մ, N=2 x 1.5կՎտ, 3 x 400-480Վ պարամետրերով 2 պոմպով (մեկը աշխատող մյուսը պահուստային) Grundfos CR 15-14 A-F-A-E-HQQE մակնիշի , ժոկեյ պոմպ Q=0.25 լ/վ, H=37մ, N=0.55կՎտ, 2 x 200-240Վ պարամետրերով Grundfos CMBE 1-44 I-U-C-D-D-A մակնիշի /հակահրդեհային համակարգի ղեկավարման վահանակով էլ. պաշտպանությունով 2 x 1.5կՎտ+1 x 0.55կՎտ/ (առաջարկող*)

Հավելված 8-ի շարունակություն

Պայմանական նշաններ

- Ջ 1 — Խմելու-տնտեսական սառը ջրամատակարարման համակարգի խողովակ
- Ջ 2 — Խմելու-տնտեսական տաք ջրամատակարարման համակարգի խողովակ
- Ջ 3 — Հակահրդեհային ջրամատակարարման համակարգի խողովակ
- Փական (Սողնակային կամ գնդային)
- Հակադարձ փական
- Ճկուն միացում



Թանգարանի ընդհանուր հատակագիծը (մակերես՝ 1072 մ²)

- Նախագծում օգտագործված բոլոր սարքավորումների տիպերը կարելի է փոխարինել, պահպանելով դրանց տեխնիկական ցուցանիշները:
- Հակահրդեհային ջրամատակարարման համակարգում օգտագործվող բոլոր մետաղական խողովակները երկշերտ ներկել:
- Արտաքին ցանցում անհրաժեշտ ճնշում ունենալու դեպքում կարելի է ջրամատակարարման համակարգի սնունդ իրականացնել շրջանցող գծով:

ՃԱՐՏԱՐԱՐՈՒՄԵՏՈՒՄ ԵՎ ԸՆԴԱՄԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՅՁԱՅՆԱՆԻ ԱՇԽԱՏՆԻ ՀԱՄԱՆԱԴՐՈՒՄ		ԴԱՇՏԱՐԱՐԵՄ ԱՐՈՒՑԻ ԱՄԱՆԱԿԻ ԴՈՒՆԱՆՈՐԴՈՒՄ, ԹԱՆԳԱՐԱՆԻ ԴՈՒՆՈՒՄ ԵՎ ԳՈՒԵՆԴԱՆԻ ԴՈՒՆՎՈՐԾ ՏԱՐԱՑԵԻ ԲԱՆԵՎԱՐԴՈՒՄ		ԱՇԽԱՏԱՆԱԶՄԻՆ ԱՄԱՆԱԳԻԾ	
Փեղ		Ն. Նամայան	ՓաՊ	ԻՍԽԱՆԱԿԱՆ ՑԱՆՔԻ ԵՎ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄԵՐԻ ՑԱ	
Ստուգեց		Ս. Բարսեղյան	ՍԲ	ՑՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄ ԵՎ ՑՐՎԵՆԱՑՈՒՄ ՑԱ	
Հաստատեց		Ս. Սամուելյան	ՍՍ	Գիրք	Թերթեր
		ԱՄԱՑԻՆ ԴԱՐՎԻ ՀԱՏԱՎԱԳԻԾ ՑՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄ ՑԱՆՔԵՐՈՒՄ		4.2	13
				ՁԿ-03	

ԴԱՇՏԱԴԵՄ ԱՄՐՈՑԻ ՄԱՍՆԱԿԻ ՀԻՄՆԱՆՈՐԳՈՒՄ,
ԹԱՆԳԱՐԱՆԻ ՀԻՄՆՈՒՄ ԵՎ
ՀՈՒՇԱՐՁԱՆԻ ՀԱՐԱԿԻՑ ՏԱՐԱԾՔԻ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ


ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԾԻ ՀԱՅԵՑԱԿԱՐԳ
ՀԱՏԱԿԱԳԻՑ



ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԾԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ ՀՈՒՇԱՐՁԱՆԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ

- 1 ԳԼԽԱՎՈՐ ՄՈՒՏԵ
Գլխավոր մուտքը տեղադրված է տարածքի հյուսիսային հատվածում, գոյություն ունեցող հրապարակի կողմից:
Մուտքը միայն հետիոտների համար:
- 2 ՄՈՒՏԵ ՀՈՒՇԱՐՁԱՆԻ ՏԱՐԱԾՔ
Հուշարձանի տարածքը մուտքը կազմակերպվում է արտաքին պարսպի գլխավոր մուտքից:
- 3 ԹԱՆԳԱՐԱՆԻ ԾԵՆԷ
 Թանգարանի շենքը տեղադրված է Արտաքին պարսպի և համալսարանի միջև: Այն տեղակայված է գետնի տակ 0.00-1438.15 բացարձակ նիշով, 3,15 մ լայնությամբ մուտքի հատվածի նիշից:
Ունի դեպի թանգարան տանող աստիճանավանդակ-ամփոփատրոն և թեքահարթակներ, ինչպես նաև թեքահարթակ՝ տանող դեպի ամրոցի քայլուղի:
- 4 ԽԱՆԻ ՊԱՆԱՏ
Թանգարանի՝ դեպի ամրոցի քայլուղի տանող, թեքահարթակը եզրակավում է համալսարանը, որը առաջարկվում է օգտագործել որպես բացօթյա սրճարան՝ շարժական սպասարկող կետով:
- 5 ԶԱՅՆՈՐԻ
 Նախագծում նախատեսվում է քայլուղի, որը սկսվում է Գլխավոր մուտքից, շարունակվում թանգարանի թեքահարթակներով, անցնելով համալսարանի մոտով, դեպի Դաշտադեմի ամրոցի և մուտք: Բոլոր քայլուղիները և դեպի համալսարանի պալատ և կցվում է քայլուղուն:
- 6 ՆԵՐՔԻՆ ԶԱՅՆՈՐԻ
 Ներքին պարսպի քայլուղին ցուցադրվում է ներքին պատմաշակութային արժեքների հաջորդական ուղղությունը:

ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ, ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ԱՄՐԱԿԱՅՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳ



- Ներքին պարսպի նաշված հատվածներում պատերի քանդում վերաշարում:
- Ներքին պարսպի և դրանից ներս գտնվող մոնումենտալ կառույցների նշված հատվածներում մասնակի վերականգնում և ամրակայում:

1 Արտաքին պարիսպների գլխավոր մուտքի կազմակերպում: (Նկ. 1-2)



Նկ. 1



Նկ. 2

2 "Դարբնոցային" փլատակների ամրակայում և պահպանված պատերի ամրակայում: (Նկ. 3-4)



Նկ. 3



Նկ. 4

3 Արտաքին պարիսպների ամբողջական վերականգնում: Սկզբնական փուլում 6 և 8-րդ աշտարակների միջև ընկած հատվածը: (Նկ. 5-6)
Անհրաժեշտ է նաև, ճաղավանդակով սահմանափակել մարդկանց և կենդանիների շարժը, 3-րդ և 4-րդ աշտարակների միջև, փլուզված հատվածից:



Նկ. 5



Նկ. 6

4 Միջնաբերդի մուտքի մետաղական դուռը փոխարինել: (Նկ. 7-8)
Մուտքերի մասնակի վերականգնում:



Նկ. 7



Նկ. 8

5 Միջնաբերդի 3-րդ աշտարակի հարկայնության վերականգնում, փայտե գերանների և տախտակամածի միջոցով: (Նկ. 9-10)



Նկ. 9



Նկ. 10

6 Ջրամբարի տանիքածածկույթի վերականգնում: Ներքին պատերի կրաշաղախի վերականգնում: Կուտակված աղբի հեռացում: Ջրամբար իջնող աստիճանի տեղադրում: (Նկ. 11-12)




Նկ. 11



Նկ. 12

ՏՏԵ2 ծրագրի՝ «Դաշտադեմ ամրոցի մասնակի հիմնանորոգում, թանգարանի հիմնում և հուշարձանի հարակից տարածքի բարեկարգում» (TUR- 20) ենթածրագրով նախատեսված աշխատանքների նախնական ուղվագիծ





Ձև N 4

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԳՄՍ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Թ Ո Ւ Յ Լ Տ Վ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն N 40

պատմության և մշակույթի անշարժ հուշարձաններում
հետախուզում և հնագիտական պեղումներ կատարելու

Ուժի մեջ է 2022թ.

Հայաստանի Հանրապետության պատմության և մշակույթի հուշարձանների պահպանության վարչությունը, համաձայն «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների և պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25-րդ հոդվածի ու միջգերատեսչական հնագիտական հանձնաժողովի դրական եղրակացության, թույլ է տալիս

պ.գ.թ. Բաբաջանյան Աստղիկ Ալեքսանդրի
(հնագիտական արշավախմբի ղեկավարի անունը)

կատարել հետախուզություն և հնագիտական պեղումներ
Դաշտադեմի միջնադարյան ամրոցում՝ ըստ սխեմայի
(հուշարձանի հասցեն և անվանումը)

Հնագիտական արշավախումբն իրավունք ունի նշված հնավայրում կատարել այն աշխատանքները, որոնք նախատեսված են միջգերատեսչական հնագիտական հանձնաժողովի կողմից հաստատված ծրագրով Հատուկ պայմաններ:

Հետախուզական և հնագիտական պեղումներ ձեռնարկողի ու հնագիտական արշավախմբի ղեկավարի հիմնական պարտավորությունները.

1. Կատարել հուշարձանի մանրամասն վավերագրումը (տեղագրական հանույթ, չափագրություններ, լուսանկարում) նախքան պեղման աշխատանքները սկսելը, ընթացքում և ավարտից հետո:
2. Ապահովել հուշարձանի, դրա տարածքի և պատմական միջավայրի անվտանգությունը, կատարել բացահայտված կառույցների ամրակայման անհրաժեշտ աշխատանքներ:
3. Պեղումների յուրաքանչյուր գործաշրջանից հետո 3 ամսվա ընթացքում վարչություն ներակայացնել աշխատանքների մասին գիտական հաշվետվություն՝ վավերագրման մանրամասն նյութերով:
4. Պեղումների ավարտից հետո սահմանված կարգով ապահովել ուսումնասիրությունների արդյունքների հրապարակումը:
5. Աշխատանքների կատարման ընթացքում հայտնաբերված գտածոները սահմանված կարգով հանձնել համապատասխան պետական թանգարան:
6. Պահպանել պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների և պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին ՀՀ օրենսդրության պահանջները:

ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի տնօրեն

Արսեն Բորոխյան

(հնագիտական պեղումներ ձեռնարկող կազմակերպության ղեկավարի կամ անձի ստորագրությունը)

ՀՀ ԿԳՄՍ նախարարի տեղակալ



Ա. Քոչարյան

...01... 08... 2022 թ.



(հնագիտական արշավախմբի ղեկավարի ստորագրությունը)

01 հունիսի 2022 թ.

⊕ ՀՀ ԳԱԱ ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ ՊՈԱԿ

ԱՍՏՂԻԿ ԲԱԲԱԶԱՆՅԱՆ

Հ Ա Շ Վ Ե Տ Վ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԴԱՇՏԱԴԵՄԻ ԴՂՅԱԿԻ 2022 Թ.

ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ՊԵՂՈՒՄՆԵՐԻ

ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ N40



ԵՐԵՎԱՆ – 2022

Անոտացիա

2022 թ. հոկտեմբերին ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի բազային ֆինանսավորմամբ պեղման և մաքրման աշխատանքներ իրականացվեցին Արագածոտնի մարզի Թալին համայնքի Դաշտադեմ գյուղի հարավային եզրին գտնվող ամրոցի տարածքում՝ միջնադարյան դղյակի շրջապարսպի և միջնաբերդի միջև ընկած հարավային և արևելյան հատվածներում, շուրջ 250 քմ մակերեսով¹: Պեղումները նպատակ ունեին ամբողջացնելու երկու մոնումենտալ աշխարհիկ կառույցների ճարտարապետական նկարագիրը, հստակեցնելու դրանց գործառույթը և նախապատրաստելու ամրակայման և վերականգնման համար: Արդյունքում ամբողջացան դեռևս 2015 թ. պեղումներով բացված 13-րդ դ. «հանդիսավոր դահլիճ»-ի հյուսիսարևելյան հատվածը, շրջապարսպի հարավային կամարակապ դարպասի նախասրահին հարակից հատվածը և ավարտին հասցվեցին հարավային շրջապարսպին կցակառուցված՝ 14-րդ դարով թվագրվող երկայնաձիգ ուղղանկյուն շենքի («սեղանատան») պեղումները:

2022 թ. իրականացվեցին նաև մաքրման աշխատանքներ միջնաբերդի և հարավային կամարակապ դարպասի միջև հատվածում, շրջապարսպի N 7 աշտարակի առջև, միջնաբերդի N3-4 աշտարակների միջև հողաթումբը և հեռացվեցին դեռևս 2015 թ. պեղումներով բացված շտեմարանների՝ քարակույտերի վերածված պատերը F3 քառակուսում (որոնք փաստագրված և չափագրված են):

Ներածություն

Դաշտադեմի ամրոցը Հայաստանի ամրաշինական համակարգի եզակի համալիրներից մեկն է, որը թեև 19-րդ դարից եղել է հայ ճարտարապետության պատմության ուսումնասիրողների ուշադրության կենտրոնում, այնուամենայնիվ նրա ճարտարապետական հորինվածքի և, ընդհանրապես, հիմնադրման պատմության համակողմանի ուսումնասիրությունը լիարժեք իրականացված չէ: Տեղակայված լինելով Արտենի լեռան հարավարևելյան կողմում տարածվող սարահարթի վրա (ծ.մ. 1450 մ)՝ ամրոցը հյուսիս-արևմուտքից գերիշխող դիրք ունի Արարատյան դաշտի նկատմամբ:

¹ Արշավախմբի կազմը՝ Ա. Բաբաջանյան (ղեկավար), Ս. Աղայան (ճարտարապետ):

Զարգացած միջնադարում այն գտնվում էր Դվինից Անի տանող քարավանային տարանցիկ ճանապարհների վրա և վերահսկում ու ապահովում էր այդ ճանապարհների անվտանգությունը (նկ. 1):

Ամրոցը ներառում է միջնադարյան դղյակը², որն, իր հերթին, պարփակված է 19-րդ դարի սկզբին կառուցված արտաքին մեծ պարսպաշարով: Ամրոցից դուրս՝ հարավային կողմում լայնատարած գյուղատեղին է՝ բնակելի ու արտադրական կառույցների ավերակներով, գերեզմանոցներով ու առանձին կանգնեցված խաչքարերով (նկ. 2, 3):

Միջնադարյան դղյակը բաղկացած է միջնաբերդից և շրջապարսպից, որոնց միջև ստեղծված ներքին բակի տարբեր հատվածներում տեղակայված են պալատական միանավ եկեղեցին, պեղումներով հայտնաբերված աշխարհիկ երկու շենքերը, ջրամատակարարման համակարգը՝ ստորգետնյա ջրամբարներով և ջրատարով, տնտեսական նշանակության այլ կառույցներ³ (նկ. 4):

Դաշտադեմի ամրոցի հիմնադրման և պատմության վերաբերյալ գրավոր սկզբնաղբյուրները սակավաթիվ են, այդ իսկ պատճառով պեղումներով հայտնաբերված հնագիտական նյութն ու ճարտարապետական կառուցվածքները նրա ուսումնասիրության հիմնական աղբյուրն են:

Ուսումնասիրության պատմությունը

Դաշտադեմի (նախկինում՝ Ներքին Թալին) ամրոցի նկարագրությունն առաջին անգամ տվել է Հ. եպս. Շահխաթունյանցը դեռևս 19-րդ դ. առաջին կեսին⁴, որին հետագայում մեծ մասամբ կրկնել է Ղ. Ալիշանը⁵: 20-րդ դարի սկզբին հուշարձանն այցելել և նկարագրել է Թ. Թորամանյանը⁶, իսկ 1946 թ. ՀՍՍՀ Հուշարձանների

² *Ամրոց* եզրույթն օգտագործելիս ի նկատի ունենք ողջ համալիրը: *Դղյակ* եզրույթը վերաբերում է միայն ներքին շրջապարսպով ամփոփված հատվածին, որն, ինչպես ցույց է տալիս ճարտարապետական նկարագիրը, զարգացած միջնադարյան շրջանի դասական դղյակի օրինակ է:

³ Դղյակի ճարտարապետության մասին մանրամասն տե՛ս Բաբաջանյան, Աղայան 2022, Լրաբեր հասարակական գիտությունների, N 2, 268-286:

⁴ Շահխաթունյանց 2014, 240-243:

⁵ Ալիշան, 1890, 140-142:

⁶ Թորամանյան 1948, 130, 170-171, 251-252:

պահպանության կոմիտեի գիտական արշավախումբը՝ Հ. Եղիազարյանի ղեկավարությամբ⁷:

Դաշտադեմում հնագիտական առաջին պեղումներն իրականացվել են 1989-1990 թթ. (ղեկ. Ե. Ասատրյան)՝ ՀՀ հուշարձանների պահպանության և օգտագործման գլխավոր վարչության վերականգնման աշխատանքների ծրագրով, որոնց արդյունքում բացվել էին ներքին պարսպաշարի հյուսիսային հատվածը և պարսպապատի և միջնաբերդի միջև ընկած տարածքը⁸: 2005-2007 թթ. ամրոցում հնագիտական ու վերականգնողական աշխատանքներ են տարվել պատմամշակութային հուշարձանների պահպանության և զբոսաշրջության զարգացման պետական ծրագրի շրջանակներում: Աշխատանքներին զուգահեռ Իտալիայի Հայկական մշակույթի ուսումնասիրության և վերականգնման կենտրոնի մասնակցությամբ պեղվեց առաջին պարսպաշարի գլխավոր կամարակապ մուտքի ներքին հատվածը⁹, իսկ 2011 թ. պատմամշակութային ժառանգության գիտահետազոտական կենտրոնի կողմից պեղումները կենտրոնացվեցին ամրոցի արևմտյան և հարավարևմտյան հատվածներում՝ միջնաբերդի ու պարսպապատի միջև¹⁰: 2008, 2011-2012 թթ. ամրոցում պեղումներ է իրականացրել ֆրանսիական արշավախումբը՝ (ղեկ.՝ Ի. Օժե), առաջին պարսպաշարի մուտքի ներքին և արևմտյան պարսպապատի ներքին և արտաքին հատվածներում¹¹:

2015 թ. «10-րդ դարի Դաշտադեմ ամրոցի ավերակների պահպանում, 1-ին փուլ» ծրագրով ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի արշավախումբը (ղեկ.՝ Հ. Մելքոնյան) լայնածավալ պեղումներ իրականացրեց առաջին պարսպաշարի և միջնաբերդի միջև ընկած հյուսիսարևելյան ու արևելյան հատվածներում՝ շուրջ 1000 քմ մակերեսով, որոնց արդյունքում բացվեցին քառասյուն «հանդիսավոր սրահը» և ներքին պարսպապատի երեք կիսաբոլոր աշտարակները, որոնցից երկուսն արևելքում ձևավորում են երկրորդ մուտքը¹²:

⁷ Եղիազարյան 1947, թ. 13-17, Եղիազարյան 1971, 58-60:

⁸ Ասատրյան 1991, 113-114:

⁹ Սարգսյան 2007, 35-37:

¹⁰ Ալեքսանյան, Միրիջանյան 2012, 102-106:

¹¹ Augé et al. 2020, 211-288.

¹² Melkonyan et al. 2017.

2018 թ. «10-րդ դարի Դաշտադեմ ամրոցի ավերակների պահպանում, 2-րդ փուլ» ծրագրով պեղումներն իրականացվեցին դղյակի հարավային և հարավարևմտյան մասում՝ շուրջ 550 քմ մակերեսով, որի արդյունքում բացվեցին շրջապարսպի ևս չորս աշտարակները՝ այսպիսով ամբողջացնելով դրա հատակագիծը:

2015 և 2018 թթ. վավերացվեցին զարգացած միջնադարից (12-րդ դ.) մինչև 20-րդ դարն ընդգրկող երեք մշակութային շերտեր՝ 12-14-րդ դդ., 15-18-րդ դդ.՝ բազմաթիվ վերակառուցումների փուլերով և 19-20-րդ դդ.¹³: 2018 թ. պեղումներից հետո իրականացվել են նաև շրջապարսպի արևելյան և հարավարևելյան հատվածների վերականգնման աշխատանքները (Ճարտ.՝ Մ. Դանիելյան):

2021 թ. պեղումները շարունակվեցին դղյակի հարավային և հարավարևմտյան հատվածում՝ 2018 թ. տեղամասում (նկ. 5): 2021 թ. հուշարձանը ստացել է արգելոցի կարգավիճակ: Գիտական նպատակներից զատ՝ պեղման-մաքրման աշխատանքներ են տարվում՝ հուշարձանի տարածքը հնարավորինս բարեկարգելու համար, ինչպես նաև նախապատրաստելու հետագա ամրակայման/վերականգնման և թանգարանացման համար:

2022 թ. պեղումներն ուղղված էին երկու մոնումենտալ շենքերը բացելուն: Զուգահեռ իրականացվեցին որոշ հատվածների մաքրման աշխատանքներ(նկ. 6):

Պատմական ակնարկ

Դաշտադեմի դղյակը Անի մայրաքաղաքի շուրջ ձևավորված ամրոցների շղթայի հանգույցներից մեկն է և կառուցված է նույն սկզբունքներով, ինչ Տիգնիսի, Մաղասբերդի, Երազգավորս-Արալղի, Բագարանի, Մրենի (ներկայիս Թուրքիայի տարածքում), Վահրամաբերդի, Գուսանագյուղի, Հոռոմի, Անբերդի, Արուճի, Կոշի դղյակները¹⁴: Ըստ միջնադարյան ամրաշինական չափանիշների՝ ամրոցները կամ ամրացված բնակավայրերը կառուցվում էին անառիկ բարձունքներին՝ օգտագործելով տեղազրական դիրքը լրացուցիչ պաշտպանության համար: Ի տարբերություն դրանց՝ Դաշտադեմի

¹³ Babajanyan et al. 2021.

¹⁴ Հմմտ. Թորամանյան 1948, 123, 176, 194-195, 234-235. Յովհաննէսեան 1970, 744-745. Dangles, Prouteau 2005-2007. Dangles 2014. Dangles 2015. Հարությունյան 1978. Խաչատրյան 2017:

դղյակ-ամրոցը գուրկ է բնական անատիկությունից, այդ իսկ պատճառով օղակվել է բավական բարձր պարիսպներով:

Դաշտադեմի ամրոցի հիմնադրման և պատմության վերաբերյալ գրավոր սկզբնաղբյուրները սակավաթիվ են: Ըստ ճարտարապետական վերլուծության՝ նախնական կառույցը միջնաբերդի ուղղանկյուն հատակագծով թաղակապ շինությունն է (9.5×6.7 մ ներքին չափերով և 7.5 մ բարձրությամբ), որը կառուցվել է 11-12-րդ դարերի միջակայքում¹⁵: Միջնաբերդի պատերին պահպանվել են մի քանի վիմագրեր. տասնյակ վիմագրերի բեկորներ ի հայտ եկան 2015 և 2018 թթ. իրականացված պեղումներով¹⁶: Եվս մեկ արձանագիր բեկոր հայտնաբերվեց 2022 թ. (նկ. 41):

Առաջին թվակիր աղբյուրը միջնաբերդի հարավարևմտյան աշտարակի վրա պահպանված արաբատառ արձանագրությունն է, որի համաձայն՝ Սուլթան իբն Մահմուդ իբն Շավուր Շադդադյանը 1174 թ. սեպտեմբերին հիմնում է այս շինությունը¹⁷:

12-13-րդ դդ. սահմանագլխին, երբ հայ-վրացական միացյալ զորքը ազատագրում է Հայաստանը սելջուկներից, Արագածոտնի գավառն անցնում է Զաքարյաններին: Դաշտադեմի ամրոցում նրանք լայնածավալ վերակառուցումներ են անում, ինչի մասին վկայում է Աղպուղա Զաքարյանի արձանագրությունը (ՉԾԶ=1307 թ.)¹⁸: Զաքարյան իշխանական տան գործունեության շրջանը Դաշտադեմի ողջ համալիրի պատմության ու ճարտարապետության ամենաակնառու փուլն է, որի ընթացքում միջնաբերդը համալրվում է կիսաբլուր աշտարակներով և օղակվում շրջապարսպով:

¹⁵ Ներկայումս Դաշտադեմի ամրոցը Մշակույթի նախարարության կազմած *Դաշտադեմի պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ցանկ*-ում գրանցված է որպես 7-19-րդ դդ. ամրոց: Այս թվագրումը, սակայն, հիմնավորված չէ ո՛չ գրավոր աղբյուրներով, ո՛չ հնագիտական նյութով: 2015, 2018, 2021 թթ. պեղումներով հայտնաբերված հնագիտական տարաբնույթ նյութի քննությամբ ևս 12-րդ դարից վաղ թվագրվող շերտ առայժմ չի վավերացվել: Գրավոր սկզբնաղբյուրների սակավության պարագայում դղյակի հիմնադրման և ճշգրիտ թվագրման համար չափազանց կարևոր է շարունակել պեղումները միջնաբերդի ներսում և միջնաբերդի և ներքին պարսպաշարի միջև ընկած հատվածներում:

¹⁶ Melkonyan et al. 2017, 268-270.

¹⁷ Хачатрян 1987, 46, N 1.

¹⁸ Միջնաբերդի այդ հատվածի փլուզման հետևանքով այդ արձանագրությունը ոչնչացել է: Բարեբախտաբար, պահպանվել է այդ արձանագրության լուսանկարը, որը մեզ սիրով տրամադրելու համար շնորհակալություն ենք հայտնում պ.գ.թ. Գ.Գ. Սարգսյանին (Տե՛ս Babajanyan et al. 2021, 374, fig. 5): Արձանագրությունը ժամանակին հրատարակել են Շահխաթունյանցը, Ալիշանը և Թորամանյանը, սակայն թվականը վերձանել են ՉԺԶ=1267 թ.: Հմմտ. Շահխաթունյանց 2014, 241. Ալիշան 1890, 141. Թորամանյան 1948, 130:

14-րդ դարի առաջին քառորդից հետո դրական իր վարչական դերակատարությունը կորցրել է: 15-18-րդ դդ. դրական տարածքում հիմնված բնակավայրի կենսագործունեության մասին պատմական աղբյուրների բացը լրացնում են հնագիտական տվյալները (նորահայտ ճարտարապետական կառույցներն ու պեղումներով հայտնաբերված հնագիտական հավաքածուն), որոնց հիման վրա կարող ենք եզրակացնել, որ 14-րդ դարից հետո այն վերածվել էր գյուղական տիպի բնակավայրի¹⁹:

1812 թ. Երևանի Հուսեյն խանը ձեռնարկում է արտաքին մեծ պարսպապատի և պետական պահանջմունքների համար այլ կառույցների ու ամբարների շինարարությունը: Ռազմական հենակետ դառնալով ռուս-պարսկական բախումների ժամանակ՝ 19-րդ դարում ամրոցն իրականացնում էր դեպի Շիրակ գնացող ճանապարհի վերահսկողությունը²⁰: 20-րդ դարում ամրոցի տեղում հաստատվում են Արևմտյան Հայաստանից Մեծ եղեռնի հետևանքով գաղթյալ բնակչությունը: Ամրոցի տարածքում բնակեցումը շարունակվում է ընդհուպ մինչև 21-րդ դ. սկիզբ:

Պեղման մեթոդաբանությունը

Պեղումներն իրականացվել են նույն մեթոդաբանությամբ, ինչ նախորդ տարիներին (տե՛ս նախորդ հաշվետվությունները): Քանի որ պեղման նպատակը դրական 12-14-րդ դդ. շրջանն՝ իր համակառույցներով վերականգնելն է, վերին շերտերը պեղելուց, մանրամասն չափագրելուց և լուսանկարելուց հետո, հեռացվում են: Նախորդ տարիների փորձը ցույց տվեց, որ դրանք պահպանելն ապարդյուն է²¹: Բանն այն է, որ հուշարձանն ակտիվ զբոսաշրջային վայր է, բացի այդ հուշարձանի տարածքը բաց է մնում և չի վերահսկվում գյուղական համայնքի անասունների հոսքը արգելելու համար, որի հետևանքով քանդվում են 15-18-րդ դդ. կոպտատաշ քարերով արդեն խարխուլ կառուցվածքները:

¹⁹ Melkonyan et al. 2017, 263-292; Ալեքսանյան, Միրիջանյան 2012, 103-104; Սարգսյան 2007, 36-37.

²⁰ Շահխաթունեանց 2014, 242

²¹ Պահպանման որոշ նկատառումներից ելնելով՝ վերին շերտերի որոշ պատեր ժամանակավորապես թողնվում են՝ 13-14-րդ դդ. կառուցվածքների քայքայումը կանխելու նպատակով:

Հնագիտական նյութի նախնական ուսումնասիրությունը կատարվել է դաշտում, դրանք տեսակավորվել են, հաշվառվել, դիագնոստիկ նյութը տեղափոխվել է կամերալ մշակման համար:

Շերտագրությունը

2022 թ. պեղումները կենտրոնացան երկու մոնումենտալ կառույցների ներքին ու արտաքին հատվածներում: Ինչպես ողջ դղյակում, այնպես էլ այդ երկու կառույցներում իրականացված պեղումների արդյունքներով փաստագրվեցին 3 մշակութային շերտեր՝ 12-14-րդ դդ., 15-18-րդ դդ. և 19-20-րդ դդ.:

19-20-րդ դդ. շերտը դեռևս պահպանվել էր «հանդիսավոր դահլիճի» հյուսիս-արևելյան հատվածում (նկ. 7): Ներկայացված է ոչ կանոնավոր սալաքարերով ստեղծված հատակով, որի մեջ օգտագործված էին ավելի վաղ թվագրվող քարե արտադրական գործիքների (երկանք) կոտրված բեկորներ: Սալահատակը դրված էր մանր խճաքարերով ու հողով մոտ 0.4-0.5 մ հաստությամբ լիցքի վրա: Այդ լիցքի տակ բնական ժայռն է, որի անհարթությունները տեղ-տեղ հարթեցված էին դեղին տոփանված կավահողի շերտով: 20-րդ դարի սալահատակի տակ բացվեցին 4 թոնիրներ և երկու օջախներ (նկ. 8, 32): Վերջիններս օգտագործումից դուրս եկած անոթների իրաններ էին: Լիցքը լի էր 12-20-րդ դդ. խառնված հնագիտական նյութով, իսկ թոնիրները հիմնականում լցված էին 20-րդ դ. աղբով և ոսկորներով:

15-18-րդ դդ. շերտերն արդեն փաստագրված էին 2018 և 2021 թ. պեղումների ընթացքում, որոնք ներկայացված են հարավային պարսպապատին կցակառուցված բազմասենյականոց համալիրով, քառակուսի, կլոր հատակագիծ ունեցող քարե կառույցներով՝ շտեմարան-հորերով, անկանոն պատերի մնացորդներով՝ շարված անմշակ և երկրորդական օգտագործման քարերով (նկ. 7): Այդ շերտը բազմաթիվ շինարարական փուլերով վավերացվում է նաև գլխավոր դարպասի թաղակիր նախասրահի արևելյան հատվածում (նկ. 7, 11):

13-14-րդ դդ. շերտին է վերաբերում «հանդիսավոր սրահի» արևելյան պատի շարունակությամբ բացված հիմնապատը, որը միանում է շրջապարսպին (նկ. 8-9, 32-33): Եվս մի հիմնապատ բացվեց «հանդիսավոր սրահի» պեղված հատվածի կենտրոնում արևելք-արևմուտք ուղղությամբ: 13-14-րդ դդ. է վերաբերում «սեղանատունը», որն ընկած

է 15-18-րդ դդ. թվագրվող բազմասենյականոց համալիրի տակ: 2022 թ. պեղվեց այդ մոնումենտալ շենքի ներքին հատվածը (նկ. 8, 10):

2021 թ. պեղումների արդյունքները

«Սեղանատուն»

2022 թ. պեղումները սկսեցինք 2021 թ. պեղավայրում, շրջապարսպի N8 աշտարակի դիմաց կցակառուցված 18-19-րդ դդ. թվագրվող բնակարանային համալիրի սենյակներից մեկի՝ (ընդգրկում է I-6 և մասամբ J-6, I-7 քառակուսիները) հյուսիսարևելյան պատը (Locus I-6.1.4) և I-6.1.2 պատի մնացած հատվածը հեռացնելով, որոնք փակում էին սեղանատան բուն պատերը (նկ. 12-16): I-6.1.4-ի հյուսիսային անկյունում 2021 թ. բացվել էին իրար կից 2 թոնիրներ՝ I-6.3.1.1՝ 0.6 մ տրամագծով և I-6.3.1.2 (նկ. 17): Երկրորդը ընկնում է I-6.1.4 պատի և սալահատակի տակ և պեղել չհաջողվեց: Դա ծածկվել էր՝ 2022 թ. պատի հետ միասին պեղելու նպատակով, սակայն, ըստ երևույթին, գանձագողության հետևանքով բացվել էր և քանդվել: I-6.3.1.2 թոնրի պահպանված չափերն են տրամագիծը՝ 70 սմ, բարձրությունը՝ 60 սմ (նկ. 18):

Թոնրի կողքին I-6.1.4-ի տակ և I-6.3.2 քառակուսի կառուցվածքին կից հայտնաբերվեց մեծակտոր խորանարդաձև քար (I-6.3.2.1, 76x90x40/55 սմ չափերով)՝ վերնամասում պայտաձև փորվածքով, որի մեջ հողը վառ դեղնաանարնջագույն է՝ մոխրի մնացորդներով (նկ. 19): Փորվածքի չափերն են 56x60 սմ, խորությունը՝ 13-14 սմ: Ամենայն հավանականությամբ, այդ փորվածքի մեջ թոնիր էր տեղադրված եղել, քանի որ շուրջը հայտնաբերվեցին թոնրի կոտրված բեկորներ, մոխրափոշի և կենդանական ոսկորներ: I-6.1.4-ի պատի լիցքի մեջ հնագիտական նյութը խառնված էր: Առկա էին իրանական ներմուծած շողյուն հախճապակի (նկ. 44), ճարտարապետական դետալ (նկ. 40բ), ինչպես նաև 14-18-րդ դդ. թվագրվող խեցեղեն գտածոներ:

I-6.1.2 պատը հեռացնելուց հետո բացվեց սեղանատան միջնորմը (պահպանված բարձրությունը՝ 0.6-0.7 մ), որը սակայն հետագա վերակառուցումների հետևանքով պահպանվել է քայքայված վիճակում: Մասնավորապես, հիմքի մասում երկու ճակատների կողմից դիտվում են շարվածքի ձևախախտումներ (նկ. 15-16):

Սեղանատան վրա հետագայում կառուցված բազմասենյականոց համալիրի բոլոր պատերը հեռացվեցին (նկ. 7, 20): Դրանց միջնալիցքի նյութը նույնպես խառն է՝ 12-19-րդ

դդ. խեցեղենով, 19-րդ դ. փամփուշտներով: Բազմասենյականոց համալիրի սալահատակի մեջ տեղադրված էին փայտե սյան խարիսխներ, որոշ տեղերում կրկնակի սալահատակ (նկ. 8): Դրա քարերի մեջ օգտագործված էին ինչպես 13-14-րդ դդ. սրբատաշ քարերը, այդ թվում և վարպետի նշաններով, այնպես և տապանաքարերի, քառանիստ կոթողի բեկորներ (նկ. 21-22, 40): Սալահատակը դրված էր մոտ 0.5-0.6 մ հաստությամբ լիցքի վրա: Կտրվածքում ներքևից վերև նկատվում են իրար հաջորդող մի քանի շերտեր. 1. բնական ժայռի վրա տարածվող տուֆի շերտերից բաղկացած խճի շերտ, 2. դեղին տոփանված կավահող, 3. մոխրաշերտ (որն, ըստ էության, կապված էր այդ հատվածում հայտնաբերված թոնիրների հետ), 4. հողալիցք (նկ. 23): Սալահատակի տակ սեղանատան հարավարևելյան կողմում հայտնաբերվեցին հինգ թոնիրներ (նկ. 24): Թոնիր N1-ը (տրամագիծը՝ 60 սմ) գտնվում է սեղանատան արևելյան անկյունում՝ խիստ քայքայված վիճակում: Թոնիր N2-ի (տրամագիծը՝ 55 սմ, պահպանված բարձրությունը՝ 45սմ) կողքին գտնվեց արձանագիր քարի մի բեկոր (նկ. 41): Թոնիրները բավական քայքայված էին՝ լի միայն մոխրափոշով: Դոյակի տարածքում հայտնաբերված գրեթե բոլոր թոնիրները ներդրված են հիմնաժայռի մեջ արված կլոր փորվածքներում: Եվս մի թոնիր N6-ը (տրամագիծը՝ 80 սմ, պահպանված բարձրությունը՝ 27սմ) հայտնաբերվեց K-5 քառակուսում՝ հիմնաժայռը հարթեցնող դեղին տոփանված հատակի տակ: Այն տեղադրված է ժայռի մեջ արված կլոր փորվածքում, թոնրի օդամուղը ևս փորված էր ժայռի մեջ (նկ. 25): Այս թոնրի մեջ հայտնաբերվեցին գրեթե ամբողջական թաս և ջնարակած ափսե, որոնք թվագրվում են 13-14-րդ դդ. (նկ. 42):

I-7 H-6 քառակուսիներում 1 մ լայնքով հետախուզահոր պեղվեց սեղանատան արևմտյան պատի երկայնքով՝ նրա արտաքին կողմում՝ ամրակայման/վերականգնման համար հիմքերը ստուգելու համար (նկ. 26-27): Վերին շերտերը վերաբերում էին 18-րդ դարին: Բացվեց մի երկճակատ պատ, որը ձգվում է շրջապարսպից դեպի սեղանատան պատի կենտրոնը: Հետախուզահորի կտրվածքում արձանագրվեց 75 սմ բարձրությամբ թոնիր: Այն ծածկվեց քարե շարվածքով՝ գանձագողության թիրախ չդառնալու համար: Վերին շերտում հայտնաբերվեցին քարե ծանրոց-կախիկ և սեֆյան դրամ (նկ. 45բ): Բացվեցին նաև շրջապարսպի աստիճանները: Ինչպես և ողջ հուշարձանում, այստեղ նույնպես հիմնաժայռը հարթեցված էր քարի և կավահողի պինդ շերտով:

Հարավային գլխավոր դարպասի նախասրահի հարակից տարածք

2022 թ. պեղումներ իրականացվեցին նախասրահի արևելյան թաղակիր պատին կցակառուցված սենյակի հատվածում, որի մեծ մասը պեղվել և չափագրվել էր 2018 և 2021 թթ. (նկ. 28, 11): Նախասրահի արևելյան թաղակիր պատին կից հայտնաբերվեցին երկու իրար հատվող պատեր, որոնք 15-17-րդ դդ. շերտի ստորին հորիզոնին են վերաբերում (նկ. 8, 29): L-2 քառակուսում, շրջապարսպի հարավային և արևելյան պատերի հատման մասում, բնական հիմնաժայռի բավական խորը փորվածքում պեղվեց թոնրի ստորին հատվածը (տրամագիծը՝ 75 սմ, պահպանված բարձրությունը՝ 40 սմ, պատերի հաստությունը՝ 3.5 սմ), որի մեջ ընկած էին թոնրի եզրաշուրթերը: Այդ թոնիրը, որը լցված էր մոխրափոշիով և քիչ քանակությամբ կենդանական ոսկորներով, վերաբերում է 19-20-րդ դդ. (նկ. 30):

Նախասրահի հարակից տարածքում վերին շերտի պատերը հեռացվեցին՝ հետագա վերականգնման նախապատրաստելու նպատակով: Բարեկարգման նպատակով բակի տարածքը ևս մաքրվեց ուշ շրջանի տեղաշարժված սալաքարերից:

«Հանդիսավոր սրահ»

Քառասյուն մոնումենտալ այս կառույցը պեղումներով բացվել էր դեռևս 2015 թ.: 2021 թ. արևմտյան պատին զուգահեռ բացվեց նոր հիմնապատ (տե՛ս նկ. 8): Ինչպես դղյակի ողջ տարածքում, այնպես էլ «հանդիսավոր սրահում» վավերացվել էին 12-20-րդ դդ. մշակութային շերտերը (տե՛ս նկ. 7): Քանի որ պեղումների հիմնական նպատակներից մեկը զաքարյան շրջանի համալիրի վերականգնումն է, ուստի վերին շերտերին վերաբերող կառուցվածքները մանրամասն չափագրվելուց հետո հեռացվել էին: Պահպանվել էր միայն հյուսիսարևելյան հատվածը, որը մի կողմից սահմանափակվում էր «հանդիսավոր սրահի» հյուսիսային և արևելյան պատերով, մյուս կողմից հյուսիսային պան խարսխին 19-20-րդ դդ. կցակառուցված պատով, որի մի մասը շարված էր դղյակի ծաղկուն շրջանին (13-14-րդ դդ.) վերաբերող զարդարուն քիվի քարերով (architectural spolia) (նկ. 31-32): Այդ մասում «հանդիսավոր սրահի» կանոնավոր սալահատակից 0.5 մ բարձր պահպանվել էր անկանոն շարվածքով 20-րդ դարի սալահատակ: 2022 թ. «հանդիսավոր սրահի» արևելյան պատի արտաքին կողմում մնացել էին ուշ շրջանի պատերի մնացորդներ (առկա էին նաև բետոնե պատեր), որոնք

հեռացվեցին: Արդյունքում բուն պատի շարունակությամբ բացվեց հիմնապատը (լայնքը՝ 1.1 մ), որը միանում է շրջապարսպին: Շրջապարսպին կից մասում բացվեց նաև կանոնավոր սալաքարերով շարված հատակի մի մասը, որից պահպանվել էր միայն երկու շարք: Սալահատակը ողջ արևելյան երկայնքով չի շարունակվում՝ հետագա միջամտությունների հետևանքով (նկ. 33): «Հանդիսավոր սրահի» արևելյան հատվածի կենտրոնում արևելք-արևմուտք ուղղությամբ բացվեց հիմնաժայռի վրա դրված հիմնապատ (լայնքը՝ 1.1 մ): Պեղվող հատվածի հյուսիսային կեսում մանր քարով և հողով լիցք էր արված՝ հարթելով հիմնաժայռի անհարթությունները: «Հանդիսավոր սրահի» հյուսիսային սյան խարսխի մոտ հայտնաբերվեց ժայռի վրա դրված թոնրի ստորին հատված (Թոնիր N4 – տրամագիծը՝ 50 սմ, պահպանված բարձրությունը՝ 24 սմ) և ճզմված անոթ, որը ծառայել է որպես օջախ: Թոնիրն ու օջախը լցված էին մոխրափոշիով (նկ. 8, 38):

«Հանդիսավոր սրահի» արևելյան հատվածի հարավային կեսում հայտնաբերվեցին երեք թոնիրներ և մեկ անոթ (նույնպես վերածված օջախի) (նկ. 34): Թոնիր N1-ը (տրամագիծը՝ 70 սմ, պահպանված բարձրությունը՝ 40 սմ, պատի հաստությունը՝ 4 սմ) լի էր 19-րդ դ. վերջ-20-րդ դ. սկ. թվագրվող խոհանոցային ամանեղենով (նկ. 35, 43): Առկա էին նաև խիստ քայքայված երկաթե խողովակի հատված և ձիու պայտ: Ամենայն հավանականությամբ, թոնիրը շարքից դուրս գալուց հետո վերածվել է պահեստահորի կամ աղբահորի:

Թոնիր N2-ը (տրամագիծը՝ 50 սմ, պահպանված բարձրությունը՝ 40 սմ, պատի հաստությունը՝ 6 սմ) բավական հաստապատ է, անբավարար թրծված և կրկնակի նորոգված: Այն լցված էր 20-րդ դարի աղբով (այդ թվում՝ կոշիկի ներբան, ապակե սափորի կանթ) և ձվի կեղևներով: Հատակին հայտնաբերվեցին նաև թաթակիշի քայքայված ձողը և երկաթե անոթոշ առարկա (նկ. 36):

Թոնիր N3-ը (տրամագիծը՝ 63 սմ, պահպանված բարձրությունը՝ 70 սմ, պատի հաստությունը՝ 2 սմ) ամբողջությամբ լցված էր բետոնի կտորներով, հարավային կողմում հայտնաբերվեց ասբեստից օդատար խողովակ, որի մեջ պլաստմասսե բանկա (նկ. 37): Այս թոնիրները կարծես ժամանակագրորեն հաջորդում են իրար, թվագրվում են 19-րդ դ. վ.-20-րդ դ. կեսեր:

Կարաս 1-ը մեծ անոթի մի հատվածն է, որը շարքից դուրս գալուց հետո վերածվել է օջախի (տրամագիծը՝ 40սմ, պահպանված բարձրությունը՝ 33 սմ) (նկ. 39):

Պեղումների ավարտին, սյան խարսխին կից շարված քիվի քարերը տեղափոխվեցին եկեղեցու ետնամաս: Քիվի տակ պատի ստորին շարը դեռևս չի հեռացվել՝ «հանդիսավոր սրահի» սալահատակի քայքայումը կանխելու նպատակով:

Հայտնաբերված հնագիտական հավաքածուները

2022 թ. պեղումներով հայտնաբերված հնագիտական հավաքածուն²² բաղկացած է քարե, մետաղե, խեցեղեն, ոսկրե գտածոներից՝ խեցեղենի գերակշռությամբ: Ուշագրավ գտածոներից են արձանագիր քարի բեկորը, 4 դրամները, ներմուծած շոդյուն հախճապակե թասի բեկորը, ոսկրե բռնակը (նկ. 40-45):

Նախնական վիճակագրական տվյալներով՝ «սեղանատան» սալահատակի տակ լիցքի մեջ 12-20-րդ դդ. ընդգրկող խառնված հնագիտական նյութի մեջ գերակշռում են 15-17-րդ դդ. թվագրվող գտածոները, իսկ «հանդիսավոր սրահի» սալահատակի տակ՝ 19-20-րդ դդ.: Չաքարյան շրջանին վերաբերող նյութը այդ հատվածներում համեմատաբար քիչ է:

Հաշվի առնելով ջնարակապատ խեցեղենի տեխնոլոգիական առանձնահատկությունները, որով կարելի է ճշգրտել թվագրության հարցերը, ապա հավաքածուներում «հանդիսավոր սրահի» նյութում գերակշռում է 12-13-րդ դդ., իսկ սեղանատան նյութում՝ 14-15-րդ դդ. ջնարակապատ խեցեղենը: Սա, իհարկե, վիճակագրական վերջնական արդյունքը չէ, սակայն լրացնում է Չաքարյան շրջանում կառուցապատման հաջորդական փուլերի և այդ շենքերի բնակեցման վերաբերյալ մեր ունեցած տվյալները:

Ամփոփում

Այսպիսով, 2022 թ. պեղաշրջանի ընթացքում ամբողջությամբ բացվեցին «հանդիսավոր սրահը», «սեղանատունը» և գլխավոր դարպասի նախասրահի թաղակիր պատերը: Սրանք կառուցվել են Չաքարյանների շրջանում, որը Դաշտադեմի ողջ համալիրի պատմության ու ճարտարապետության ամենաակնառու փուլն է:

²² Հնագիտական նյութը այժմ կամերալ մշակման փուլում է:

Ամփոփելով պատմական աղբյուրների, հնագիտական պեղումների արդյունքների և ճարտարապետության վերլուծության հիման վրա մեր ունեցած տվյալները՝ կարող ենք որոշակիացնել, որ Դաշտադեմի միջնադարյան դղյակը ակտիվ կենսագործել է 12-14-րդ դդ.: Կարևոր դիրք զբաղեցնելով Դվին և Անի քաղաքների միջև առևտրային ճանապարհների վրա՝ 13-րդ դարում և 14-րդ դարի առաջին քառորդում այն եղել է Զաքարյանների իշխանանիստ կենտրոններից մեկը Արագածոտնում: Ի տարբերություն համաժամանակյա մյուս դղյակ-ամրոցների՝ այն միասնական նախագծով ստեղծված համալիր էր՝ ընդհանուր շրջապարսպով ամփոփված և դասական դղյակներին հատուկ բոլոր համակառույցներով:

Եզրակացություն

Հաշվի առնելով այս բացառիկ հուշարձանի պատմա-հնագիտական և ճարտարապետական նշանակությունը՝ անհրաժեշտ է.

- ավարտին հասցնել պեղման և մաքրման աշխատանքները շրջապարսպի և միջնաբերդի միջև արևելյան և արևմտյան հատվածներում,
- շրջապարսպի արտաքին կողմում, մասնավորապես՝ հարավարևելյան հատվածում,
- 19-20-րդ դդ. շենքերի փլատակներից մաքրել շրջապարսպի հարավային դարպասի դիմաց ընկած տարածքը,
- սիստեմատիկ պեղումներ իրականացնել միջնաբերդի բնակելի աշտարակների ներսում, որոնց մեջ պահպանված մշակութային շերտերը կարող են նոր լույս սփռել դղյակի հիմնադրման, դղյակի վերնախավի կյանքի տարբեր կողմերը բացահայտելուն, ինչպես նաև հնարավորություն կտան վերակազմելու բնակելի հարկաբաժինների ինտերյերը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

Ալեքսանյան Տ., Միրիջանյան Դ. 2012. Դաշտադեմի 2011 թ. պեղումները (նախնական հաղորդում), Էջմիածին, N 8, 102-106:


Ալիշան Դ. 1890. Այրարատ, Բնաշխարհ Հայաստանյաց, Վենետիկ-Ս. Ղազար:

Ասատրյան Ե. 1991. Դաշտադեմի ամրոցի 1989-1990թթ. պեղումների արդյունքները, ԴՀԱԱԳՆ 1989-1990, Երևան, 113-114:

- Բաբաջանյան Ա., Աղայան Ս. 2022. Դաշտադեմի միջնադարյան դղյակի ճարտարապետությունը, ԼՀԳ, N2, 268-286:
- Եղիազարյան Հ. 1947, Թալինի շրջանի հնագիտական արշավախմբի ղեկավար Հ. Եղիազարյանի զեկուցագիրը 1946 թ. կատարած աշխատանքների արդյունքների մասին (ձեռագիր և մեքենագիր օրինակները) Երևան, Հայաստանի ազգային արխիվ, ֆ. 1063, ց. 1, գ. 1389, 51 թերթ:
- Եղիազարյան Հ.Ս. 1971, Ներքին Թալին գյուղի Ս. Քրիստափորի վանքը, նրա վիմագիր արձանագրությունները և գյուղի մյուս հուշարձանները, Էջմիածին, N 8, էջ 52-64:
- Թորամանյան Թ. 1948. Նյութեր հայկական ճարտարապետության պատմության, հատոր 2, (կազմ. և խմբ. Կ. Գ. Ղաֆադարյան), Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ.:
- Խաչատրյան Հ. 2017, Ախուրյանի ավազանի միջնադարյան ամրաշինական կառույցները, Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն. Գիտական աշխատություններ, N 20, էջ 206-215:
- Հարությունյան Ս.Վ. 1978, Անբերդ, ՀՍՍՌ ԳԱ հրատ.:
- Յովհաննեսեան հ. Միքայել վ. Մխիթարեան 1970, Հայաստանի բերդերը, Վենետիկ, Ս. Ղազար:
- Շահխաթունեանց Յ. եպս. 2014, Ստորագրութիւն Կաթողիկէ Էջմիածնի եւ հինգ զաւառացն Արարատայ, Էջմիածին, «Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին»:
- Սարգսյան Գ. Ս. 2007. Դաշտադեմի ամրոցը: Հայ ամրոցաշինական եզակի կառույցի զարգացման փուլերը, «Հայ արվեստ» մշակութային հանդես N 3-4, Երևան, 35-37:
- Хачатрян А., Корпус арабских надписей Армении, VIII – XVI вв., Ереван, Изд. АН АССР, 1987.
- Augé I., Baladian A.T., Dangles Ph. 2020, À l'est d'Ani: Forteresses et églises inédites du nord de l'Arménie [Series: Mémoires de l'Académie. Des inscriptions et belles-lettres. Tome 57], Paris, Publisher: Académie des inscriptions et belles-lettres, 361 p.
- Babajanyan A., Aghaian S., Davtyan D., Melkonyan H. 2021. A View on Life in the Medieval Fortress at Dashtadem: Results of the 2015 and 2018 Excavation Campaigns, in Avetisyan P., Bobokhyan A. (eds), "Archaeology of Armenia in Regional Context" Proceedings of the International Conference Dedicated to the 60th Anniversary of the Institute of Archaeology and Ethnography, Yerevan, "Publishing House of the Institute of Archaeology and Ethnography", pp. 373-395.
- Dangles Ph. 2014, Mahasberd retrouvée, in Mardirossian A., Ouzounian A., Zuckerman C. (eds), Mélanges Jean-Pierre Mahé, Travaux et memoires 18, Paris: L'Amis du Centre d'histoire et Civilisation de Byzance, pp. 205-220.
- Dangles Ph. 2015, Aruč. Le site fortifié, Հակոբյան Զ., Միքայելյան Լ. (խմբ.), «Անտառ ծննդոց», Հոդվածների ժողովածու նվիրված Ֆելիքս Տեր-Մարտիրոսովի հիշատակին, Երևան, ԵՊՀ հրատարակչություն, էջ 222-231.
- Dangles Ph., Prouteau N. 2005-2007, Observations sur quelques forteresses de la région d'Ani, Revue des études arméniennes 30, pp. 273-299.
- Melkonyan, H., Babajanyan, A., Harutyunyan, A., Davtyan, D., Aghaian S. 2017. The Excavations of Dashtadem Fortress: Preliminary Report of 2015 Fieldwork Activity, Aramazd, AJNES, Yerevan-Oxford, vol. 11, issues 1-2, 263-292.



1. Դաշտադեմի ամրոցի տեղադրությունը Անիի ամրաշինական համակարգում




2. Դաշտադեմի ամրոցի գլխավոր հատակագիծը



3. Ամբոցի ընդհանուր տեսքը հարավ-արևելքից




4. Միջնադարյան դղյակը արևելքից




5. Դղյակի հատակագիծը՝ 2015, 2018, 2021 թթ. պեղված տարածքների նշմամբ



6. 2022 թ. պեղված և մաքրված հատվածները



7. Դղյակի ընդհանուր շերտագրական պատկերը



8. 2022 թ. պեղված հատվածների հատակագիծը




9. «Հանդիսավոր սրահը» հյուսիսից 2022 թ. պեղումների ավարտին



10. Մեղանատունը հյուսիս-արևելքից 2022 թ. պեղումների ավարտին



11. Հարավային դարպասի նախասրահը 2022 թ. պեղումների ավարտին



12. «Մեղանատան» արևմտյան սենյակի հատակագիծը. վերին և ստորին շերտերը



13. «Մեղանատան» արևմտյան սենյակի վերին շերտի I-6.1.4 պատը, 3.2 կառուցվածքը և 3.1.2 ծածկված թոնիրը



14. «Մեղանատան» արևմտյան սենյակի I-6.4.4 պատը, 3.2 կառուցվածքը և 3.1.2 թոնիրը



15. «Մեղանատան» արևմտյան սենյակի վերին շերտի I-6.1.2 պատը



16. «Մեղանատան» արևմտյան սենյակի I-6.4.2 պատը



17. I-6.3.1.1 և I-6.3.1.2 թոնիրները. I-6.3.1.2-ը կիսով չափ I-6.1.4 պատի տակ



18. I-6.3.1.2 թոնիրը



19. I-6.3.2.1 պայտաձև փորվածքով քարը



20. Բազմասենյականոց համալիրի պատերը



21. Բազմասենյականոց համալիրի սալահատակը՝ փայտե սյուների խարխիսներով



22. Բազմասենյականոց համալիրի սալահատակի ընդհանուր տեսքը



23. Բազմասենյականոց համալիրի սալահատակի շինարարական տեխնիկան ցույց տվող կտրվածքը



24. Սեղանատան հարավային անկյունում բացված թոնիրները և արձանագիր քարը



25. K-5 քառակուսու թոնիրը



26. I-7 H-6 հետախուզահոր. Վերին շերտ



27. I-7 H-6 հետախուզահոր. Ստորին շերտ



28. Գլխավոր դարպասի նախասրահի հարակից տարածքը 2021 թ. պեղումներից հետո



29. Նախասրահի արևելյան պատին կցակառուցված պատերը



30. L-2 քառակուսում պեղված թունիրը



31. «Հանդիսավոր սրահը» 2015 թ. պեղումներից հետո



32. «Հանդիսավոր սրահի» հյուսիսարևելյան հատվածը՝ 20-րդ դ. սալահատակը հեռացնելուց հետո, միջանկյալ փուլ



33. «Հանդիսավոր սրահի» հյուսիսարևելյան հատվածը՝ 2022 թ. պեղումների ավարտին



34. 20-րդ դ. սալահատակի տակ հայտնաբերված թոնիրները



35. Թոնիր 1



36. Թոնիր 2



37. Թոնիր 3



38. Թոնիր 4



39. Կարաս 1 (օջախի վերածված)




40. ա) Սեղանատան ուշ շրջանի սալահատակի մեջ դրված քառանիստ կոթողի բեկոր, բ) քիվի բեկոր



41. Նորահայտ վիմագիր




42. Սեղանատան Թոնիր N6-ում հայտնաբերված թասը և ջնարակապատ ափսեն



43. «Հանդիսավոր սրահի» Թոնիր N1-ում հայտնաբերված ափսե

44. Շողյուն հախճապակու բեկոր



45. Հայտնաբերված դրամներ


Ծինարարական գլխավոր հատակագիծ

Պայմանական նշաններ

Նշաններ	Անվանումը
	Ժամանակավոր էլեկտրահաղորդալար
	Ժամանակավոր ջրի խողովակ
	Ժամանակավոր ցանկապատ
	Ժամանակավոր մետաղական դարպաս 4.5մ
	Հակահրդեհային հիդրանտ
	Ամբարձիչի շարժման ուղին
	KC-55744 ավտոամբարձիչ
	Մեքենայի անիվների լվացման տարածք
	Ծինարարական թափոնների տարրա
	Գոյություն ունեցող բարե պատնեշ
	Ժամանակավոր ավտոճանապարհ
	Հակահրդեհային վահանակ
	Ծին. նյութերի պահեստավորման հարթակ


Ժամանակավոր շինությունների անվանացանկ

	Անվանումը	Ծանոթություն	L մ	B մ	H մ	S մ²
1	Պահակակետ	Ժամանակավոր շարժական շինություն	6.0	2.7	2.5	6.2
2	Գրասենյակ, բլուզետ	Ժամանակավոր շարժական շինություն	9.0	2.7	2.5	24.3
3	Հանդերձարան	Ժամանակավոր շարժական շինություն	6.0	2.7	2.5	6.2
4	Ցնցուղարան	Ժամանակավոր շարժական շինություն	6.0	2.7	2.5	6.2
5	Սննդի ընդունման կետ	Ժամանակավոր շարժական շինություն	6.0	2.7	2.5	6.2
6	Զուգարան	Բիոզուգարան /2հատ/	1.5	1.5	2.2	2.5
7	Փակ պահեստ	Ժամանակավոր շարժական շինություն	9.0	2.7	2.5	24.3



Կոորդինատներ

	X	Y
1	4465915.877	402859.673
2	4465944.743	402850.0774
3	4465973.271	402858.141
4	4465979.399	402851.5502
5	4466018.578	402887.9825
6	4466012.449	402894.5732
7	4465994.237	402914.1581
8	4466024.788	402906.0477
9	4466049.922	402930.7553
10	4466047.768	402945.5999
11	4466033.806	402943.5744
12	4466013.708	402990.6626
13	4465938.092	402956.2465
14	4466069.686	402948.7794



ԴԱՇՏԱԴԵՄ ԱՄՐՈՑԻ ՄԱՍՆԱԿԻ ՀԻՄՆԱՆՈՐՈԳՈՒՄ,
ԹԱՆԳԱՐԱՆԻ ՀԻՄՆՈՒՄ ԵՎ
ՀՈՒՇԱՐՁԱՆԻ ՀԱՐԱԿԻՑ ՏԱՐԱԾՔԻ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ

ՆԱԽԱԳԾԻ ՀԱՍՑԵ ` ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆ ՀԱՄԱՅՆՔ, ԴԱՇՏԱԴԵՄ 14-րդ ՓՈՂՈՑ 10


ՓՈԻԼ` ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՆԱԽԱԳԻԾ

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՆԱԽԱԳԻԾ
/Շ Կ Ն/

ԵՐԵՎԱՆ 2023

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳԾԱԳՐԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԼՐԱԿԱԶՄԻ
ԱՆՎԱՆԱՑԱՆԿ

N	ԳԾԱԳՐԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ
1	Անվանացանկ	ՇԿՆ - 01
2	Բացատրագիր	ՇԿՆ - 02
3	Իրադրային հատակագիծ Մ1:2000	ՇԿՆ - 03
4	Գլխավոր հատակագիծ Մ 1:500	ՇԿՆ - 04
5	Հողային աշխատանքներ - 1	ՇԿՆ - 05
6	Հողային աշխատանքներ - 2	ՇԿՆ - 06
7	Շինարարական գլխավոր հատակագիծ	ՇԿՆ - 07
8	Ավտոմոբիլային ամբարձիչի մոնտաժային սխեմա	ՇԿՆ - 08
9	Շինարարության օրացուցային գրաֆիկ	ՇԿՆ - 09
10	Տեխնոլոգիական քարտ	ՇԿՆ - 10

ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒՅԱՆ ԵՎ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ			ԴԱՇՏԱԴԵՄ ԱՄՐՈՑԻ ՄԱՍՆԱԿԻ ՀԻՄՆԱՆՈՐՈՊՈՒՄ, ԹԱՆԳԱՐԱՆԻ ՀԻՄՆՈՒՄ ԵՎ ՀՈՒՇԱՐՁԱՆԻ ՀԱՐԱԿԻՑ ՏԱՐԱԾՔԻ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ			ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՆԱԽԱԳԻԾ		
						ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՆԱԽԱԳԻԾ/ ՇԿՆ		
Գծեց	Կ.Ենոքյան		ԹԱՆԳԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԻԾ			ԹԱՆԳԱՐԱՆԻ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՆԱԽԱԳԻԾ/ ՇԿՆ		
Ստուգեց	Ա. Բարսեղյան					Գիրք	Թերթեր	Էջ
Հաստատեց	Ա. Սամուելյան		ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳԾԱԳՐԵՐԻ ԱՆՎԱՆԱՑԱՆԿ			5.2	10	ՇԿՆ-01

Բ Ա Ց Ա Տ Ր Ա Գ Ի Ր

Շինարարության կազմակերպում՝ ընդհանուր դրույթներ
«Շինարարության կազմակերպում» բաժինը մշակված է նախագծման տեխնիկական առաջադրանքի հիման վրա համաձայն ՀՀ ՇՆ 3.01.01-08 և ընդգրկում է՝

- բացատրագիր
- աշխատանքների կատարման համար ներկայացվող տեխնիկական տվյալներ
- կատարվող աշխատանքների անվտանգության պահպանման հրահանգներ
- կատարվող աշխատանքների որակաի ստուգման հրահանգներ
- աշխատանքների կատարման ժամանակացույց
- շինարարական հրապարակի գլխավոր հատակագծեր

Բաժնի մշակման համար օգտագործվել են հետևյալ նորմատիվային փաստաթղթերը.

- ՀՀ ՇՆ 3.01.01-09 «Շինարարության կազմակերպում»
- ՇՆԼԿ 1.04.03-85* «Շինարարության տնողության և նախակատարման նորմեր, շենքերի և կառույցների շինարարություն
- ՇՆԼԿ III-4-80* «Անվտանգության տեխնիկական շինարարությունում»
- ՀՀ Քաղաքացիական օրենսգիրք

ԹԱՆԳԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԻԾ

ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏՎԱԳԻԾ


Ծրագրով նախատեսված *Դաշտեղեմ թանգարանը տեղակայված է ամրոցի արտաքին պարիսպներից ներս, հյուսիս-արևելյան հատվածում: Կառույցը բաղկացած է 3 տարրերից՝ թանգարանի կառույց, բացօթյա ամֆիթատրոն, թեքահարթակներ: Ունի ձգված ուղղանկյան տեսք՝ ուղղվածությունը հյուսի - արևելքից հարավ- արևմուտք: Ամրոցի գլխավոր մուտքին մոտիկ տեղակայված է բացօթյա ամֆիթատրոնը, որն ուղղորդում է դեպի ստորգետնյա թանգարանի շենք:Ամֆիթատրոնին և թանգարանին կից գտնվում է թեքարաթակը, որն ունի 2 ուղղություն՝ դեպի ստորգետնյա թանգարան և դեպի հնավայրի տարածք:Թանգարանի տանիքը միաձուլված է գոյություն ունեցող ռելիեֆին՝ թաքցնելով կառույցը:*
Հնավայրի տարածքում նախատեսվում է իրականացնել թեթև կոնստրուկտիվ տարրերով տաղավարներ՝ միջնադարյան դարբնի, հյուսնի, կաշեգործի արհեստանոցներ, որոնք տեղակայված են հնավայրի հարավ-արևմտյան հատվածում:

ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՀՐԱՊԱՐԱԿԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ /հրահանգներ/


- . Մինչ շինարարական աշխատանքների սկսելը անհրաժեշտ է կազմել աշխատանքների կատարման նախագիծ:
- . Շինարարական աշխատանքները կատարել խստիվ կերպով, պահպանելով անվտանգության տեխնիկայի կանոններն ըստ ՇՆԼԿ III, 4-80:
- . Ճանապարհատրանսպորտային մշանները համաձայնեցնել ՊԱՏ-ի հետ:
- . Շինարարական աշխատանքները սկսել համապատասխան շինարարության թույլտվություն ստանալուց հետո:
- . Շինարարական աշխատանքները կատարել ըստ մշված ժամանակացույցի:
- . Հակահրդեհային անվտանգության պաշտպանության անվտանգությունը կրում է շինարարության ղեկավարը կամ փոխարինող անձը:
- . Շինարարական հրապարակը պետք է համալրել կրակմարիչներով:
- . Շինարարական տրանսպորտը օբյեկտ պետք է մտնի և դուրս գա մաքուր վիճակով՝ չաղտոտելով ճանապարհները շինարարական աղբով:

ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՀՐԱՊԱՐԱԿԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՏԵԽՆԻԿԱՆ ԿՈՆՍՏՐՈՒԿՑԻԱՆԵՐԻ ԵՎ ՇԻՆՎԱԾՔՆԵՐԻ ԻՐԱՎԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ

1. Շինարարության ընթացքում շինմոնտաժային աշխատանքներ կատարելիս նախապես անհրաժեշտ են կոնստրուկցիաներին առնչվող հանգույցները ենթարկել համապատասխան մշակման մոնտաժման և կառուցման աշխատանքների կատարման համար:
2. Շինարարության կատարման ժամանակ անհրաժեշտ է կազմակերպել անվտանգության միջոցառումներ՝
 - աշխատանքների տեղադրությունն ըստ բարձրության 1.3 մետր և ավելի տարբերությունների դեպքում,
 - բարձր տեղադրված կոնստրուկցիաների, նյութերի, գործիքների անկումից,
 - մեքենաների շարժական մասերի և նրանցով տեղաշարժվող կոնստրուկցիաների և նյութերի անկումից,
 - շենքի և շինության չամրացված կոնստրուկցիաների փլուզումից,մեքենաների մասերի անկումից,
 - կոնստրուկցիաների և շինվածքների տեղադրման ժամանակ ապահովել միջոցառումներ աշխատողների վայր չընկնելու և նրանց կողմից իրերի ընկնելու վտանգի դեմ համապատասխան պաշտպանիչ միջոցառումներ իրականացնելու,
- ճշգրտել աշխատանքային վտանգավոր գոտին՝ մշահարել դրոշակներով, ցուցանակներով և այլ միջոցառումներով,
- ապահովել աշխատողների անվտանգությունը բարձրության վրա,
- մոնտաժային աշխատանքների կատարման ընթացքում ապահովել կոնստրուկցիաների և շինվածքների կայունությունը:


ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ			ԴԱՇՏԱԴԵՄ ԱՄՐՈՑԻ ԱՄՆԱԿԻ ՀԻՄՆԱՌՐՈՂՈՒՄ, ԹԱՆԳԱՐԱՆԻ ՀԻՄՆՈՒՄ ԵՎ ՀՈՒՇԱՐՁԱՆԻ ՀԱՐԱԿԻՑ ՏԱՐԱԾՔԻ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ			ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՆԱԽԱԳԻԾ		
						ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄՆԻ ՆԱԽԱԳԻԾ/ ԸՎՆ		
Գծեց	Կ.Ենոքյան		ԹԱՆԳԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԻԾ			ԹԱՆԳԱՐԱՆԻ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄՆԻ ՆԱԽԱԳԻԾ/ ԸՎՆ		
Ստուգեց	Ա.Բարսեղյան					Գիրք	Թերթեր	Էջ
Հաստատեց	Ա.Սամուելյան		ԲԱՑԱՏՐԱԳԻՐ			5.2	10	ԸՎՆ-02

ԱՐԱԳԱԾՈՏՆ ԳԱԿԱՌ, ՀԱՄԱՅՆՔ ԴԱՇՏԱԴԵՄ 14-ՐԴ ՓՈՂՈՑ 10 ԻՐԱՌԱՅԻՆ ՀԱՏԱԿԱԳԻԾ ՄՁ000





ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՅՄԱՏԱՆԻ ԱՉԳԱՅԻՆ ՀԱՄԱՆԱՄԱՐՆ			ԴԱՇՏԱԴԵՄ ԱՄՐՈՑԻ ՄԱՍՆԱԿԻ ԴԻՄԱՆԱՐՈՂՈՒՄ, ԹԱՆԱԳԱՐԱՆԻ ԴԻՄՆՈՒՄ ԵՎ ՀՈՒՇԱՐՁԱՆԻ ՀԱՐԱԿԻՑ ՏԱՐԱԾԵՐ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ			ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՆԱԽԱԳԻԾ		
Գծեց	Կ.Ենոքյան		ԹԱՆԱԳԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԻԾ			ԹԱՆԱԳԱՐԱՆԻ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԱՆ ՆԱԽԱԳԻԾԻ ԸՆԴ		
Ստուգեց	Ա.Բալսոնյան					Գիրք	Թերթեր	Էջ
Հաստատեց	Ա. Սամուելյան		ԻՐԱՌԱՅԻՆ ՀԱՏԱԿԱԳԻԾ Մ 1:2000			5.2	10	ԸԿԼ-03

ՀՈՂԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ - 1



Հանույթ փոստրակից	2529.0	2637.0
Հանույթ փոստրակի չորս կողերից	108.0	

ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ



Հանույթ փոստրակից	22.0	29.9	50.0		164.4	22.0	304.0
Հանույթ փոստրակի չորս կողերից					17.0		

ԲԱՑԱՏՐԱԳԻՐ

Հողային աշխատանքներ

Թանգարանի շենք

0.00 հարաբերական նիշ՝ 1437.50:

Հողային աշխատանքներն իրականացվում են Ա-Բ/1-8 առանցքներով մինչև 0.00 հարաբերական նիշը՝ փոստրակի մինչև 1437.50 նիշը:

Ծանոթություն

Հաշվարկված են նաև հենապատի և բացօթյա ամֆիթատրոնից դեպի թանգարան իջնող աստիճանների տարածքների հողային աշխատանքների ծավալները:

Հնարավոր են նիշերի որոշ փոփոխություններ:


ՀՈՂԱՅԻՆ ԶԱՆԳՎԱԾԻ ԾԱՎԱԼՆ
ԸՍՏ ՔԱՐՏԵԶԱԳՐՄԱՆ

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՀՈՂԻ ԾԱՎԱԼԸ մ³	
	Հանույթ(-)	Լիցք(+)
Հանույթ	2941.0	
Հետլիցք		325.0
Տեղափոխվող բնահող	2616.0	

ԾԱՐՏԱՐԱՊԵՏՈՒՅԱՆ ԵՎ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ			ԴԱՇՏԱԴԵՄ ԱՄՐՈՅԻ ՄԱՍՆԱԿԻ ՀԻՄՆԱՆՈՐՈՂՈՒՄ, ԹԱՆԳԱՐԱՆԻ ՀԻՄՆՈՒՄ ԵՎ ՀՈՒՇԱՐՁԱՆԻ ՀԱՐԱԿԻՑ ՏԱՐԱԾԵԻ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ			ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՆԱԽԱԳԻԾ		
						ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՆԱԽԱԳԻԾ/ ԵՎ		
Գծեց	Կ.Ենոքյան		ԹԱՆԳԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԻԾ			Գիրք	Թերթեր	Էջ
Ստուգեց	Ա.Բարսեղյան							
Հաստատեց	Ա.Սամուելյան							
			ՀՈՂԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ - 1			5.2	10	ԵՎԼ-05

ՀՈՂԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ - 2

ԹԵՔԱՀԱՐԹԱԿԻ ՀՈՂԱՅԻՆ ԶԱՆԳՎԱԾԻ ՀԱՇՎԱՐԿ
ԵՐԿԱՅՆԱԿԱՆ ԿՏՐՎԱԾՔ ԵՎ ՀԱՏԱԿԱԳԻԾ



ՀՈՂԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՀՈՂԻ ԾԱՎԱԼԸ մ³	
	Հանույթ(-)	Լիցք(+)
Հանույթ	2941.0	465.0=3406.0
Հետլիցք		325.0
Տեղափոխվող բնափող	3081.0	

ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒՅԱՆ ԵՎ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ			ԴԱՇՏԱՐԴԵՄ ԱՄՐՈՑԻ ՄԱՍՆԱԿԻ ՀԻՄՆԱՆՈՐԳՈՒՄ, ԹԱՆԳԱՐԱՆԻ ՀԻՄՆՈՒՄ ԵՎ ՀՈՒՇԱՐՁԱՆԻ ՀԱՐԱԿԻՑ ՏԱՐԱԾՔԻ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ			ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՆԱԽԱԳԻԾ		
						ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՆԱԽԱԳԻԾ/ ԸՎՆ		
Գծեց	Կ.Ենոքյան		ԹԱՆԳԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԻԾ			ԹԱՆԳԱՐԱՆԻ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՆԱԽԱԳԻԾ/ ԸՎՆ		
Ստուգեց	Ա.Բաքսեղյան					Գիրք	Թերթեր	Էջ
Հաստատեց	Ա.Սամուելյան		ՀՈՂԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ - 2			5.2	10	ԸՎՆ-06

ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԻԾ

ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ


ՆՇԱՆՆԵՐԸ	ՄՆՎԱՆՈՒՄԸ
	Ժամանակավոր ելեկտրահաղորդակար շինարարական հրապարակի լուսավորման համար
	Ժամանակավոր ջրի խողովակ ծորակով
	Ժամանակավոր ցանկապատ
	Ժամանակավոր մետաղական դարպաս 4.5 մ
	Հակահրդեհային հիդրանտ
	Ամբարձիչի շարժման ուղին
	KC -55744 ավտոմոբիլային ամբարձիչ
	Մեքենայի անիվները լվանալու տարածք
	Շինարարական թափոնների տարրա
	Գոյություն ունեցող քարե պատնեշ
	Ժամանակավոր ավտոճանապարհ
	Հակահրդեհային վահանակ
	Շին նյութերի պահեստավորման հարթակ

ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆՎԱՆԱՅԱՆԿ

	ԱՆՎԱՆՈՒՄԸ	ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ	L U	B U	H U	S U
1	Պահակակետ	Ժամանակավոր շարժական շինություն	6.0	2.7	2.5	16.2
2	Գրասենյակ, բուժկետ	Ժամանակավոր շարժական շինություն	9.0	2.7	2.5	24.3
3	Հանդերձարան	Ժամանակավոր շարժական շինություն	6.0	2.7	2.5	16.2
4	Ցնցուղարան	Ժամանակավոր շարժական շինություն	6.0	2.7	2.5	16.2
5	Սննդի ընդունման սենյակ	Ժամանակավոր շարժական շինություն	6.0	2.7	2.5	16.2
6	Չուզարան	Բիոզուզարան /2 հատ/	1.5	1.5	2.2	2.25
7	Փակ պահեստ	Ժամանակավոր շարժական շինություն	9.0	2.7	2.5	24.3

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ
Ժամանակավոր կենցաղային, տնտեսական և վարչական շինությունների մակերեսների հաշվարկը՝տես բացատրական մաս:

Փոստրակի Բ առանցքի և հենապատի ուղղությամբ պաշտպանիչ մետաղացանցի դիրքի սխեմա





ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԱԿ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՑԱԼ


- Կառուցապատման օբյեկտի գունավոր էսքիզային պատկեր
- Ճարտարապետահատակագծային առաջադրանքի տրամադրման համարը և ամսաթիվը
- Համաձայնեցված ճարտարապետաշինարարական նախագծի համարը և ամսաթիվը
- Շինարարության թույլտվության համարը և ամսաթիվը
- Շինարարական աշխատանքների սկիզբը և ավարտը
- Կառուցապատման օբյեկտի մակերեսը, հարկայնությունը և նպատակային նշանակությունը
- Կառուցապատողի /կամ պատվիրատուի/ տվյալները
- Կառուցապատման օբյեկտի նախագծի հեղինակային տվյալները
- Կառուցապատման օբյեկտի շինարարական աշխատանքներ իրականացնող կազմակերպության տվյալները
- Կառուցապատման օբյեկտի նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնող կազմակերպության տվյալները

ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ			ՊԱԾՏԱՐԴԵՍ ԱՄՐՈՑԻ ՄԱՍՆԱԿԻ ՀԻՄՆԱՈՐՈԳՈՒՄ, ԹԱԳԱՐԱՆԻ ՀԻՄՆՈՒՄ ԵՎ ՀՈՒՇԱՐՁԱՆԻ ՀԱՐԱԿԻՑ ՏԱՐԱԾԵՐ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ		ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՆԱԽԱԳԻԾ		
					ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԱԾԱԿԵՐՊՄԱՆ ՆԱԽԱԳԻԾ/ ԵՎ		
Գծեց	Կ.Ենոքյան		ԹԱԳԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԻԾ		Գիրք	Թերթեր	Էջ
Ստուգեց	Ա.Բաբսեյան						
Հաստատեց	Ա.Սամուելյան		ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԻԾ		5.2	10	ԵՎՆ-07

ԱՎՏՈՄՈԲԻԼԱՅԻՆ ԱՄԲԱՐՁԻՉԻ ՄՈՆՏԱԺԱՅԻՆ ՄԻԵՄԱ



КС-55744-25տ Ավտոմոբիլային ամբարձիչի բեռնամբարձության գրաֆիկ



Տեխնիկական Բնութագիր

- Բեռնամբարձ մոմենտ - 80մմ
- Բեռնամբարձությունը - 25տ
- Սլաքի երկարությունը
 - ամենամեծ - 21մ
 - ամենափոքր - 8մ
- Ավտոմոբիլային հենասարք - КамАЗ-53605
- Շարժիչի հզորությունը - 220կՎտ(300 ձիաուժ)
- Ավտոմոբիլի արագությունը - 60կմ/ժ
- Ամբարձիչի քաշը - 17տ

ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ			ԴԱՇՏԱԴԵՄ ԱՄՐՈՑԻ ՄԱՍՆԱԿԻ ՀԻՄՆԱՆՈՐՈՂՈՒՄ, ԹԱՆԳԱՐԱՆԻ ՀԻՄՆՈՒՄ ԵՎ ՀՈՒԵԱՐՁԱՆԻ ՀԱՐԱԿԻՑ ՏԱՐԱԾԵԻ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ			ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՆԱԽԱԳԻԾ		
